# ՄԱՍԻՍ
ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

ԻԷ. ՏԱՐԻ ԹԻՒ 11 (1311) ՇԱԲԱԹ, ԱՊՐԻԼ 7, 2007
VOLUME 27, NO. 11 (1311) SATURDAY, APRIL 7, 2007

Պաշտօնաթերթ՝
Ս. Դ. Հնչակեան Կուսակցութեան
Արեւմտեան Ամերիկայի

MASSIS Weekly
1060 N. Allen Ave. Suite 101
Pasadena, California 91104


## ՄԵՐ ԱՆԿԻՒՆԷՆ

### ՅԱՐՈՒԹԵԱՆ ՅԱՂԹԱՆԱԿԸ ՄԱՀՈՒԱՆ ԽԱՅԹՈՑԻՆ ՎՐԱՅ

**ՏՕՔԹ. Ա. ԳԱՋԱՆՃԵԱՆ**

Ս. Յարութեան հրաշափառ երեւոյթը անկիւնադարձային նշանակութիւն ունի քրիստոնեայ ժողովուրդներու կեանքին մէջ: Քրիստոսի իրագործած բոլոր հրաշալիքներուն մէջ, գերագոյնը՝ Իր Յարութեան հրաշագործութիւնը կարելի է համարել, անկասկած:

Համաձայն Սրբ. Գրոց մարգարէութիւններուն՝ Իր խաչեալ մահով գերեզման իջած Քրիստոս, երեք օր ետք յարութիւն առած էր: Քիչ ժամանակ ետք, Ան իր տուած այցելութիւններով, Իր աշակերտներուն քարոզչական առաքելութիւն պատգամած էր: Յարուցեալ Աստուածորդին, անոնց ու մարդկութեան առջեւ բացած էր կեանքի նոր ուղի՝ որ ուրիշ բան չէր, եթէ ոչ, մահուան «խայթոցին»վրայ կոթողուած փառապանծ յաղթանակ:

Ս. Յարութեան հրաշագործութիւնը, նաեւ, իր մէջ կը խտացնէր քրիստոնեայ հաւատացեալի ողջ էութիւնը լիցքաւորող արարչական երեք այլ հրաշագործութիւններ. ինչպէս,

Գերեզմանէն արթնցած Ղազարոսով՝ կեանք պարգեւեց մարդկութեան: Կորսնցուցած տեսողութեան վերատիրացած կոյրով՝ լոյս սփռեց աշխարհին:

Աստուածային ներում ստացած մաքսաւոր մեղաւոր Զաքէոսով՝ ներում շնորհեց յանձապարտ աշխարհին:

Մահուան դատապարտուած, կոյր ու մեղաւոր մահկանացուներու համար կա՞ր արդեօք աւելի կենսական բան՝ քան կեա՛նքը, լո՛յսը եւ յանցանքներու թողութիւնը:

Արդարեւ, Քրիստոսի Յարութեան հրաշագործութիւնը միանգամընդմիշտ արդարացուցած էր մարգարէութիւններու սրբատառ արձանագրութիւնները: Այլապէս, ի՞նչ պիտի պատահէր եթէ Յիսուս յարութիւն չառնէր:

«Փուլ պիտի գար ամէն ինչ, ամէն բառ, ամէն արձանագրութիւն, ամէն մարգարէութիւն», ինչպէս պիտի վկայէր Դոկտ. Տ. Զաւէն Աւագ Քհնյ. Արզումանեանը Ծաղկազարդի իր Ապրիլ մէկի աւուր պատշաճի քարոզին մէջ, Ուիտիըրի Հայաստանեայց Եկեղեցին:

Հայ ժողովուրդը, որ առաջինը հանդիսացած է ընդունելու քրիստոնէութիւնը որպէս պետական կրօնք, եկեղեցական ծիսակատարումներով, ժողովրդական տօնախմբութիւններով եւ ընտանեկան աւանդոյթներով, միշտ, ըստ արժանւոյն պանծացուցած է Քրիստոսի Ս. Յարութեան Հրաշագործութիւնը:

*Շար.ը էջ 18*

ԱՐԵՒՄՈՒՏՔԸ ԴԱՐՁԵԱԼ ՄՏԱՀՈԳ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԸՆՏՐՈՒԹԻՒՆՆԵՐՈՎ

## «ՂԵԿԱՎԱՐՆԵՐԸ ԿԸ ՎԱԽՆԱՆ ԻՐԵՆՑ ՊԱՏՕՆՆԵՐԷՆ»

ԿԸ ՅԱՅՏԱՐԱՐԷ ԴԵՍՊԱՆ ՃՈՒԼԻ ՖԻՆԼԻ

*Եւրոպայի Ապահովութեան եւ Համագործակցութեան Կազմակերպութեան (ԵԱՀԿ) մօտ Միացեալ Նահանգներու դեսպան Ճուլի Ֆինլի «Ազատութիւն» ռատիոկայանի հետ իր ունեցած բացառիկ հարցազրոյցի ընթացքին «տարօրինակ» նկատեց, որ Հայաստանի ղեկավարները ընտրութիւններու չեմին կը «վախնան մամուլը դարձնել մատչելի»:*

*Խօսելով Մայիսի 12-ի խորհրդարանական ընտրութիւններու քարոզարշաւի ընթացքին քաղաքական գովազդի բարձր սակագիներու մասին՝ Ֆինլի խորհուրդ տուաւ զանոնք վերահսկողներուն իջեցնել սակագիները. - «Ինծի համար տարօրինակ է, որ այս երկիրներու ղեկավարները այսքան շատ կը վախնան մամուլը դարձնել մատչելի, աւելի շատ թափանցիկութիւն ապահովել»:*

*«Այս, ինծի համար միայն մէկ բան կը նշանակէ՝ որ ղեկավարները կը վախնան կորսնցնել իրենց պաշտօնները: Իսկ գուցէ այս իրենց համար ինչ-որ մէկ պանքային հաշիւին վրայ փող կուտակելու հնարաւորութիւն է», - աւելցուց ան՝ հարց տալով, թէ*



**ԵԱՀԿ-ի մօտ Ամերիկայի դեսպան Ճուլի Ֆինլի**

*հակառակ պարագային անհասկանալի է, թէ ինչու ազատ չի դարձուիր մամուլը:*

*ԵԱՀԿ-ի մօտ Ամերիկայի դեսպանը մտահոգութիւն յայտնեց Հայաստանի մէջ մամուլի ազատութեան վիճակին շուրջ: Հայաստանի միակ անկախ «Ա1+» հեռատեսիլի կայանի փակման 5-րդ տարուան առթիւ, ան անգամ մը եւս դատապարտեց այդ արարքը եւ կոչ ըրաւ վերաբանալ զայն:*

*«Ձեմ գիտէր, թէ բացի դատապարտելէ ինչ կրնայ ընել Միացեալ Նահանգներու առաքելութիւնը այս առթիւ», - յայտարարեց Ճուլի Ֆինլի:*

*Ամերիկացի դիւանագէտի կարծիքով, հարցը այն է, որ այս երկիրներու մեծ մասի իշխանութիւնները չեն ուզեր հասկնալ, որ արդար ընտրութիւնները միայն ընտրութեան օրը չեն կատարուիր. - «Մինչեւ ընտրութիւններու օրը շաբաթներ, շատ շաբաթներ կան: Եւ այդ ժամանակաշրջանի ընթացքին տեղի ունեցող ամէն բան նոյնքան կարեւոր է, որքան ընտրութիւններու օրուայ ընթացքը»:*

*«Այդ կը վերաբերի հաւաք-*

*Շար.ը էջ 4*

## ՀՆՉԱԿԵԱՆ ԵՐԻՏԱՍԱՐԴՆԵՐԸ ԿԸ ՊԱՀԱՆՋԵՆ՝ ՆԵՐՈՂՈՒԹԻՒՆ, ԿԱՄ ՊԱՇՏՕՆԱԶՐԿՈՒՄ

*Ս.Դ. Հնչակեան Կուսակցութեան երիտասարդական միութիւնը օրեր առաջ հանդէս եկած էր կոչով՝ ուղղուած Հայաստանի կառավարութեան, պոյքոթելու Աղթամարի Սուրբ Խաչ եկեղեցւոյ բացման հանդիսութիւնը: Մարտ 30-ին ՍԴՀԿ «Սարգիս Տխրունի» Ուսանողական-Երիտասարդական Միութիւնը հրապարակեց երկրորդ յայտարարութիւն մը դատապարտելով եկեղեցւոյ բացման Հայաստանի պաշտօնական պատուիրակութեան մասնակցութիւնը: «Թուրքիան մեր ճարտարապետութեան մարգարիտը վերանորոգելով՝ հրաժարուել էր*



**Աղթամարի Սուրբ Խաչ եկեղեցիի մուտքին՝ Աթաթուրքի նկարը եւ Թրքական դրօշակներ զետեղուած**

*գմբէթին խաչ տեղադրել, այդ կերպ Սուրբ Խաչը գործող եկեղեցուց վերածելով թանգարանի: Այս կերպ կարծես թէ մեր հարեւանները մէկ գնդակով երկու նապաստակ են որսում: Նախ Եւրամիութեանը յուրօրինակ հաղորդագրութիւն են ուղարկում, թէ ինչքան քաղաքակիրթ ենք մենք, որ ցանկանում ենք հայերի հետ լաւ յարաբերութիւններ հաստատել, իսկ ներքին սպառման համար բոլորին ասում են, թէ պէտք չէ անհանգստանալ, այնտեղ խաչ չի լինելու: Այս ամէնն էլ կարծես թէ չի բաւականացնում, դիմում են Հայաստանին, թէ հրաւիրում ենք՝ եկէք: Ամենայն Հայոց Կաթողիկոս Գարեգին Բ.-ն ու Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոս Արամ Ա.-ն հրաժարուեցին*

*Շար.ը էջ 4*

## ԳԻՒՄՐԻԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻՆ ԴԷՄ ԿԱՏԱՐՈՒԱԾ ՄԱՀԱՓՈՐՁԻ ՄԸ ԸՆԹԱՑՔԻՆ ՍՊԱՆՆՈՒԱԾ ԵՆ ԵՐԵՔ ՀՈԳԻՆԵՐ

*Ապրիլ 2-ին ուշ երեկոյան, Աշտարակ-Գիւմրի մայրուղիին վրայ, անծանօթ ինքնաշարժէ մը կրակոցներ արձակուած են Գիւմրիի քաղաքապետ Վարդան Ղուկասեանի Մերսետես-ին ու անոր ընկերակցող թիկնապահներու մեքենայի ուղղութեամբ: Կրակոցներու հետեւանքով սպաննուած են ընկերակցող մեքենայի հինգ ուղեւորներէն երեքը՝ Արտեոմ Սամուէլի Ադամեան ( 1985-ի ծնունդ), Սիսակ Արամի Վարդանեան (1981-ի ծնունդ) եւ Յովհաննէս Լեւոնի Միրզաբեկեան (1970-ի ծնունդ): Իսկ, քաղաքապետն ու իր վարորդը ծանր վիճակի մէջ փոխադրուած են Երեւանի հիւանդանոցները, ուր ենթարկուած են վիրահատութեան:*

*Հայաստանի Հանրապետական Կուսակցութեան (ՀՀԿ) անդամ, Ղուկասեանի դէմ կատարուած այս մահափորձի կազմակերպիչներու ինքնութեան շուրջ կուսակցութեան ներկայացուցիչները կասկածներ չունենալով հանդերձ, յայտնած են թէ հետեւողական պիտի ըլլան յանցագործները բացայայտելու հարցով:*

*Քաղաքապետ Ղուկասեան Գիւմրի կը վերադառնար, Երեւանի մէջ մասնակցելէ ետք ՀՀԿ Խորհուրդի նիստին, որու ընթացքին միաձայնութեամբ որոշուած էր առաջադրել Սերժ Սարգսեանի թեկնածութիւնը՝ վարչապետի պաշտօնին, փոխարինելու համար վերջերս մահացած Անդրանիկ Մարգարեանին:*

*Որոշ տեղեկութիւններու համաձայն, այդ նիստի ընթացքին վէճ տեղի ունեցած է Սարգսեանի եւ Տարածքային կառավարման Նախարար Յովիկ Աբրահամեանի միջեւ:*

## ՀԱՅԱՍՏԱՆԵԱՆ ՄԱՄՈՒԼ

# ԻՐԱՆԸ ՊԷՏՔ Է ԽՈՒՍԱՓԻ ՊԱՏԵՐԱԶՄԻՑ, ՍԱ ԲԽՈՒՄ Է ՆԱԵՒ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՇԱՀԵՐԻՑ

*Իրանի եւ Արեւմուտքի՝ գնալով աւելի լարուող յարաբերութիւնները ուղղակիօրէն առնչւում են Հայաստանի հետ: Եւ բնականաբար, եթէ ԱՄՆ-ն հարուածի Իրանի միջուկային օբիեկտներին, այդ հարուածները չեն կարող չարձագանգուել մեր երկրում: Թէկուզ այն պատճառով, որ գրեթէ պաշտօնական ձեւակերպմամբ Իրանի հետ սահմանը միակն է Հայաստանի համար. մնացած սահմանները Հայաստանում իշխող մտածողութեան կրողները որակել են որպէս ճակատ: Եւ ուրեմն, ԱՄՆ-Իրան կոնֆլիկտը սպառնում է մեզ զրկել միակ սահմանից: Եւ բացի այդ, հնարաւոր պատերազմը լուրջ տնտեսական վնասներ է հասցնելու մեր երկրին:*

*Իրանը Հայաստանի ամենամեծ առեւտրական գործընկերներից է. նրան է բաժին հասնում մեր արտաքին առեւտրի շրջանառութեան 14 տոկոսը՝ մօտաւորապէս 144 միլիոն դոլար: Թէ ինչ չափի ազդեցութիւն կ՚ունենայ հնարաւոր պատերազմը մեր երկրների առեւտրաշրջանառութեան վրայ, դժուար է ասել: Բայց որ այդ ազդեցութիւնը բացասական կը լինի, միանշանակ է: Պատերազմի ուրուականը մշուշոտ է դարձնում նաեւ Իրան-Հայաստան գազատարի մօտալուտ գործարկման հնարաւորութիւնը: Նման հնարաւորութիւնը կասկածելի է դառնում ոչ միայն տեխնիկական, այլեւ քաղաքական իմաստով: Իրանին հասցրած հարուածները ԱՄՆ-ին ստիպելու են աւելի ագրեսիւ քաղաքականութիւն վարել տարածաշրջանում, եւ նա կարող է այս հարցում երկընտրանքի առաջ դնել Հայաստանին:*

*Պէտք է նշել, որ Իրան-ԱՄՆ հնարաւոր կոնֆլիկտը որոշակի ոգեւորութիւն է առաջացրել հայաստանեան յայտնի շրջանակներում: Նրանք հորթի հրճուանքով արձանագրում են, թէ Իրանը կարող է պատասխան հարուածներ հասցնել Ատրպէյճանին: Բայց մենք այստեղ ոգեւորուելու բան չունենք: Նախ՝ Իրանի կողմից Ատրպէյճանին հարուածներ հասցնելը ԱՄՆ-ին որոշակի բարոյական պարտաւորութիւնների առաջ է կանգնեցնելու այդ երկրի հանդէպ եւ Ատրպէյճան-ԱՄՆ յարաբերութիւնները մեզ համար անցանկալի չափերի սերտացնելու է: Եւ յետոյ, Իրանի կողմից Ատրպէյճանին հարուած հասցնելու տարբերակը անհաւանական է, որովհետեւ դա կը նշանակի բորբոքել Իրանում բնակուող բազմամիլիոնանոց ատրպէյճանական համայնքը՝ սրանից բխող բոլոր հետեւանքներով: Այնպէս որ, բոլոր նրանք, ովքեր ուրախանում են Իրանի կողմից Ատրպէյճանին հարուածներ հասցնելու հնարաւորութեամբ, ընդամէնը ուրախանում են «Մեծ Ատրպէյճանի» կերտման հնարաւորութեամբ: Եւ չենք կարծում, թէ Իրանում այնքան պարզամիտ են, որ մտածեն, թէ Ատրպէյճանին հարուածներ հասցնելը կարող է խելամիտ քայլ լինել, մանաւանդ որ Ատրպէյճանը Արեւմուտքին յատակ գազային յոյսեր է ներշնչում: Եւ ընդհանրապէս, չնայած Իրանը վստահ է իր ուժերին, այսուհանդերձ, այդ երկրին նոյնպէս ձեռնտու չէ հարուածներ ստանալ՝ անգամ սեփական միջուկային ծրագրերից հրաժարուելու գնով:*

*Աշխարհում տեղի ունեցող պրոցէսները յուշում են, որ բնական գազով գերհարուստ Իրանը շատ աւելի հզօր լծակ կը ստանայ, եթէ դառնայ Եւրոպայի այլընտրանքային գազամատակարար: Պատերազմը Իրանին զրկելու է նման հեռանկարից, Հայաստանին էլ՝ տարանցիկ երկիր լինելու հնարաւորութիւնից: Եւ պատերազմական քաոսը միանշանակ օգտագործելու է Ատրպէյճանը՝ գազային նոր իրողութիւններ ամրագրելու համար: Իհարկէ, սա կանխելու համար կարելի կը լինէր պատասխան հարուածներ հասցնել Ատրպէյճանին, եթէ չլինէին վերը բերուած իրողութիւնները: Կարճ ասած, Իրանը ամէն կերպ պէտք է խուսափի պատերազմից, ու սա թերեւս բխում է նաեւ Հայաստանի շահերից: Իրանցի դիւանագէտները պնդում են, որ Արեւմուտքի հետ հնարաւոր չէ բարեկամութիւն անել, նրանց հետ հնարաւոր է միայն սակարկել: Կարծում ենք՝ այս պահին դեռ կայ հնարաւորութիւն՝ «գազի արտահանման ծրագիր՝ միջուկային ծրագրի դիմաց» բանաձեւով սակարկելու համար: Չնայած, ՀՀ իշխանութիւնները, Իրան-Հայաստան գազամուղը ռուսներին յանձնելով, նման հնարաւորութիւնը նուազագոյնի են հասցրել:*

**ԽՄԲԱԳՐԱԿԱՆ**
**«ՀԱՅԿԱԿԱՆ ԺԱՄԱՆԱԿ»**

# ՊՐԱԳՄԱՏԻԶՄԻ ՊԱԿԱՍ

*Արդէն առիթ եմ ունեցել գրելու եւ այսօր էլ շարունակում եմ պնդել, որ մեր այսօրուայ իշխանութիւնները պրագմատիկ չեն: Ընդհակառակը՝ չափից դուրս էմոցիոնալ են, նեարդային: «Ա1+»-ի փակման օրինակը դրա վառ ապացոյցն է: Թւում է՝ նպատակը պրագմատիկ է. փակել անկախ հեռուստատեսութիւնը, որպէսզի եթերում ոչ ոք իրենց մասին ոչ մի վատ բան չասի: (Նոյն տրամաբանութեամբ՝ նրանք մեծագոյն հաճոյքով եթերից կը զրկէին «Ազատութիւն» ռադիոկայանը, բայց այս դէպքում նրանք ակնյայտօրէն վախենում են ամերիկացիներից): Բայց «Ա1+»-ը փակելու հետեւանքները նրանք, այնուամենայնիւ, մինչեւ վերջ չեն հաշուարկել: Նախ՝ Հայաստանում հնարաւոր չէ ստեղծել այնպիսի ռեժիմ, որտեղ կարելի է փակել բոլոր ընդդիմախօսների բերանը՝ ոչ Խորհրդային Միութեան, ոչ էլ նոյնիսկ Թուրքմենստանի կամ Ուզբեկստանի տնտեսական հզօրութիւնը (եւ, հետեւաբար, ինքնաբաւ լինելու հնարաւորութիւնը) մեր պետութիւնը չունի: Երկրորդ՝ միջազգային կառոյցներն այդ փակումը կ՚օգտագործեն որպէս փաստարկ իշխանութիւնների դէմ:*

*Բայց ամենակարեւորն այն է, որ «Ա1+»-ն այն խնդիրը չէր, որի համար արժէր եւս մէկ անգամ ժողովրդի (տուեալ դէպքում՝ հեռուստադիտողների) անէծքի տակ մտնել: Գրիգոր Ամալեանին, Շամիրամ Աղաբեկեանին (որը ներկայումս նախագահականից գործուղուած՝ «Բարգաւաճ Հայաստանի» կարկառուն գործիչներից է), մնացած կամակատարներին գուցէեւ թւում է, որ փակելով «Ա1+»-ը՝ իրենք մեծ, ազգանուէր գործ են արել՝ «նպաստել են երկրի ներքին կայունութեանը» կամ թէկուզ օգնել են, որ իրենց «շէֆը»՝ Ռ. Քոչարեանը, մնայ իր աթոռին: Բայց դա լոկ պատրանք է կամ, աւելի հաւանական է՝ ինքնախաբէութիւն: Նրանք ընդամէնը կատարել են նախագահի քմահաճոյքը: Որովհետեւ «Ա1+»-ը ոչ ներքին կայունութեանը, ոչ էլ Քոչարեանի աթոռին չէր սպառնում, պարզապէս ազդում էր նրա նեարդերին: Փոխարէնը՝ 5 տարի շարունակ անծանօթ մարդիկ գրեթէ ամէն օր մօտենում են ինձ եւ հարցնում՝ «ի՞նչ եղաւ ձեր կանալը», որին անպայման մի քանի յարկանոց արտայայտութիւն են աւելացնում՝ ներկայիս իշխանութիւնների հասցէին: Պարզ է, որ հասարակութեան համակրանքը (եւ ժողովրդի քուէն) իրենց պէտք չէ՝ նրանք իշխանութիւնը պահում են ուժով եւ փողով, բայց առանց պատճառի խորացնել անհանդուրժողականութեան, ատելութեան մթնոլորտը՝ դա ամենեւին պրագմատիկ քայլ չէ:*

*Իհարկէ, ոչինչ յաւերժ չէ: «Ա1+»-ն էլ վաղ թէ ուշ կը բացուի: Եւ այստեղ ես երկու վտանգ եմ տեսնում: Առաջինի մասին ասել եմ. երբ Ամալեանը եւ մնացածներն այլեւս դուրս գան իշխանութեան «լակէյների» կարգավիճակից, մեզ մօտ կարող է ցանկութիւն առաջանալ վրէժխնդիր լինել նրանցից: Աստուած մեզ հեռու պահի նման ցանկութիւնից՝ այն նոյնպէս պրագմատիկ չէ: Եւ երկրորդը: Եթէ յիշում էք, երբ նախորդ իշխանութիւնը փակեց «Հայլուրը», այն երկար ժամանակ ազատամտութեան, լրագրական պրոֆեսիոնալիզմի խորհրդանիշ էր: «Իրավիճակի փոփոխութիւնից» յետոյ «Հայլուրը» դարձել է տաղտկալի օֆիցիոզի եւ քոչարեանական պրոպագանդայի խորհրդանիշ: Կարծում եմ, «Ա1+»-ի դէպքում այդ վտանգը զուտ տեսական է:*

**ԱՐԱՄ ԱԲՐԱՀԱՄԵԱՆ**
**«ԱՌԱՒՕՏ»**

# ՊԱՅՔԱՐ ԲԱՆԱԿԻ ՀԱՄԱՐ

*Անկախ այն բանից, թէ ով է նշանակուելու Հայաստանի Հանրապետութեան նոր վարչապետ, շատ կարեւոր է, թէ ինչ է պէտք լինելու վճարել դրա համար: Եւ քանի որ վարչապետի հաւանական թեկնածու է համարւում պաշտպանութեան նախարար Սերժ Սարգսեանը, ապա թերեւս արժէ դիտարկել, թէ ինչ գին ունի վարչապետութիւնը Սերժ Սարգսեանի համար: Նախ եւ առաջ դա իհարկէ պաշտպանութեան նախարարի պաշտօնն է: Ինչքան էլ որ պաշտօններ է համատեղում պաշտպանութեան նախարարը, վարչապետի եւ նախարարի պաշտօնը Սահմանադրութեամբ անհամատեղելի են, իսկ նախընտրական շրջանում կասկածելի սահմանադրականութեան մասին մտածելն ուղղակի անհնար է: Դա երեւի կարող է անել միայն Ռոբերտ Քոչարեանը, կամ կարելի է անել միայն նրա հովանաւորութեամբ: Մինչդեռ հենց նախագահի համար է աննպաստ, որ պաշտպանութեան նախարարը համատեղի երկու պաշտօնները՝ ղեկավարի Զինուած Ուժերն ու կառավարութիւնը: Այնպէս որ, եթէ Ռոբերտ Քոչարեանը մտադիր է Սերժ Սարգսեանի իրաւասութեան տակ թողնել պաշտպանութեան համակարգն ու նաեւ նրան նշանակել վարչապետ, ապա աւելի լաւ է միանգամից հրաժարական տայ, եւ պաշտպանութեան նախարարին ազատ, արդար ու թափանցիկ ընտրութեամբ նշանակի նախագահ: Այդ դէպքում Սերժ Սարգսեանը գուցէ նոյնիսկ կը համաձայնի Ռոբերտ Քոչարեանին վարձահատոյց լինել նրան վարչապետ նշանակելով:*

*Սակայն պարզ է, որ Ռոբերտ Քոչարեանը մտադիր է ինքն իրեն նշանակել վարչապետ, եւ առաւել եւս մտադիր չէ իր փոխարէն ուրէ մէկին նախագահ նշանակել: Այնպէս որ, ներկայում նա պէտք է վարչապետ նշանակի մէկին, ումից յետոյ հեշտ կը լինի հետ վերցնել այդ պաշտօնը: Այդ իսկ պատճառով, եթէ նախագահը մտադիր է վարչապետ նշանակել պաշտպանութեան նախարարին, ապա բնականաբար որեւէ կերպ չի կարող նրա իրաւասութեան տակ թողնել նաեւ պաշտպանութեան բնագաւառը: Խնդիրը միայն այն չէ, որ Սերժ Սարգսեանը չհամատեղի: Սահմանադրութիւնը չի նախատեսում նման բան եւ արտաքնապէս այդ կողմը կը պահպանուի, բայց խնդիրն այն է, թէ ում ցանկութեամբ է նշանակուելու նոր պաշտպանութեան նախարարը: Աւելի ուղիղ եթէ ձեւակերպենք՝ ում մարդն է լինելու նոր նախարարը՝ Ռոբերտ Քոչարեանի, թէ Սերժ Սարգսեանի: Չնայած այժմ շատ դժուար է ասել, թէ իրականում նրանցից ում ազդեցութիւնն է բանակում ներկայում աւելի մեծ: Առաւել հաւանական է, որ այդ ազդեցութեան չափը մօտաւորապէս հաւասար է, եւ Սերժ Սարգսեանին հանելով բանակից, Ռոբերտ Քոչարեանը պարզապէս կարող է քայլ կատարել իր ազդեցութիւնը բանակում մեծացնելու ուղղութեամբ:*

**ՅԱԿՈԲ ԲԱԴԱԼԵԱՆ**
**«ԼՐԱԳԻՐ»**

**ՄԱՍԻՍ** ՇԱԲԱԹԱԹԵՐԹ
ՊԱՇՏՕՆԱԹԵՐԹ՝
ՍՈՑԻԱԼ ԴԵՄՈԿՐԱՏ ՀՆՉԱԿԵԱՆ
ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ
Արեւմտեան Ամերիկայի Շրջանի

ԽՄԲԱԳԻՐ՝
ՏՕՔԹ. ԱՐՇԱԿ ԳԱԶԱՆՃԵԱՆ
ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԿԱԶՄ՝
ՍԱՀԱԿ ԹՈՒԹՃԵԱՆ
ՎԱԶԳԷՆ ԽՈՏԱՆԵԱՆ
ՅԱՐՈՒԹ ՏԷՐ ԴԱՒԻԹԵԱՆ
Հեռ. (626) 797-7680
Ֆաքս. (626)797- 6863
E:Mail: massis2@earthlink.net
http://www.massisweekly.com

**MASSIS Weekly**
Organ of the **Armenian Social Democratic Hunchakian Party of Western USA**
1060 N. Allen Ave.
Pasadena, CA 91104
Phone: (626) 797-7680
Fax: (626) 797-6863
(USPS 667-310) (ISSN 0744-334X)
Published Weekly
Except Two Weeks in August

ANNUAL SUBSCRIPTION RATES:
USA $50.00, Canada $60 (Second Class), $75.00 (Air Mail)
Overseas $85.00 (2nd Class Mail), $125.00 (Air Mail).
All payments must be made in US funds & Drawn on US banks.
Periodicals Postage Paid at Pasadena CA.
Please Send Address Change To
**MASSIS WEEKLY**
**1060 N. Allen Ave.**
**Pasadena, CA 91104**

## ԼՈՒՐԵՐ

# ՈՉ ԱԼԻԵՒԸ, ՈՉ ՔՈՉԱՐԵԱՆԸ ԻՐԱՒՈՒՆՔ ՉՈՒՆԵՆ ՈՐՈՇՈՒՄ ԿԱՅԱՑՆԵԼՈՒ ՂԱՐԱԲԱՂԻ ԺՈՂՈՎՐԴԻ ՓՈԽԱՐԷՆ

*ԵՐԵՒԱՆ, «ԱՅԲ-ՖԷ»: Չկայ Հայաստան առանց Արցախի: Չկայ Արցախ առանց Հայաստանի: Չկայ Հայաստան եւ Արցախ առանց ազատագրուած տարածքների: Այս տեսակէտին էին շուրջ 25 հասարակական եւ քաղաքական կազմակերպութիւններ ներկայացնող «Ի պաշտպանութիւն ԼՂՀ կազմկոմիտէի» 10-ամեակին նուիրուած ժողովի մասնակիցները: Իսկ նրանց, ովքեր այն կարծիքին են, որ անհնար է հակամարտութեան լուծումն առանց զիջումների, կազմկոմիտէի նախաձեռնողներից ՀԴԿ նախագահ Արամ Գասպարի Սարգսեանն ասում է, որ այդ տարածքները Հայաստանին կը մնան փոխհատուցման դիմաց: 500 հազար Ատրպէյճանից բռնագաղթուած հայ փախստականներն առ այսօր որեւէ փոխհատուցում չեն ստացել: «Սա համարժէք զիջում կը լինի Հայաստանի կողմից»,- ասում է ՀԴԿ նախագահը: Կազմկոմիտէն բազմիցս դիմել է ՀՀ Աժ-ին, որպէսզի նա ճանաչի ԼՂՀ-ի՝ իրաւական եւ միջազգային նորմերից բխող լիակատար անկախութիւնը Ատրպէյճանից եւ հիմնաւորի այն փաստը, որ դուրս գալով Ատրպէյճանի կազմից, ԼՂԻՄ-ը չի խախտել այդ երկրի տարածքային ամբողջականութիւնը:*

*Ներկայիս Ատրպէյճանը, ըստ պրոֆեսոր Ալեքսանդր Մանասեանի, կորցրել է իրաւական բոլոր կապերը Արցախի եւ Նախիջեւանի հետ՝ 1991թ իրեն հռչակելով 1918-20թթ Ատրպէյճանի իրաւայաջորդ: Իսկ դրանից առաջ՝ 1990թ Ապրիլի 3-ի «Միութենական հանրապետութեան ԽՍՀՄ դուրս գալու հետ կապուած հարցերի մասին» օրէնքով գերադասուել էր ազգերի ինքնորոշման սկզբունքը տարածքային ամբողջականութեան սկզբունքի նկատմամբ: «Այսինքն՝ եթէ ԽՍՀՄ-ից դուրս է գալիս Ատրպէյճանը, Լեռնային Ղարաբաղը իրաւունք ունի ինքնուրոյն պետութիւն ստեղծելու»,- 17 տարի առաջ ընդունուած օրէնքը մեկնաբանում է Ալեքսանդր Մանասեանը: Ըստ նրա՝ ոչ Ալիեւը, ոչ Քոչարեանը իրաւունք չունեն որոշում կայացնելու Ղարաբաղի ժողովրդի փոխարէն: ՀՀ իշխանութիւնները, նրա կարծիքով, պէտք է հրաժարուեն բանակցութիւններից, քանի դեռ ԼՂ իշխանութիւնները ներգրաւուած չեն իբրեւ լիարժէք կողմ: Կազմկոմիտէն, ՀՀ-ի՝ ԼՂ հարցում պաշտօնական քարոզչութիւնը որակելով պարտուողական, վերահաստատեց, որ մերժում է «արեան եւ մեծ զրկանքների գնով ձեռք բերուած Արցախեան գոյամարտի նուաճումները» կորցնելը:*

*Հաւաքի մասնակիցները ոչ միայն յայտնեցին վճռականութիւն շարունակելու իրենց գործունէութիւնն ի պաշտպանութիւն ԼՂՀ-ի, այլեւ ընդունեցին յայտարարութիւն ի զօրակցութիւն Արցախեան հերոսամարտում իրենց վաստակն ունեցող, 2006թ Դեկտեմբերից ԱԱԾ մեկուսարանում գտնուող Ժիրայր Սեֆիլեանի եւ Վարդան Մալխասեանի:*

# ՄԻ ՇԱՐՔ ՀԵՌՈՒՍՏԱԸՆԿԵՐՈՒԹԻՒՆՆԵՐ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՒՄ ԵՆ ՆԱԽԸՆՏՐԱԿԱՆ ԳՈՎԱԶԴ

*ԵՐԵՒԱՆ, 2 ԱՊՐԻԼ, ՆՈՅԵԱՆ ՏԱՊԱՆ: «2007 թուականի խորհրդարանական ընտրութիւնները սկսուել եւ ընթանում են միջազգային չափանիշների կոպիտ խախտումներով, որոնք էական ազդեցութիւն են ունենալու քուէարկութեան արդիւնքների վրայ»: Այս մասին Ապրիլի 2-ին տեղի ունեցած քննարկման ժամանակ յայտարարեց ընտրութիւնների օրինականութիւնը վերահսկող հասարակական յանձնախմբի նախագահ Ռուբէն Թորոսեանը:*

*Ըստ նրա, խախտելով օրէնքով սահմանուած նախընտրական քարոզչութեան կարգն ու պայմանները, իշխանամերձ գրեթէ բոլոր կուսակցութիւններին հնարաւորութիւն է տրուել իրականացնելու լայնամասշտաբ քարոզչութիւն դեռեւս մինչեւ Ապրիլի 8-ը, որը ՀՀ ԿԸՅ կողմից սահմանուած է որպէս նախընտրական քարոզարշաւի պաշտօնական սկիզբ: Այսպէս, մի շարք հեռուստաընկերութիւնների եթերով, այդ թւում՝ «Արմէնիա», «ԱԼՄ», «Կենտրոն», «TV5», արդէն իսկ հեռարձակւում է նախընտրական գովազդ: Մինչդեռ, ինչպէս նշեց Ռ.Թորոսեանը, «Հեռուստատեսութեան եւ ռադիոյի մասին» օրէնքի 11-րդ յօդուածը արգելում է ընտրութիւնների պաշտօնական քարոզչութեանը նախորդող ժամանակաշրջանում հեռուստաընկերութիւնների կողմից քաղաքական կամ այլ քարոզչական նիւթի հեռարձակումը: Նա նաեւ յիշեցրեց, որ նման հաղորդումները պարտադիր պէտք է ուղեկցուեն «քաղաքական գովազդ» լուսագրով:*

*Բացի դրանից, Ռ.Թորոսեանի խօսքերով, Հայաստանի Հանրապետական, «Բարգաւաճ Հայաստան» եւ Ժողովրդական կուսակցութիւնները քաղաքացիներին տրամադրում են նիւթական արժէքներ եւ ծառայութիւններ: «Այս պայմաններում ընտրութիւնների նախապատրաստումը եւ անցկացումը հերթական հարուածն է հասցնելու ժողովրդի ազատ կամքի արտայայտմանը ընտրութիւններում»,- նշեց նա:*

# ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ՍԵՓԱԿԱՆՈՒԹԵԱՆ 55%-Ը ԳՏՆՒՈՒՄ Է ՔԱՂԱՔԱԿԱՆ ԻՇԽԱՆՈՒԹԵԱՆ ՁԵՌՔԻՆ

*Հայաստանի ներկայիս իշխանութիւնները գնացել են «սեփականութեան եւ իշխանութեան միաձուլման», ինչի պատճառով «սեփականութեան 55%-ը գտնւում է այն մարդկանց ձեռքին, որոնք ունեն քաղաքական իշխանութիւն»: Այս կարծիքը Ապրիլի 3-ին յայտնեց ՀՀ նախկին վարչապետ Հրանդ Բագրատեանը:*

*Ըստ նրա, նախկին իշխանութեան վերնախաւը իրեն թոյլ չի տուել սեփականութեան մեծ ծաւալի կուտակում: Նախկին վարչապետը գտնում է, որ ներկայիս իշխանութիւնները ձեռնարկել են դա վերագրելու փորձեր, մասնաւորապէս, «մազութի գործ» բացելու միջոցով:*

*Հ. Բագրատեանի գնահատմամբ, Հայաստանի տնտեսական աճի տեմպերն իրականում աւելի ցածր են, քան ներկայացնում է պաշտօնական վիճակագրութիւնը:*

# ՔԱՐՈԶԱՐՇԱՒԻՆ ԽԱԽՏՈՒՄՆԵՐԸ ԱՒԵԼԻ ՇԱՏ ԿԸ ԼԻՆԵՆ

*ԵՐԵՒԱՆ, «ԱՅԲ-ՖԷ»: Քաղաքական կոռուպցիան սաստկանում է Հայաստանում եւ կործանարար ազդեցութիւն կարող է ունենալ երկրի ապագայի համար: Դա կոռուպցիայի այն ձեւն է, որ տեսանելի չէ շարքային քաղաքացուն: «Մեր երկրում յանցագործութիւնն անպատիժ է մնում»,- այս կարծիքը յայտնեց «Տարածաշրջանային զարգացման կենտրոն/Թրանսփարենսի Ինթերնէշնլ-Հայաստան» ՀԿ-ի նախագահ Ամալիա Կոստանեանն այսօր տեղի ունեցած «Հայաստանն ընտրութիւնների շեմին» քննարկմանը:*

*ՀԿ-ի անցկացրած մոնիտորինգը 2007թ. խորհրդարանական ընտրութիւնների շեմին ընտրարշաւների ֆինանսաւորման եւ վարչական ռեսուրսի օգտագործման վերլուծութիւնն է: 2006թ. ՀԿ-ի անցկացրած հարցումները ցոյց էին տուել, որ մարդկանց ճնշող մեծամասնութիւնը կարծում է, որ Հայաստանում ամենակոռումպացուած ինստիտուտը ընտրական համակարգն է: Բացի բուն ընտրութիւններից, դիտարկուելու է նաեւ պաշտօնական քարոզարշաւը:*

*Ամալիա Կոստանեանը նշեց, որ Դեկտեմբեր-Յունուար ամիսներին հանդիպել են հայաստանեան շուրջ 14 կուսակցութիւնների հետ, որոնցից միայն 10-ն են ցանկացել կամ վերապահումով համաձայնուել հակակոռուպցիոն պայքարում համագործակցել ՀԿ-ի հետ: Երեք կուսակցութիւն չի կողմնորոշուել այս հարցում, իսկ «Միացեալ աշխատանքային կուսակցութիւնն» ուղղակի հրաժարուել է: Սակայն, տիկին Կոստանեանը յիշեցրեց, որ մինչեւ Ապրիլի 7-ը միւս կուսակցութիւնները դեռ կարող են դիմել իրենց: «Այս տարիների ընթացքում արձանագրելով խախտումներ, արդեօք ունեցե՞լ ենք պատժելու մի լուրջ դէպք, արդեօ՞ք միջազգային դիտորդների յայտնած կարծիքները հաշուի առնուել են այս ընթացքում: Սակայն, այս անգամ պէտք է ամէն ինչ անել, որ սխալ արդիւնքները բողոքարկենք՝ այդպիսով մի փոքր բարելաւելով մեր երկրի վիճակը եւ ընտրական գործընթացը»,- ասում է Ամալիա Կոստանեանը:*

*«Ընտրութիւնը քոնն է» ՀԿ-ի նախագահ Յարութիւն Համբարձումեանը նշեց, որ բացի բուն ընտրութիւնների դիտարկումից, ուսումնասիրուելու են նաեւ ընտրացուցակներն, իսկ ընտրութիւններից 2 օր յետոյ հանդէս կը գան նախնական արդիւնքների հրապարակմամբ: 41 ընտրատարածքներում ՀԿ-ն ունենալու է երկարատեւ դիտորդներ, որոնք 10 օրը մէկ անգամ կը ներկայանան նախնական հաշուետուութիւններով, թէ ինչ է կատարւում իրենց ընտրատարածքում: «Նաեւ աչալուրջ հետեւելու ենք քարոզարշաւի ընթացքին, քանի որ այդ ժամանակ աւելի շատ են տեղի ունենում խախտումներ: Բոլոր կուսակցութիւններին կոչ ենք անում համագործակցել մեր դիտորդների հետ, որը փոխարդիւնաւէտ կը լինի»,- վստահեցնում է Յարութիւն Համբարձումեանը:*

*Երեւանի մամուլի ակումբի նախագահ Բորիս Նաւասարդեանն էլ նշեց, որ 2007թ. Փետրուարի 1-ից մինչ քարոզարշաւը իրենք սկսել են լրատուամիջոցների գործունէութեան դիտարկում: Ապրիլի 8-ից ընդլայնելու են իրենց կողմից դիտարկուող լրատուամիջոցների ցանկը, եւ 10 օրը մէկ հրապարակուելու են նախնական արդիւնքները, որ դինամիկան ու ընթացքը մարդիկ յստակ պատկերացնեն: Մոնիտորինգի ընթացքում հետեւելու են, թէ տուեալ լրատուամիջոցը որ կուսակցութիւններին է հրաւիրում եթեր եւ իւրաքանչիւրին ինչ յաճախականութեամբ ու ինչ կարծիքներ են հնչում նրա վերաբերեալ:*

*Նա նշեց, որ 2006թ. երկրորդ կէսից մի քանի կուսակցութիւն արդէն ակտիվ սկսել էին իրենց գործունէութիւնը եւ յստակ երեւում էր, որ բաւականին սահմանափակ էր ընդդիմադիր գործիչների հնարաւորութիւնները: «Իսկ հիմա այնպիսի մի փուլ ենք մտել, որ կարող է ֆորմալ առումով շատ նորմալ պատկեր ստեղծել այն իմաստով, որ բոլոր ընդդիմադիր գործիչների համար եթերաժամն այլեւս խնդիր չէ:*

*Սակայն, այսօր դիտարկուող լիբերալացումն անմիջապէս կը վերջանայ Մայիսի 12-ին, եւ քաղաքական ռեակցիայի հերթական փուլ կը սկսուի, որը մտահոգիչ է: Ձեւաւորւում են արդէն լուրջ խնդիրներ խօսքի ազատութեան եւ հակակոռուպցիոն գործողութիւնների հետ կապուած: Այս առումով մենք անընդհատ նահանջ ենք ապրում»,- վստահեցնում է Բորիս Նաւասարդեանը: Նա անդրադարձաւ նաեւ հեռուստաընկերութիւնների սահմանած սակագներին, երբ նրանցից ոմանք միտումնաւոր չեն հրապարակել քաղաքական գովազդի սակագները՝ իշխանական շրջանակներից ու բիզնեսմեններից ակնկալելով նիւթական փոխհատուցում: «Մեր տեղեկութիւններով՝ այդ ակնկալիքներն արդարացւում են: Նոր ակնկալիքներ կան նաեւ մինչեւ Մայիսի 12-ը»,- աւելացրեց Բորիս Նաւասարդեանը:*

# ԱԶԳԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹԵԱՆ ԾԱՌԱՅՈՒԹԻՒՆԸ ՆԱԽԸՆՏՐԱԿԱՆ ԳՈՐԾԻ ՎՐԱՅ

*ԵՐԵՒԱՆ, «ՀԱՅԿԱԿԱՆ ԺԱՄԱՆԱԿ»: «Ջօն Պագոլինիին» գրքի հեղինակը (Գագիկ Սարգսեան) Մարտ 31-ի կէսօրին Ազգային Անվտանգութեան Ծառայութեան (ԱԱԾ) Սահմանադրական կարգի պահպանութեան բաժնի աշխատակիցների կողմից հրաւիրուել է գրոյցի եւ ԱԱԾ-ում պահուել մինչեւ երեկոյ:*

*Մեզ չյաջողուեց ԱԱԾ-ից պաշտօնական պարզաբանում ստանալ այսօրինակ հրաւէրի կապակցութեամբ, որովհետեւ ԱԱԾ լրատուութեան վարչութեան պետ Արծուին Բաղրամեանը մեր թղթակցին ասել է, որ հարիւրաւոր մարդիկ են հրաւիրւում ԱԱԾ: Այս տեղեկատուութիւնը, սակայն, նոյնպէս արժէքաւոր է եւ թերեւս նշանակում է, որ ԱԱԾ-ում նախընտրական աշխուժութիւն է տիրում: Ու մինչ Հայաստանի Ազգային Անվտանգութիւնը տարածաշրջանում եւ աշխարհում ոտնատակ է տրւում, մեր յատուկ ծառայութեան չինովնիկները զբաղուած են ՀՀԿ-ի եւ ԲՀԿ-ի միջեւ ձայների արդարացի բաշխմամբ: Ինչ վերաբերում է Գագիկ Սարգսեանին, ԱԱԾ մեր աղբիւրները տեղեկացնում են, որ նրան առաջարկուել է «Հայկական Ժամանակ» թերթում այլեւս յօդուածներ չտպագրել:*

ԼՈՒՐԵՐ

## ՍԵՐԳԵՅ ԼԱՒՐՈՎ . «ԼՂ ՀԻՄՆԱԽՆԴԻՐԸ ՇԱՏ ԲԱՑԱՌԻԿ Է»



*Սերգէյ Լաւրով (ձախին) եւ Վարդան Օսկանեան Երեւանի մէջ կայացած մամլոյասուլիսի ընթացքին*

*ԵՐԵՒԱՆ, «ԱՅԲ-ՖԷ»:* «ԼՂ հիմնախնդիրը իր էութեամբ իսկապէս բացառիկ է: Բացառիկ է այն առումով, որ սա եզակի հակամարտութիւն է, որի կարգաւորման նոյնիսկ մանրամասնութիւնների շուրջ համանախագահները եւ նոյնիսկ անգամ հակամարտող կողմերի դիրքորոշումը չի հակասում իրար»,- Ապրիլ 3-ին Երեւանում յայտարարեց Ռուսաստանի Դաշնութեան Արտաքին Գործոց նախարար Սերգէյ Լաւրովը:

ՀՀ ԱԳ նախարար Վարդան Օսկանեանը հաստատեց իր ռուսաստանեան գործընկերոջ խօսքը. «Սերգէյ Լաւրովը ԼՂ հակամարտութեանը խորքային է տիրապետում: Մենք բարձր ենք գնահատում ՌԴ-ի դիրքորոշումն ու դերը ԼՂ հիմնախնդրի կարգաւորման հարցում: ՌԴ-ն ոչ միայն պատրաստ է աջակցել կողմերի համաձայնութիւնը, այլեւ հանդէս գալ իբրեւ ձեռք բերուած համաձայնութեան երաշխաւոր»: Եթէ ոչ միայն ԵԱՀԿ միջնորդները, այլեւ հակամարտող կողմերն էլ նոյնիսկ մանրամասնութիւնների շուրջ են եկել համաձայնութեան, ապա ո՞րն է ԼՂ հիմնախնդրի չկարգաւորման պատճառը՝ «Ա1+»-ի հարցին, Սերգէյ Լաւրովը պատասխանեց. «Ամէն դէպքում լրագրողները ոչ միայն դիտելու վարպետներ են, այլեւ ընդհանրացնելու: Իսկապէս, կայ մեծ համաձայնութիւն ԼՂ հիմնախնդիրը կարգաւորելու շուրջ: Մնում են հարցեր, որոնք պէտք է կողմերը քննարկեն: Համանախագահները միակարծիք են այն հարցում, որ նրանք ընդունեն կողմերի ձեռք բերած համաձայնութիւնը: Այս պահին Պաքուն եւ Երեւանը պէտք է իրենց խօսքը ասեն, իսկ միջնորդները պատրաստ են աջակցել: Որոշիչ խօսքը պատկանում է կողմերի ղեկավարներին»,- ասաց Սերգէյ Լաւրովը:

Վարդան Օսկանեանի խօսքերով՝ այս պահին պաշտօնական Երեւանի եւ Պաքուի կողմից քննարկուող փաստաթուղթը, հիմնականում համաձայնեցուած է կողմերի միջեւ. «ԼՂ հիմնախնդրի կարգաւորման սկզբունքների մասին փաստաթղթում, իսկապէս համաձայնութիւնների լայն շրջանակ կայ, սակայն չկայ ամբողջական համաձայնեցում: Թերեւս մնում են մէկ-երկու սկզբունքներ, որոնք պէտք է համաձայնեցնեն: Խնդիրը միայն սկզբունքներին չի վերաբերւում. երբ սկսում ենք դրանք մանրացնել, տեսնում ենք, որ այնտեղ նոյնպէս կան խնդիրներ: Դա է պատճառը, որ մենք այսօր չենք կարողանում հասնել վերջնական համաձայնութեանը»,- մանրամասնեց ՀՀ ԱԳ նախարարը:

Լրագրողները պարոն Լաւրովին յիշեցրին, որ այսօր ՄԱԿ-ում քննարկւում է Կոսովոյի խնդիրը եւ հետաքրքրուեցին, թէ այն ինչպէ՞ս կ'անդրադառնայ ԼՂ հիմնախնդրի կարգաւորման վրայ: «Կոսովոն պէտք է անկախութիւն ստանայ: Ռուսաստանը կը պաշտպանի միայն այն տարբերակը, որն ընդունելի է Պրիշտինայի եւ Բելգրադի համար: Կոսովոյին անկախութիւն չտալը կը նշանակի, որ դա կը լինի նախադէպ նաեւ միւս հանրապետութիւնների համար»,- ասաց պարոն Լաւրովը: Նրա կարծիքով պատահական չէ, որ այսօր բոլորը հետեւում են Կոսովոյի կարգաւորման գործընթացին:

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՂԵԿԱՎԱՐՆԵՐԸ ԿԸ ՎԱԽՆԱՆ

*Շարունակուած էջ 1-էն*

ներ կատարելու ազատութեան, մամուլի ազատութիւնը, թէ արդեօ՞ք հեռուստատեսութիւնը, ռատիօն մատչելի են բոլորի համար»-. այս ամէնը, ամերիկացի համաձայն, «նոյնքան կարեւոր է, որքան քուէներու հաշուարկը ընտրութիւններու օրը»:

Արեւմուտքէն Հայաստան այցելած բոլոր բարձրաստիճան պաշտօնեաները՝ որոնց կարգին նաեւ ԵԱՀԿ-ի ներկայացուցիչները յոյս կը յայտնեն, որ Մայիսի 12-ի ընտրութիւնները կարելիութիւն կը ստեղծեն Հայաստանին՝ փոխելու այն բացասական կարծիքը, որ ձեւաւորուած է անկախութենէն յետոյ կայացած ընտրութիւններու մասին:

Երեւան ժամանած ԵԱՀԿ-ի դիտորդական առաքելութեան ղեկավար Պորիս Ֆուլեց ըսած էր, թէ «դժբախտաբար, Հայաստանի ընտրութիւնները մինչեւ հիմա չեն համապատասխանած ԵԱՀԿ-ի ժողովրդավարական չափանիշներուն եւ Մայիսի խորհրդարանական ընտրութիւնները գուցէ կարողանան շրջել այս անբարենպաստ միտումը»:

www.massisweekly.com

## «ՄԻԱԿ ԲԱՆԸ, ՈՐԻ ՄԱՍԻՆ ԻՍԹԱՆՊՈՒԼԻ ՈՍՏԻԿԱՆՈՒԹԻՒՆԸ ՉԷՐ ՆԱԽԱԶԳՈՒՇԱՑՈՒԵԼ, ՍԱՄԱՍԹԻ ՍՊԻՏԱԿ ԳԼԽԱՐԿՆ ԷՐ»



*Հրանդ Դինքի սպանութեան մէջ մեղադրուող Օգիւն Սամասթ*

*«ԱԶԱՏՈՒԹԻՒՆ ՌԱՏԻՈՅ»:* Բացայայտուել է, որ «Ակօս» թերթի խմբագրապետ Հրանդ Դինքի սպանութիւնից շատ առաջ Տրապիզոնի անվտանգութեան տնօրինութիւնը Իսթանպուլի անվտանգութեան տնօրինութեանը մանրակրկիտ նախազգուշացում էր յղել ծրագրուող սպանութեան մասին: Թուրքական «Սաբահ» թերթի փոխանցմամբ, «միակ բանը, որ ընդգրկուած չէր զեկոյցում, սպիտակ գլխարկն էր», որ կրում էր սպանութիւնն իրականացրած 17-ամեայ ազգայնական Օգիւն Սամասթը:

«Ակօս»-ի խմբագրապետի սպանութիւնից 11 ամիս առաջ Իսթանպուլի անվտանգութեան տնօրինութեան ստացած նախազգուշական նամակը պարունակել է ծրագրուող սպանութեան բոլոր մանրամասները: Դրանում, մասնաւորապէս, ասուած էր. - «Եասին Հայալը ատում է հայերին եւ ծրագրում է սպաննել «Ակօս» թերթի գլխաւոր խմբագիր Հրանդ Դինքին՝ Թուրքական ինքնութիւնը վիրաւորելու համար»:

Այնուհանդերձ, Իսթանպուլի հետախուզութեան բիւրոյի նախկին տնօրէն Իլհան Գիւլերը անտեսել էր նամակը եւ դրա վրայ չէր հրաւիրել Իսթանպուլի ոստիկանապետի ուշադրութիւնը, ինչի համար էլ Դինքի սպանութիւնից մօտ երկու շաբաթ անց հեռացուել է աշխատանքից՝ սպանութիւնը չկանխելու մեղադրանքով, եւ նրա նկատմամբ ծառայողական քննութիւն է սկսուել:

Տրապիզոնցի ազգայնական Եասին Հայալը, որը խոստովանել էր, որ Սամասթին դրդել է Դինքի սպանութեանը, ներկայումս կալանքի տակ է, եւ նրան մեղադրանք է առաջադրուած:

Հրանդ Դինքը սպաննուել է այս տարուայ Յունուարի 19-ին՝ «Ակօս»-ի խմբագրատան դիմաց:

Սպանութեան գործով կալանուել է շուրջ մէկ տասնեակ մարդ, որոնց ճնշող մեծամասնութիւնը տրապիզոնցի ազգայնականներ են:

## ՀՆՉԱԿԵԱՆ ԵՐԻՏԱՍԱՐԴՆԵՐԸ ԿԸ ՊԱՀԱՆՋԵՆ

*Շարունակուած էջ 1-էն*

մասնակցել այդ պրոթուրքական միջոցառմանը, իսկ մեր կառավարութիւնը, ցանկանալով Հռոմի պապից աւելի կաթոլիկ երեւալ, միանգամից փոխնախարարի մակարդակով պատուիրակութիւն ուղարկեց: Բայց թուրքական ներկայացումն այդքանով չաւարտուեց: Վերջիններս հրաժարուեցին սահմանն անգամ մէկ օրով բացել, որպէսզի պատուիրակութիւնն ուղիղ մեկնի Վան, մերոնք էլ ստիպուած եղան անցնել Վրաստանով»,- ըսուած էր յայտարարութեան մէջ:

ՍԴՀԿ «Սարգիս Տխրունի» Ուսանողական-Երիտասարդական միութիւնը անհանդուրժելի եւ վիրաւորական կը նկատէ կառավարութեան այս որոշումը, որով հերթական անգամ կը նսեմացուի հայ ժողովուրդի արժանապատուութիւնը:

«ՀՀ Մշակոյթի նախարար Յասմիկ Պօղոսեան պէտք է ներողութիւն խնդրի ողջ հայ ժողովրդից Աղթամարի Սուրբ Խաչ եկեղեցու վերաբացմանը պատուիրակութիւն ուղարկելու համար, այլապէս մենք կը պահանջենք նրա պաշտօնազրկումը»,- լրագրողներուն յայտարարեց միութեան ատենապետ ընկ. Նարեկ Գալստեան:

Դիմելով ՀՀ Մշակոյթի փոխնախարար Գ. Գիւրջեանին ան ըսաւ. «Պարոն Գիւրջեան, Դուք ամօթ չզգացի՞ք, որ եկեղեցու պատին տեսաք Աթաթուրքի նկարը եւ կտրեցիք բացման կարմիր ժապաւէնը: Արդեօ՞ք թուրքն է կառուցել այդ եկեղեցին»:

«Այնտեղ պէտք է աղօթք հնչէր, խունկ ծխար: Այդ կատակերգութեան հերոսներն էին Պոլսոյ Պատրիարքը եւ Մշակոյթի փոխնախարար Գագիկ Գիւրջեանը, որոնք ընդունեցին, որ Սբ. Խաչը հայ ճարտարապետական համալիր չէ, այլ թուրքական տաճար».- իր կարգին յայտարարեց ընկ. Սահակ Մանուկեան: Ան աւելցուց որ այդ բացումը քաղաքական տարրեր կը պարունակէ իր մէջ եւ Թուրքիան Եւրամիութեան կ'ուզէ ցոյց տալ, թէ ինչքան քաղաքակրթուած է ինք եւ փոխած է իր վերաբերմունքը Հայաստանի նկատմամբ:

Եթէ Մշակոյթի նախարար Յասմիկ Պօղոսեան ներողութիւն չխնդրէ, «Սարգիս Տխրունի» Միութեան Անդամները կը պատրաստուին բողոքի ցոյց կազմակերպել նախարարութեան առջեւ եւ պահանջել անոր հրաժարականը:

Ձեր Ծանուցումները Վստահեցէք
«Մասիս» Շաբաթաթերթին
T: (626) 797-7680 F: (626) 797-6863
Email: massis2@earthlink.net

# ԹՈՒՐՔԻԱ ՄԵԿՆԵ՞ԼՆ ԷՐ ՃԻՇԴ, ԹԷ՞ ՀԱԿԱՌԱԿԸ

## ԻՄ ԶԷՆՔՆ ԻՄ ԼՌՈՒԹԻՒՆՆ Է

*ԱՆՆԱ Վ. ՅԱԿՈԲԵԱՆ*

*Վանայ լճի Աղթամար կղզու Սուրբ Խաչ եկեղեցու բացման արարողութիւնը, որ տեղի ունեցաւ նախօրէին, մեղմ ասած, ոչ միանշանակ արձագանք գտաւ Հայաստանում եւ հայ հանրութեան շրջանում:*

*Իսկ ամենահետաքրքիրն այն է, որ միջոցառումը միանշանակ չի գնահատուել նաեւ Թուրքիայում: Եւ այսօր արդէն կարելի է արձանագրել, որ անկախ նրանից, թէ ինչ հաշուարկներ էին արել Թուրքիայի իշխանութիւնները՝ որոշելով վերանորոգել եւ հանդիսաւոր բացել հայկական եկեղեցին, անկախ նրանից, թէ ինչ հաշուարկներ էին արել Հայաստանի իշխանութիւնները՝ որոշելով ընդունել Թուրքական կողմի հրաւէրը եւ պատուիրակութիւն ուղարկելով Աղթամար կղզի, արդիւնքում ստացուեց կիսատ-պռատ մի բան, որը չի կարող բաւարարել ո՛չ մէկին եւ ո՛չ միւսին: Սակայն ամբողջ խնդիրն այն է, որ եթէ Թուրքական կողմի համար միջոցառումը կարող է ընդամէնը չյաջողուած համարուել, ապա Հայաստանի եւ նրա քաղաքացիների համար այն ամէնը, ինչ տեղի ունեցաւ Աղթամար կղզում, վիրաւորական եւ նուաստացուցիչ էր: Չէ, ոչ ոք, իհարկէ, այս մասին չէր խօսի, եթէ Թուրքիայի դրօշով եւ Աթաթուրքի նկարով զարդարուած 10-րդ դարի հայկական եկեղեցու բացման արարողութեանը ներկայ չգտնուէր Հայաստանի պաշտօնական պատուիրակութիւնը:*

*Եւ խօսքը միայն զարդարանքի մասին չէ: Յայտնի է, որ մինչ բացումը Հայաստանում արդէն որոշակի խնդիրներ ունէին՝ վերանորոգուած եկեղեցու հետ կապուած, եւ այդ էր պատճառը, որ պետական պատուիրակութեան մակարդակն իջեցուեց: Այն ժամանակ դրա համար հիմք էր հանդիսացել միայն այն, որ եկեղեցու գմբէթին խաչ չի տեղադրուել:*

*Այս մասին խօսել է նաեւ ՀՀ ԱԳ նախարար Վարդան Օսկանեանը՝ յայտարարելով. «Եթէ խաչը տեղադրուէր Աղթամարի Սուրբ Խաչ եկեղեցու գմբէթին, հայկական պատուիրակութիւնն աւելի ներկայացուցչական կը լինէր, կը մասնակցէր նաեւ Հայ Առաքելական Եկեղեցին՝ իր կաթողիկոսութիւններով: Քանի որ Թուրքիան մերժել էր խաչը տեղադրել, մեր պատուիրակութեան կազմն աւելի քան համեստ էր»: Սակայն եթէ մինչ բացման արարողութիւնը Հայաստանը կարող էր խնդիրներ ունենալ միայն խաչի բացակայութեան հետ կապուած, ապա*



*բացման արարողութիւնը ցոյց տուեց, որ դա ընդամէնը սկիզբն էր:*

*Արարողութեան ժամանակ նախ հայկական պատուիրակութիւնը զրկուած է եղել խօսքի իրաւունքից, Թուրքական պատուիրակութեան անդամները իրենց ելոյթներում եկեղեցին կոչել են ոչ թէ Սուրբ Խաչ, այլ «Աքդամար», ինչը Թուրքերէն նշանակում է «սպիտակ երակ», եւ եթէ սրանց միացնում ես նաեւ խաչի բացակայութիւնը, եկեղեցու աշխարհիկ մշակութային օջախ դառնալը, Աթաթուրքի նկարով եւ Թուրքիայի դրօշով պատուած լինելը, ապա հարց է առաջանում՝ ի՞նչ գործ ունէր այնտեղ Հայաստանի պաշտօնական պատուիրակութիւնը՝ թէկուզ ամենացածր մակարդակով: Սակայն ամբողջ խնդիրն այն է, որ մեր տեղեկութիւններով՝ Հայաստանի համապատասխան մարմինները նախապէս չեն պարզել, թէ ինչ ծրագիր է ունենալու այն միջոցառումը, որին ներկայ գտնուելու համար երկրից պաշտօնական պատուիրա-*

*Շար.ը էջ 18*

## ԱՂԹԱՄԱՐԻ ՍՈՒՐԲ ԽԱՉԻ ՇՈՒՐՋ ԿՐՔԵՐԸ ԹԵԺԱՆՈՒՄ ԵՆ

*ՆԻԱ ՅԱԿՈԲԵԱՆ*

*Մարտ 30-ին «Ուրբաթ» ակումբում հրաւիրուած ասուլիսի հիւրերն էին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի տեղեկատուական համակարգի տնօրէն տէր Վահրամ քահանայ Մելիքեանը եւ Թուրքագէտ Յակոբ Չաքրեանը: Նրանք խօսեցին Աղթամարի Սուրբ Խաչ եկեղեցու բացման արարողութեան մասին եւ մեկնաբանեցին հայաստանեան պատուիրակութեան այցը Թուրքիա:*

*Յիշեցնենք, որ Ամենայն հայոց կաթողիկոս Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ.ն եւ Կիլիկիոյ Ս. Աթոռի կաթողիկոս Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. մերժել էին Սուրբ Խաչի բացմանը մասնակցելու հրաւէրը:*

*Տէր Վահրամի խօսքով, Մայր աթոռի մասնակցութիւնը արարողութեանը բացառուել է, քանի որ նկատի են ունեցել այն հանգամանքը, որ Սուրբ Խաչը չի բացուելու որպէս եկեղեցի, այլ լինելու է թանգարան, այսինքն՝ մշակութային օջախ, ինչպէս նաեւ այնտեղ չի լինելու եկեղեցական արարողութիւն: «Մայր Աթոռ Սուրբ Էջմիածինը Թուրքիայի իշխանութիւնների կողմից եկեղեցու վերանորոգումը չի որակում որպէս դրական քայլ: Վիրաւորական է, երբ 10-րդ դարում կառուցուած Սուրբ Խաչը այլեւս գործելու է իբրեւ աշխարհիկ հաստատութիւն: Այն մինչ 1915թ. ծառայել է որպէս սրբավայր, պատմաճարտարապետական արժէք ունեցող շինութիւն, ուստի չի կարող դադարել իր առաքելութիւնն իրականացնելուց»,- յայտնեց Մայր Աթոռի տեղեկատուական համակարգի ղեկավարը: Ինչ վերաբերում է ՀՀ մշակոյթի նախարարութեան պատուիրակութեան մասնակցութեանը, տէր Վահրամի ձեւակերպմամբ. «Դա կարեւոր է այն առումով, որ մշտապէս խօսւում է երկու ժողովուրդների յարաբերութիւնների վերսկսման մասին: Իսկ մեր տեսանկիւնից՝ այս ամէնը մեր քրիստոնէական զգացումների դէմ ուղղուած գործողութիւն է»:*

*Յակոբ Չաքրեանն էլ փաստեց, որ Թուրքիայի պատմութեան մէջ առաջին անգամ է պետական միջոցներով հայկական եկեղեցի վերանորոգւում: Նա կարծում է, որ թանգարան դառնալով՝ եկեղեցին գոնէ կը փրկուի հետագայ աւերումից. «Ես երբեք էլ չեմ մտածել, թէ Սուրբ Խաչը կը բացուի որպէս եկեղեցի: Մենք պէտք է շնորհակալ լինենք ոչ թէ եկեղեցին վերանորոգելու, այլ Թուրքիայի հրաւէրի համար: Կարծում եմ՝ ճիշդ է, որ ՀՀ մշակոյթի նախարարն անձամբ չի գնացել, իսկ հրաւէրը մերժելը Թուրքերի կողմից աւելորդ անգամ կը շահարկուէր»: Պրն Չաքրեանը, սակայն, իր զարմանքը յայտնեց, որ Պոլսոյ Հայոց Պատրիարքը երգել է Թուրքական հիմնը. «Հոգեւոր առաջնորդը չպէտք է հիմն երգի: Թուրքիայի քաղաքացի լինելը բոլորովին էլ չի պարտադրում դա: Նա ֆուտբոլի թիմի խաղացող չէ, անգամ նոյն թիմի բոլոր ֆուտբոլիստները չէ, որ հիմնը երգում են»: Հ. Չաքրեանը յոյս ունի, որ Սուրբ Խաչի խաչը դեռ կը տեղադրուի՝ «այլապէս ինչո՞ւ պիտի պատրաստուէր»:*

*Մայիս 30-ին նոյն առիթով ասուլիս էր հրաւիրել նաեւ ՍԴՀԿ «Սարգիս Տխրունի» Ուսանողական Միութիւնը եւ հանդէս եկել մշակոյթի նախարարութեանը դատապարտող յայտարարութեամբ: Միութեան նախագահ Նարեկ Գալստեանն «Առաւօտին» յայտնեց. «Մեր պատուիրակութիւնը ստորացուցիչ կերպով գնաց մասնակցելու Աթաթուրքի նկարներով պատուած հայկական եկեղեցու բացմանը: Թուրքիա մեկնած պատուիրակութիւնն արդեօք ամօթ չի՞ զգում, որ հայ եկեղեցին պղծուել է իրենց աչքի առաջ: Պահանջում ենք, որ Յասմիկ Պօղոսեանը ներողութիւն խնդրի մշակոյթի նախարարութեան կողմից ուղարկուած պատուիրակութեան՝ Թուրքիա մեկնելու համար: Իսկ եթէ չխնդրի, կը պահանջենք նրա հրաժարականը»:*

*ԱԳ նախարար Վարդան Օսկանեանն էլ յայտարարել է, որ սխալ կը լինէր, եթէ հայաստանեան պատուիրակութիւնը չմասնակցէր Սուրբ Խաչ եկեղեցու բացմանը. «Ինչ-որ մի ներկայութիւն այնտեղ պէտք է ունենայինք՝ աշխարհին ցոյց տալու համար, որ սա հայկական է, որպէսզի տուրք չտայինք Թրքական պրոպագանդային»: Իսկ Հայաստանի պաշտօնական դիրքորոշման մասին նախարարը չի ցանկացել խօսել, ասելով, որ այն արդէն արտայայտուել է ԱԳՆ մամուլի խօսնակի կողմից:*


ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹԻՒՆԸ ԱՆՀՐԱԺԵՇՏ Է

PPO Saver, EPO, PPO Share 2500 & 3500, PPO Share 1500, PPO Share 1000, Basic PPO 1000 & 5000*, Also PPO Share 5000, BLUE CROSS and HMO PLANS, PPO Share 500

Now Available RightPlan PPO 40

Featuring PlanScape®
Keeping Californians Covered...

The Power of Blue SM
Health coverage for every household member and every household budget.
Affordable plans for the whole family.

Blue Cross of California and BC Life & Health Insurance Company are independent licensees of the Blue Cross Association. The Blue Cross name and symbol are registered service marks of the Blue Cross Association.

1975-2005
30th ANNIVERSARY
A.B.A. INSURANCE SERVICES



BEDROS SIAMANTO
MARONIAN
818-500-9585 805 East Broadway, Glendale, CA 91205
ONE EIGHT HUNDRED FOUR "HAI-TAD"
AUTHORIZED AGENT FOR BLUE CROSS OF CALIFORNIA LIC. # 0494056
Blue Cross of California

## ՔԱՂԱՔԱԿԱՆ

# ԽՕՍԻԼ ԻՐԱՆԻ ԵՒ ՍՈՒՐԻՈՅ ՀԵՏ

*ՅԱՐՈՒԹԻՒՆ ՍԱՂՐԵԱՆ*

*Ամերիկայի իրաքեան արկածախնդրութիւնը, զոր ներկայիս կարելի է նկարագրել տեսակ մը ճահիճ, կամ աւազախրում, արդէն իսկ բոլորած է իր 4րդ տարին եւ մտած 5րդի մէջ, աւելի երկար քան համաշխարհային 2րդ պատերազմի տեւողութիւնը: Մտահոգիչը, չըսելու համար ողբերգականը հոն է որ փապուղիի, թունելի ծայրը չերեւիր եւ լուծման ոչ թէ կարելիութիւնը, այլ փնտռտուքներն ալ խարխափումներէն անդին չեն թուիր երթալ: Տակաւին մինչեւ քանի մը ամիսներ առաջ, Պուշ կը պնդէր «ընթացքը շարունակել» մինչեւ յաղթանակ: Հարցը տեղ մը հասաւ որ թէ ընթացքը, եւ թէ մանաւանդ յուսացուած յաղթանակը մշուշատուեցան, եւ Ամերիկայի հանրային կարծիքը, մանաւանդ 2006 թուականի Նոյեմբերի ընտրութիւններէն աստին գրեթէ պարտադրեց Պուշին «ընթացքը փոխել» եւ լուծման նոր մարտավարութիւն մը մշակել:*

*Այս զարգացումները երբեք հաճելի եւ ընդունելի չեղան Պուշի իշխանութեան, մանաւանդ անոր կարծր եւ ամէն գնով պատերազմը «շահիլ» ուզողներն, յատկապէս փոխ նախագահ եւ պատերազմական նախարար Տանըլտ Ռըմզֆելտի: Միակ փոփոխութիւնը որ Պուշ կատարեց, Ռըմզֆելտը ճամբելն էր, եւ անոր փոխարինումը Ռոպըրթ Կէյթսի կողմէ: Երկրորդ բան մըն ալ ըրաւ Պուշ: Երկու կուսակցութիւններէ եւ նախկին քաղաքական դէմքերէ կազմուած յանձնախումբ մը նշանակեց, Պէյքըրի եւ Համիլթընի կողմէ ղեկավարուող, որ լուրջ քննարկումներէ ետք, 70ի հասնող թելադրութիւններ բանաձեւեց Պուշին: Զարմանալին եւ անշուշտ հետաքրքրականը այն էր որ իր իսկ ստեղծած յանձնախումբին առաջարկած թելադրութիւնները Պուշ անտեսեց, եւ շարունակելով ցարդ հետեւած իր «ընթացքը», յաւելեալ 28 հազար զինուոր որոշեց ղրկել իրաքեան ռազմադաշտ, ակնկալելով որ այս յաւելեալ զօրքը, նաեւ նոր զինուորական ղեկավարի մը նշանակումը, ի նպաստ Ամերիկայի նոր յաջողութիւն պիտի արձանագրէր: Իրաքեան յանձնախումբի գլխաւոր առաջարկութիւններէն մէկը կը հանդիսանար ուղղակի շփում եւ խորհրդակցութիւն Իրանի եւ Սուրիոյ հետ, երկու երկիրներն ալ սահմանակից են Իրաքի եւ որոնք ուղղակի կ՚օժանդակեն, մարդով եւ պատերազմական գործիքներով իրաքեան ընդդիմութեան: Իրան ուղղակի Իրաքի շիի մեծամասնութեան անմիջական թիկունք կանգնողն է, իսկ Սուրիան, կամաւորներ կը ղրկէ սիւննիներու եւ Ալ-Քայիտայի կողքին կռուելու համար:*

### *ՊՈՒՇԻ ԻՇԽԱՆՈՒԹԻՒՆԸ ԵՒ ԻՐԱՆ ԵՒ ՍՈՒՐԻԱ*

*Տակաւին վերջերս միայն, Պուշի իշխանութիւնը ակամայ իր համաձայնութիւնը կը յայտնէր Իրանի եւ Սուրիոյ հետ բանակցութեան մտնելու, Իրաքի հանդարտեցման ենթահող մը գտնելու համար: Առաջին անգամ ըլլալով, Պուշի գործակից Քոնտոլիզա Ռայս կը յայտարարէր որ «Իրաքի դրացիները յատուկ դեր մը ունին խաղալու» մինչդեռ երկար ժամանակ կը պնդէր թէ «Իրանի հետ երկխօսութիւնը կեղեքում կը նշանակէր (Extortion): Գլխաւոր հարցը հոն է որ ինչի՞ մասին տեղի պիտի ունենան բանակցութիւնները այս երկու երկիրներու հետ որոնց հասցէին նետուած է ահաբեկիչ երկիրներ հանդիսանալու ամբաստանութիւնը: Ինչպէս քիչ վերը ըսուեցաւ, բացի իր հիւլէական հետապնդումներէն, Իրան Իրաքի շիիներուն կը տրամադրէր ընտրանի կռուողներ, ամերիկեան զօրքի դէմ զէնքեր, եւ կը ղեկավարէր «Հըզպալլա» կազմակերպութիւնը, Լիբանանի մէջ, եւ «Համաս»ը Պաղեստինի մէջ, երկուքն ալ Իսրայէլի դէմ: Իսկ Սուրիան երկար ատենէ արդէն կ՚ամբաստանուէր իբրեւ ահաբեկիչ երկիր:*

*Ընդհանուրին կարծիքով, իրաքեան պատերազմը զինուորական յաղթանակ չի կրնար արձանագրել: Ուրեմն, Իրանի եւ Սուրիոյ հետ փորձուելիքը դիւանագիտական շփում է, եւ ըստ ամերիկացի դէտերուն, կարելի է զայն փորձել զինուորականի կողքին: Արդ թէ դիւանագիտութիւնը եւ թէ զինուորական տուեալը միատեղ հետապնդելու առաջարկ մըն է եղածը, տրուած ըլլալով որ ցարդ Պուշ կը հետապնդէր միայն զինուորական լուծում մը: Առաջարկներ կան հիմա որ նոյնիսկ զինուորական լուծումը, որ այժմ անկարելի կը*

*Շար.ը էջ 19*

# «ԹՈՒՐՔԻԱՅԻ ՆՄԱՆ ԵՐԿՐՆԵՐԸ ՆԱԽ ՊԷՏՔ Է ԼՈՒԾԵՆ ՍԵՓԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ»

*Պատրիկ Պուավրը դ՚Արւորը ֆրանսիացի յայտնի լրագրող է եւ գրող: 1987 թուականից TF1 հեռուստաընկերութեան երեկոյեան լրատուութեան գլխաւոր հաղորդավարն է, 1989 թուականից՝ տեղեկատուական տնօրէնը: Նա Ֆրանսիայի ղեկավար շրջանակների «Դար» ակումբի անդամ է: «Ազգի» թղթակից Արմին Ազիզեանին տուած հարցազրոյցում նա խօսում է Ֆրանսիայում Հայաստանի տարուայ, լրագրութեան, Հրանտ Տինքի սպանութեան եւ այլ հարցերի մասին:*

-Ներկայումս Ֆրանսիայում անցկացւում է Յայաստանի տարի: Ձեր կարծիքով, ի՞նչ բովանդակութիւն պէտք է ունենայ այդ իրադարձութիւնը:

*- Անշուշտ, դա պիտի լինի յիշողութեան պարտք: Հարկաւոր է կրկնել, թէ հայերին եւ նրանց երկրին ինչ պատահեց 1915 թ. եւ թէ ինչ է դարձել Հայաստանն այսօր: Այլ կերպ ասած, անհրաժեշտ է պատմական եւ աշխարհագրական վերայցելութիւն:*

- Թերեւս համաձայն էք, որ ֆրանսիական լրատուամիջոցները մեծ դեր ունեն Յայաստանի տարուայ լուսաբանման գործում, բայց առայժմ



*լրագրող Պատրիկ Պուավրը դ՚Արւոր*

որոշակիօրէն թերանում են:

*- Բանն այն է, որ այսօր (ֆրանսիական) լրատուամիջոցները զբաղուած են գլխաւորապէս նախագահական ընտրարշաւով եւ քիչ ժամանակ ունեն Հայաստանի տարուայ համար: Կը տեսնէք, որ ընտրութիւններից յետոյ վիճակը կը լաւանայ: Բայց կարեւորը ֆրանս-*

*Շար.ը էջ 19*




**ՍԴՀԿ 120-ԱՄԵԱԿ**

# ՊԱԹՈՆ ՌՈՒԺ ՍԴՀԿ 120-ԱՄԵԱԿԻ ՊԱՏՈՒՈՅ ԳԻՐԵՐՈՒ ՅԱՆՁՆՈՒՄ

*Լուիզիանա նահանգի Պաթոն Ռուժի քաղաքի Հնչակեան Կուսակցութեան:*

*Ժիրայր Մուրատ մասնաճիւղի վարչութեան կազմակերպութեամբ, Կիրակի, Մարտի 25ին, 2007, տեղի ունեցաւ ընկերա-ընտանեկան ճաշկերոյթ մը ի պատիւ Գալիֆորնիայէն ժամանած պաշտօնական պատուիրակութեան:*

*Ճաշկերոյթէն ետք տեղի ունեցաւ հանդիսութիւն, որուն ներկայ էին Պաթոն Ռուժի մասնաճիւղի բոլոր անդամներն ու իրենց ընտանեկան պարագաները: Հանդիսութեան իրենց մասնակցութիւնը կը բերէին նաեւ Արեւմտեան Ամերիկայի Ս.Դ.Հ.Կ.ի պատուիրակութիւնը, գլխաւորութեամբ Վարիչ Մարմնի ատենապետ՝ Ընկ. Գաբրիէլ Մոլոյեանի:*

*Մասնաճիւղի վարչութեան ժրաջան ատենապետ՝ Ընկ. Վազգէն Գալթագճեան իր բացման խօսքին մէջ ողջունեց ներկաներն ու յատկապէս Գալիֆորնիայէն ժամանած պատասխանատու ընկերները: Ընկ. Վ. Գալթագճեան համառօտ զեկոյց մը տալով յայտնեց որ մասնաճիւղը, անցնող տարեշրջանին գաղութէն ներս խիստ օգտաշատ գործունէութիւն ծաւալած է մասնաւորաբար նիւթապէս օգտակար հանդիսացած է եւ վարկեր ապահոված Քաթարինայի աղէտէն վնասներու ենթարկուած մեր հայրենակիցներուն: Այս շրջանին իրականութիւն դարձած է հայութեան երազը եւ ներկայիս գաղութը սեփականատէրն է եկեղեցիի մը ու զայն անուանած Ս. Կարապետ: Եկեղեցին օժտուած է նաեւ յարակից սրահով մը: Այժմ իրականութիւն դարձած է նաեւ հայկական գերեզմանատուն մը ունենալու գաղափարն ալ եւ եկեղեցւոյ սահմանամերձ հողաշերտ ալ գնելով, յատուկ արտօնագրով զայն վերածած են գերեզմանատան, որ կը կոչուի «Սուրբ Կարապետ Հայոց Գերեզմանատուն»:*

*Ընկ. Վ. Գալթագճեանի զեկոյցէն յայտնի եղաւ որ շրջանի մասնաճիւղը մօտէն կապեր հաստատած է Լուիզիանա նահանգի պետական եւ քաղաքական կարգ մը ակնառու անձնաւորութիւններու հետ, ապահովելու համար անոնց ներդրումը հայ դատի հետապնդման եւ Հայոց Ցեղասպանութեան ճանաչման գծով:*



Ս.Դ.Հ.Կ. Կեդրոնական Վարչութեան Պատուոյ Գիր ստացողները՝ Պօղոս Մութաֆեան, Սերոբ Գալթագճեան, Ժիրայր Կիւլիւմեան (յետ մահու) եւ Սարգիս Գալթագճեան ընկերներ Վարդան Քէօրողլեանի եւ Գաբրիէլ Մոլոյեան



Պաթոն Ռուժ քաղաքի կուսակցական խաւաքի մասնակիցներէն մաս մը

*Արեւմտեան Ամերիկայի Ս.Դ.Հ.Կ. Վարիչ Մարմնի անդամ եւ Արեւմտեան Ամերիկայի Հ.Մ.Մ.ի ատենապետ Ընկ. Վարդան Քէօրողլեան խօսք առնելով ներկաներուն համառօտ կերպով ծանօթացուց մեր մարզական, մշակութային, երիտասարդական, մամուլի եւ այլ կառոյցներու գործունէութեան մասին:*

*Ս.Դ. Հնչակեան Կուսակցութեան Արեւմտեան Ամերիկայի Վարիչ Մարմնի ատենապետ՝ Ընկ. Գաբրիէլ Մոլոյեան իր ելոյթին մէջ բարձր գնահատեց այն օգտաշատ ծառայութիւններն ու իրագործումները, զորս կատարած է շրջանի մասնաճիւղը, գլխաւորութեամբ իր երիտասարդ ու տեսիլք ունեցող ատենապետին՝ Ընկ. Վազգէն Գալթաճզեանին: Նշեց նաեւ որ այս վերջինը անցեալ տարի արժանացած էր Ամենայն Հայոց Կաթողիկոս Ն.Ս.Օ.Տ.ՏՏ Գարեգին Բ. Վեհափառ Հայրապետի սրբատառ կոնդակին եւ Ս. Գրիգոր Լուսաւորիչ շքանշանին:*

*Այնուհետեւ Ընկ. Գ. Մոլոյեան Հնչակեան Կուսակցութեան 120-ամեակին առիթով՝ Ս.Դ.Հ.Կ. Կեդրոնական Վարչութեան «Պատւոյ Գիր»երը յանձնեց ընկերներ Պօղոս Մութաֆեանին, Սերոբ Գալթագճեանին, Ժիրայր Կիւլիւմեանին (յետ մահու) եւ Սարգիս Գալթագճեանին, առ ի գնահատութիւն իրենց գաղափարանուէր եւ հայրենասիրական ծառայութիւններուն, ինչպէս նաեւ մեր մարզական ու մշակութային կառոյցներուն ցուցաբերած նիւթաբարոյական քաջալերանքին համար:*

*Ընկ. Պօղոս Մութաֆեան խօսք առնելով իր շնորհակալութիւնները յայտնեց Կեդրոնական Վարչութեան, իրեն ընծայուած այս մեծ պատիւին համար: Իսկ Ընկ. Սարգիս Գալթագճեան խանդավառուած օրուան մթնոլորտէն իր եւ իր Տիկնոջ Նորայրին անունով հազար տոլար նուիրեց Նոր Սերունդ Մշակութային Միութեան:*

*Սոյն պատմական հաւաքոյթը աւարտեցաւ ներկաներուն կողմէ միասնաբար երգուած «Տուր Ձեռքդ Ընկեր» կուսակցական խմբերգով:*

# ՆՈՐ ՍԵՐՈՒՆԴ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՄԻՈՒԹԵԱՆ ԳԱՐՆԱՆԱՅԻՆ ՃԱՇԿԵՐՈՅԹ-ՊԱՐԱՆՀԱՆԴԷՍԸ 20 ՀԱԶԱՐ ՏՈԼԱՐ ՀԱՆԳԱՆԱԿՈՒԱԾ Ի ՆՊԱՍՏ ՍԴՀԿ-Ի ԿՈՒՍԱԿՑԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐՈՒՆ

*Լուիզիանայի փոքրաթիւ հայ գաղութին համար յիշատակելի երեկոյ մը հանդիսացաւ Մարտ 24, 2007: Արդարեւ, Պաթոն Ռուժ քաղաքի Սէյնթ Լուկ Եպիսկոպոսական Եկեղեցւոյ ընդարձակ սրահը՝ ժամադրավայրը հանդիսացած էր տարբեր շրջաններէն եւ Նիւ Օրլիանզէն ժամանած հայորդիներու: Ներկաներուն մէջ կային նաեւ Գալիֆորնիայէն եկած 12 հոգինոց պատուիրակութիւն մը, որուն մաս կը կազմէին ՍԴՀԿ-Արեւմտեան Ամերիկայի Վարիչ Մարմնի ատենապետ՝ Գաբրիէլ Մոլոյեան, Գալիֆորնիոյ Հ.Մ.Մ.ի ատենապետ՝ Վարդան Քէօրողլեան, ինչպէս նաեւ պատասխանատուներ ՆՍՄՄ-էն եւ այլ մասնաճիւղերէն:*

*Ճաշկերոյթի կազմակերպիչ յանձնախումբի անունով ելոյթ ունեցաւ շրջանի պատասխանատու ղեկավարներէն՝ Վազգէն Գալթագճեան: Ան իր գոհունակութիւնը յայտնեց որ Քաթարինայի մահասփիւռ աղէտէն վերապրած հայերն այսօր վերագտած են իրենց նախկին անդորր կեանքը եւ միասնաբար այս յարկէն ներս համախմբուած կը տօնեն գարնանամուտը: Օրուան հանդիսավարը ջերմօրէն ողջունեց ներկայութիւնը Գալիֆորնիայէն ժամանած պատուիրակութեան, ինչպէս նաեւ Լուիզիանա նահանգի երեսփոխան եւ հայ ժողովուրդի մեծ բարեկամ Ռօն Թրահանը, որ յառաջիկայ ընտրութիւններուն իր թեկնածութիւնը դրած է երեսփոխանական ժողովի նախագահութեան համար:*

*Այնուհետեւ երեկոն խանդավառեց Լոս Անճելոսէն ժամանած Էսթրատային երգերու երիտասարդ եւ շնորհալի մեկնաբան Հրաչ Պողարեանը: Ան իր հայկական, արաբական եւ միջազգային երգերու կատարումով կրցաւ ուրախ մթնոլորտ մը ստեղծել:*

*Շար.ը էջ 8*



## ԳԱՂՈՒԹԱՅԻՆ

### ԼԱՐՔ ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ԸՆԿԵՐԱԿՑՈՒԹԻՒՆ

# «ՄԱՆՍՈՒՐԵԱՆԱԿԱՆ ԵՌԱՊԱՏԿԵՐ»

*ԱՆԳԻՆԷ ՄՈՒՐԱՏԵԱՆ*

Բարձր հովանաւորութեամբ Լոս Անճելըսի Հայաստանի Հանրապետութեան Գլխաւոր Հիւպատոսութեան, Լարք Երաժշտանոցի վկայեալ եւ աւագ սաները կազմակերպած են երեք աննախընթաց համերգներ, յիշատակելով 1915 Թուականի ցեղասպանութեան 92-րդ տարելիցը:

«Մանսուրեանական Եռապատկեր» խորագրուած համերգային այս եռամաս համերգաշար-փառատօնը պիտի ներկայացնէ ժամանակակից երգահան Տիգրան Մանսուրեանի ձայնային, սենեկային, եւ նուագախմբային ստեղծագործութիւնները: Համերգներուն ներկայ պիտի ըլլայ նաեւ հեղինակը:

Ապրիլ 20-ի համերգը պիտի ներկայացնէ Մանսուրեանի ձայնային գործերը, մասնաւորաբար վերջին տասնամեակի հայ ստեղծագործական աւանդին ամենանշանակալից ձեռքբերումներէն «Արուեստ Քերթութեան» խորագրուած խմբերգային կոնցերտը, որ յօրինուած է Եղիշէ Չարենցի խօսքերուն վրայ:

Ապրիլ 23-ի համերգին պիտի ներկայացուին Մանսուրեանի սենեկային երաժշտութենէն նմուշներ: Այս համերգին իր մասնակցութիւնը պիտի բերէ միջազգային ճանաչում վայելող ալթահար (violist) Քիմ Քաշքաշեան, որ մասնաւորաբար հրաւիրուած է Նիւ Եորքէն մասնակցելու համերգ-փառատօնին: Տիկին Քաշքաշեանին կը միանայ նաեւ հեղինակը՝ կատարելու համար 1967-ին Ռուսիոյ մէջ երիտասարդ կոմպոզիտորներու համամիութենական մրցոյթին առաջին մրցանակ շահած «Զոր Հայրէններ» անուանուած գործը:

Առաջին երկու համերգները տեղի կ'ունենան Colburn School of Music-ի Zipper շքեղ համերգասրահին մէջ:

Եզրափակիչ երրորդ համերգը, որ տեղի պիտի ունենայ Ապրիլ 25-ին, Գլենդէյլի Alex Theatre-ին մէջ, կը ներկայացնէ Մանսուրեանի լայն կտաւի գործերէն նմուշներ: Այս համերգին «Դիլիջան» Սենեկային Երաժշտութեան Համերգաշարի գեղարուեստական ղեկավար՝ ջութակահար Մովսէս Պօղոսեան կը մենակատարէ հեղինակի ջութակի եւ լարային նուագախումբի համար գրուած մրցանուագը (concerto), որուն վերնագիրն է՝ «Զորս Խոհական Երգեր»: Համերգի երկրորդ բաժնով Տիկին Քաշքաշեան կը մեկնաբանէ հեղինակի 2004-ին Գրէմիի թեկնածութեան դափնեկիր Ալթի մրցանուագը, դարձեալ լարային նուագախումբի ընկերակցութեամբ, ղեկավարութեամբ Մաէսթրօ Վաչէ Պարսումեանի:

Լարք Երաժշտանոցի ընտանիքը բծախնդիր յանձնառութեամբ լծուած է «Մանսուրեանական Եռապատկեր» համերգ-փառատօնի կազմակերպչական աշխատանքներուն: Կազմակերպողներու անկեղծ փափաքն է Լոս Անջելեսի մէջ հնչեցնել հայութեան պատիւն ու պարծանքը եղող, ժամանակակից հայ երաժշտութեան բարձր առաքեալ Տիգրան Մանսուրեանի ստեղծագործութիւնները, որպէսզի հայ նոր սերունդն ալ որ կը մեծնայ աշխարհի այս ափերուն, հաղորդակից դառնայ հայ երաժշտական լեզուամտածողութեան նորագոյն արտայայտչակերպերուն եւ ձեռքբերումներուն: Մանսուրեան իր պրիսմակէն կը դիտէ ցեղասպանութենէն վերապրող ժողովուրդի մը հոգեմտաւոր խառնուածքը, ու իր գործին մէջ հայութեան ոգին կը ցոլանայ իր ամենաբարձր արտայայտութեան մէջ, որ լսելի ու իմանալի է ժամանակակից քաղաքակիրթ մարդուն:

Հրաւիրուած է արուեստասէր հասարակութիւնը մասնակից դառնալու այս աննախընթաց համերգային շարքին:

Համերգաշարի մասին յաւելեալ տեղեկութիւններու կամ տոմսերու ապհովման համար դիմել Լարքի գրասենեակ 818-500-9997 հեռախօսահամարով, կամ անձամբ այցելելով Լարք՝ 543 Arden Avenue, Glendale:

# Ս. ՅԱՐՈՒԹԵԱՆ ԱՒԵՏԻՍԸ

*ԴՈԿՏ. Տ. ԶԱՒԷՆ Ա. ՔՀՆՑ. ԱՐԶՈՒՄԱՆԵԱՆ*

Յարութեան կենսատու շունչը կը բուրէ ամէնուրէք ուր բնութիւնը ծաղկած, դաշտերը կանաչ, կենդանութեան աւետիսն է որ կը սփռեն չորս կողմ: Գարուն է, անցած են ձմեռնային սառնամանիքն ու ցուրտը, արեւն է շողուն, տաք ու կենսատու: Քրիստոսի եկեղեցին նոյն ջերմութեամբ կը պարգեւէ աշխարհին կեանքն ու վերածնունդը Քրիստոսի Ս. Յարութեան ճշմարիտ վկայութեամբ, աւարտելէ ետք քառասնօրեայ պահքն ու լրացնելէ ետք Աւագ Շաբթուան վերջին օրերու տրտմութիւնն ու մահաբեր խաչելութիւնը Քրիստոսի:

Քրիստոսի Յարութեան հաւատքը հիմնուեցաւ «Թափուր գերեզման»ին վրայ, ուր Փրկիչը, իր չարչարանքներէն ու խաչելութենէն ետք թաղուած էր որպէս մարդ, եւ սակայն անկէ յարութիւն առած որպէս Աստուած, անցնելէ ետք մարդկային բոլոր ոլորտներէն: Թափուր գերեզմանը վկայութիւնը եղաւ Իր իսկական յարութեան եւ Յարուցեալ Փրկչի մշտնջենական ներկայութեան Իր Ս. Եկեղեցիէն ներս՝ Ս. Հոգիի մշտանորոգ զօրութեամբ:

Խաչը մնաց որպէս գրաւական ու գերեզմանը՝ որպէս դատակնիք: Առաջինը եղաւ պաշտամունքի նշանը, եւ երկրորդը՝ Խաչին վկայարանը: Քրիստոս իսկապէս յարութիւն առած էր ըստ Աւետարաններուն, ու Յարուցեալը որպէս Տէր շրջած էր քառասուն օրեր եւս հաստատելու համար իր առաքեալներու մէջ հաւատքն ու զօրութիւնը՝ շարունակելու Իր գործը, այս անգամ Իր խորհրդաւոր մարմնին՝ Եկեղեցիին միջոցաւ:

Հարցը այն չէ թէ ի՛նչպէս Ան յարութիւն առաւ, եւ կամ թէ կնքուած գերեզմանը ի՛նչպէս բացուեցաւ: Հարցը պարզօրէն գերեզմանին թափուր գտնուած ըլլալն էր, որուն վրայ հաստատուեցաւ առաջիններուն հաւատքն ու յետիններուն համոզումը՝ թէ Քրիստոս իսկապէս յարութիւն առաւ: Իր խոստումներուն հետեւանքն եղան թէ՛ Իր յարութիւնը եւ թէ՛ անկէ ետք Ս. Հոգիի գալուստը, որոնք, երկուքն ի մի, կնքեցին Աստուծոյ ծրագիրը մարդոց նկատմամբ, հաստատեցին հաւատքն ու ճշմարիտ կեանքը Քրիստոսի հետեւորդներուն:

Ս. Յարութեան աւետիսով մահէն անդին կեանքն է որ հռչակուեցաւ, այսինքն, մարդկային կեանքի տեւողութեան ընթացքին Աստուծոյ Թագաւորութիւնն է որ երկինքէն երկիր իջաւ ու մարդիկ ի Քրիստոս երկնաքաղաքացիները եղան անոր: Մարդիկ, հաւատալով Յարութեան կենսատու զօրութեան, ճաշակեցին ու կը ճաշակեն Թագաւորութեան բարիքները մինչ կ'ապրին այս աշխարհի վրայ: «Եկեսցէ արքայութիւն քո» այս կրնայ նշանակել մեզի համար, եւ ո՛չ թէ սպասել ապարդիւն ու ձեռնածալ, որ մահէն ետք մենք ալ ժառանգենք երկնքի Արքայութիւնը, առանց մասն ու բաժինը ըլլալու անոր՝ երկրի վրայ, մեր գործերով ու յանձնառութիւններով:

Հրաշափառ Ս. Յարութեամբ կեանք կը ստանանք այսօր, յոյս կը սփռուի ամէն կողմ՝ հաւատքի զօրութեամբ: Ապագան աւելի պայծառ կը դառնայ երբ մարդիկ ներկայի դժուարութեանց մէջ մխրճուած՝ չփոթի մատնուած են ու ազգեր իրար դէմ ելած: Քրիստոսի յարութեամբ երկինքը կրկին կը բանայ իր դռները, եւ երկիրը կը դառնայ պատուանդանը երկինքի, ուր քրիստոնեաներ Յարուցեալ Տիրոջ ներկայութիւնը փառաբանելով, խաչն ու թափուր գերեզմանը իրենց առօրեայ կեանքին բաժինը կը դարձնեն: Իցիւ թէ ազգեր ու ժողովուրդներ Ս. Զատիկի այս հոգեպարար օրերուն յիշեն Տիրոջ խաչն ու գերեզմանը, ու անոնցմով հարստացած շնորհք բերեն աշխարհին, կատարելով Աստուծոյ կամքը, եւ ո՛չ թէ իրենց կամքը:

# «ՆՈՐ ՀԱՅԱՍՏԱՆ» ՕՐԱԹԵՐԹԻ 15 ԱՄԵԱԿԻ ՃԱՇԿԵՐՈՅԹ ՊԱՐԱՀԱՆԴԷՍ

Սոյն հանդիսութիւնը տեղի ունեցաւ Կիրակի Մարտ 25ին Verdugo Hills County Club-ի մէջ, նախագահութեամբ Տօքթ. Ալպէր Գարամանուկեանի: Հանդիսավարներն էին Օննիկ Պայրամեան եւ Կորին Գազանճեան:

Պրն. Վահան Վահանեան՝ «Նոր Հայաստան»ի հրատարակիչն ու գլխաւոր խմբագիրը, իր ելոյթով շնորհակալութիւն յայտնեց բոլոր մասնակիցներուն, բարեկամներուն եւ առեւտրական ծանուցողներուն:

Ելոյթ ունեցան «Նոր Հայաստան»ի բարեկամներ, որոնք իրենց սրտի խօսքերով ու լաւագոյն մաղթանքներով ողջունեցին թերթին 15 ամեակը: Պրն. Փանոս Թիթիզեան խօսք առաւ ՀԲԸՄի կողմէ եւ փոխանցեց Միութեան նախագահ՝ Պրն. Պերճ Սեդրակեանի ողջոյնները:

Պրն. Թորգոմ Փոստաճեան ելոյթ ունեցաւ Ամերիկահայ Գրողներու կողմէ դրուատեց Վահանեանի հայ մամուլի դժուարութիւնները յաղթահարելու հնարամտութիւնը:

Տօքթ. Յարութիւն Սաղրեան, ինչպէս նաեւ Պրն. Յարութ Սասունեան իրենց ողջոյնի գեղեցիկ ելոյթներով շնորհաւորեցին Պրն. Վահանեանը՝ հայ մամուլին նկատմամբ իր ցուցաբերած 15 տարիներու նուիրումին եւ ծառայութեան համար:

Գնահատական խօսքով ելոյթ ունեցաւ նաեւ Պրն. Սարգի Մուրատեան՝ հայկական 24 ժամուայ հեռուստակայանի հիմնադիրը:

Օրուայ նախագահ Տօքթ. Ալպէր Գարամանուկեան իր ելոյթով շնորհաւորեց Պրն. Վահանեանը ու շեշտեց անոր ծառայասէր բնաւորութիւնն ու հոգատար վերաբերմունքը իր շրջապատին նկատմամբ:

Երեկոն խանդավառեցին գաղութիս սիրուած երգիչներ՝ Ատիս Հարմանտեան, Փօլ Պաղտասլեան, Յովիկ Գրիգորեան, Անթուան Պէգճեան, Ռաֆֆի Խարտալեան, ընկերակցութեամբ «Քնար» նուագախումբին:

Հաճելի անակնկալ էր Ամերիկացի երգիչ Տանիէլ Տէքըրի (Daniel Decker) ելոյթը հայերէն երգերով:

Սոյն խանդավառ ու հաճելի միջոցառումը ներկաներուն պարգեւեց վայելքի պահեր:

«Նոր Հայաստան»ին կը մաղթենք յարատեւութիւն եւ փայլուն ապագայ:

# ԳԱՐՆԱՆԱՅԻՆ ՃԱՇԿԵՐՈՅԹ-ՊԱՐԱՆՀԱՆԴԷՍ

*Շարունակուած էջ 7-էն*

Տեղի ունեցաւ վիճակահանութեան տոմսերու արագ սպառում եւ տասնեակ մը բախտաւորներու վիճակուեցան արժէքաւոր նուէրներ: Կատարուեցան նաեւ սրտաբուխ նուիրատուութիւններ: Ձեռնարկէն գոյացած հասոյթը (շուրջ 20 հազար տոլար) տեղական վարչութեան կողմէ փոխանցուեցաւ Գալիֆորնիոյ քոյր կազմակերպութեան:

Ուշ գիշերին ազգային եւ հայրենասիրական երգերու կատարումով խանդավառութիւնը հասաւ իր գագաթնակէտին:

Ներկաները բաժնուեցան սրահէն յիշատակելի երեկոյի մը լաւագոյն տպաւորութիւններով:



# Massis Weekly

Volume 27, No. 11 — Saturday, APRIL 7, 2007


## Armenian Leaders 'Afraid Of Losing Power'

A senior U.S. diplomat criticized Armenia's leaders on Monday for restricting opposition access to electronic media, suggesting that they fear losing power and the resulting material benefits in the upcoming parliamentary elections.

Julie Finley, the U.S. ambassador to the Organization for Security and Cooperation in Europe, was specifically concerned about the record-high prices of political advertising that were set by Armenia's leading broadcasters recently. She also questioned the Armenian authorities' stated commitment to creating a level playing field for all election contenders.

Leaders of the Armenian opposition say the campaign ad rates, varying from 80,000 drams to 130,000 drams ($355) per minute, are part of a broader government effort to bar them from

Continued on page 2

## Over One Hundred Members Of The UK Parliament Recognize The Armenian Genocide

LONDON -- A milestone on the road to Armenian Genocide recognition in the UK was passed, when Ed Davey became the 100th MP (Member of Parliament) in the House of Commons, London, to sign a Motion recognizing the Armenian Genocide. The motion, put forth by Bob Spink MP in December, is called "Early Day Motion 357". The motion calls upon the House to state its belief "that the killing of over a million Armenians in 1915 was an act of genocide, calls upon the UK Government to recognize it as such and believes that it would be in Turkey's long-term interest to do the same."

In a joint press release the Armenia Solidarity group, the British-Armenian All-Party Parliamentary Group, and the Social Democrat Hunchakian Party UK organ "Nor Serounti Tsayn" (Voice of the New Generation) stated that there are over a thousand motions in the House of Commons at this time but this is the only motion opposed to government policy which has accumulated over 100 names. Also, of the motions on international issues, only motions on Burma, Zimbabwe and Darfur have gained more signatures. This shows that the Genocide issue is a high priority amongst MPs, and that they look forward to a possible vote on the issue in the late autumn in response to the activity of our supporting parliamentarians.

Of the signatories, nearly two thirds of eligible Welsh MPs have signed showing the usual strength of feeling in Wales on the issue. The majority of Liberal Democrat MPs have also signed including their Foreign Affairs and Defense Spokesmen. "We are convinced that a vote in the House of Commons on the issue would be won." The statement continued.

Mr. Manual Atamian editor in chief of the SDHP UK organ "Nor Serounti Tsayn" (Voice of the New Generation) stated that S.D.H.P. UK branch was utilizing all its resources to enlist the British Armenian community to engage members of parliament. "We look at the United States, France, and the E.U. and gain inspiration at what our compatriots are accomplishing, and we hope to accomplish similar feats in gaining reaffirmation of the Armenian Genocide." Atamian continued.

Supporters of the motion belief there is significant time to gain the one third signatures of the 665-member parliament to include the resolution onto the Parliamentary agenda. Currently there are 114 British parliamentarians signed onto the motion.

## SD Hunchakian Party Youth Call For Resignation Of Armenia's Culture Minister



YEREVAN -- Social Democrat Hunchakian Party "Sargis Dkhruni" student union urged RA Culture Minister Hasmik Poghosyan to apologize or resign for sending a delegation to Turkey for the so called inauguration of the restored Surb Khatch Church which in essence was degrading to Armenians, the Armenian Church and was a continuation of cultural genocide of Armenians.

The RA Culture Ministry did not take into consideration the stances of both Catholicos of All Armenians Karegin II and Catholicos of Cilicia Aram I who acted accordingly when it was revealed that the renovated church would not function as a church at all, but as a tourist attraction as well as a propaganda tool designed to glorify the so called tolerance of the Turkish government.

The student union is also indignant at the announcement made by Deputy Culture Minister Gagik Gyurjian, that the Armenian government is ready to renovate a Turkish historical monument in Armenia and invite a Turkish delegation to the opening ceremony in response to the rehabilitation of the Armenian cultural treasure Akhtamar in Turkey.

In a statement, the union stated their frustration with the Cultural Ministry of Armenia: "Mr. Gyurjinyan doesn't fully comprehend the significance of the matter. The event at Akhtamar was really a disgrace for all Armenians. The Armenian government played into the hands of Turkish propaganda, no mention was made that the Church was Armenian, the word "Armenian" was replaced by "Anatolian," and the Armenian Patriarch of Constantinople was not allowed to place a cross at the alter, and to top it all, a huge portrait of Ataturk along with dozens of Turkish flags flanked the church premises. And now we announce world-wide how 'kind' the Turks are, invite them to Armenia as a sign of gratitude, hang the picture of Andranik and make the Turks cut ribbons under his picture. This will in turn serve Turkey's interests by raising Turkey's international reputation on the international level.

If the ministry does not issue a formal apology to the Armenian people worldwide or resign the Union will hold a picket opposing the RA Ministry of Culture.

## Three Killed As Gyumri Mayor Survives Assassination Bid



Law-enforcement authorities were hunting on Tuesday for gunmen that wounded the controversial mayor of Armenia's second largest city of Gyumri and killed three of his bodyguards in a drive-by shooting which they believe was an attempt on his life.

Two cars carrying Mayor Vartan Ghukasian, his top aides and bodyguards came under a hail of automatic gunfire shortly after they left Yerevan for Gyumri late on Monday. The gunshots were reportedly fired from another vehicle that overtook the motorcade on a highway linking the two cities.

Three of the men died on the spot, while another, Ghukasian's driver, was taken to a hospital in Yerevan with a bullet in his head and remained in a critical condition. "Everything is being done to save his life," Suren Makarian, head of the hospital's intensive care unit, told RFE/RL by phone. "Time will tell whether or not we will succeed."

The mayor and his deputy Gagik Manukian were also hospitalized, but officials said their injuries were less serious. Ghukasian underwent an over-

Continued on page 4

## U.S. Senate Panel Condemns Dink Murder

WASHINGTON, DC -- A U.S. Senate panel condemned last Wednesday the murder earlier this year of a prominent Turkish-Armenian editor, Hrant Dink, who had urged Turks to acknowledge the mass killings of Armenians on Turkish soil in 1915.

The largely symbolic resolution approved by the Senate Foreign Relations Committee reopened the question of whether Congress should weigh in on the debate over whether the killings were genocide.

The Senate resolution that passed the committee on a voice vote does not explicitly refer to the killings as genocide, but observes that Dink, before his death, was subjected to legal action in Turkey for doing so. It condemns Dink's murder and urges the people of Turkey to "honor his legacy of tolerance."

Turkish diplomats do not look favorably on the Senate proposal, which can now go to the floor for a vote. "We don't see the benefit of such a resolution," said Tuluy Tanc, the minister-counselor at the Turkish Embassy in Washington.

"It is clear that bringing this resolution (on Dink's killing) to the agenda of the Senate serves only to exploit the loathsome murder for political aims by referring to the events of 1915," Turkey's Foreign Ministry said in a statement.

But the author of the Senate resolution, Foreign Relations Committee Chairman Joseph Biden, a Delaware Democrat, said he was not deterred by Turkish sensitivities. "A relationship that rests on a requirement of a denial of an historical event, is not a sound basis for a relationship," Biden told Reuters.

# "Year of Armenia In France" Arménie mon amie, l'Année de l'Arménie September 21, 2006-July 14, 2007

**By Barlow Der Mugrdechian**

A series of major art exhibits across France is marking the "Year of Armenia in France." The program for the entire "Year of Armenia" includes around six-hundred events in more than forty cities all over France. The main purpose of the "Year of Armenia" is to represent Armenia to the world. Armenian Foreign Minister Vartan Oskanian and French Foreign Minister Philippe Douste-Blazy, along with the Ministers of Culture of each country, opened the "Year of Armenia in France" in September 2006. The day-to-day work is handled by the officially designated *Comminer*, Nelly Tardivier Henrot and her Armenian counterpart Vigen Sargsyan in Armenia.

The "Year of Armenia" was launched on September 21, 2006, Armenian Independence Day, and will conclude on July 14, 2007, France's 4th of July, with a final closing ceremony in the beginning of September 2007.

Eduard Nalbandian, Armenia's Ambassador to France, and Philippe Etienne, Director General of International Cooperation and Development of France, signed several documents on the agreements reached and principles of the "Year in of Armenia" organization.

Highlighting the events of the "Year of Armenia" is the massive "Armenia Sacra" exhibition on medieval



Armenian Church art at the Louvre Museum. There are over 200 objects that will be displayed for three months in this exhibition. Of these, 27 are *khatchkars* or cross-stones-the first time so many have been exhibited anywhere outside of Armenia. At the press conference celebrating the opening, more than 300 newspaper, radio, and TV journalists from all over Europe were in attendance. The catalogue of the exhibit, with over 400 pages, will be a substantial landmark in medieval Armenian art history. Dr. Dickran Kouymjian, Haig and Isabel Berberian Professor of Armenian Studies at Fresno State and Director of the Armenian Studies Program, contributed to the preparation and writing of the catalogue. On March 2nd, Prof. Kouymjian gave a lecture on "The Year of Armenia" in Brussels.

Also in February was the opening of "L'Orient des photographes arméniens," on Armenian photographers of the Ottoman Empire at the Institut du monde arabe, one of Paris's major museums and the center of Islamic and Arab culture in France. Thousands of Parisians attended the opening.

Two major exhibitions on the filmmaker-artist Sergei Paradjanov are being held in Paris At the Institut nationale superior des Beaux-Arts, 70 of his collages from the Paradjanov Museum in Erevan are on display. A beautiful catalogue of the exhibit is also a landmark on this art. In it are two major articles by Prof. Kouymjian and more than 100 documents and photos from his archive, many of them with the Fresno State logo. On March 9th is the opening of a retrospective of the films and more collages of Sergei Paradjanov at the Magic Cinema in Bobigny, a major Paris suburb, with a 200 page catalogue in which the journal Dr. Kouymjian kept during the attempt by Paradjanov to make a film on the Treasures of Etchmiadzin (which unfortunately failed), is published for the first time along with more material from his archives. The driving force for both exhibits is Zaven Sargsyan, a close friend of Paradjanov and the founder and director of his Erevan museum.

On March 16-17th there is an international conference on Armenian culture at the University of Aix-en-Provence where Prof. Kouymjian will speak on the cult of relics in medieval



Armenia.

On March 21st will be the opening of the major exhibition on Armenian textiles and liturgical art "Ors et Trésor d'Arménie" at the Musée du Tissus and the Musée Fourvière, both in Lyon, an exhibit in part conceived by Dr. Kouymjian years ago and the catalogue of which his contribution was a major one.

For more details on the exhibit and the "Year of Armenia in France" (more than 600 scheduled events), you can visit the website of Arménie mon amie: http://www.armenie-mon-amie.com.

**This article is courtesy of *Hye Sharzhoom*, the newspaper of the Armenian Studies Program and Armenian Students Organization at California State University, Fresno.**

# Armenian Ombudsman Laments Lack Of Court Independence

Armen Harutiunian, the state human rights ombudsman, complained on Wednesday about a continuing lack of judicial independence in Armenia, saying that local courts were the main source of citizen complaints received by his office last year.

Presenting his first annual report, Harutiunian said almost 13 percent of 1,247 complaints filed with the Office of the Human Rights Defender had to do with decisions made by various-level courts.

"The number of complaints filed against courts shows that there is a lot of distrust in the judicial system, which is supposed to be the main institution of human rights protection," he said. "The courts must become as independent as possible."

The 223-page report draws the same conclusion: "Although a defendant's disaffection with a guilty verdict can be deemed natural, the large number of such complaints gives us reason to conclude that the population's trust in the courts is far from satisfactory."

Armenian courts rarely acquit criminal suspects and hand down other rulings going against the wishes of law-enforcement and government bodies. Many lawyers say this fact testifies to their lack of independence. Some blame it on Armenia's post-Soviet constitution that gives the president of the republic the right to appoint and dismiss virtually all judges. That authority was somewhat restricted by



constitutional amendments enacted in November 2005.

Harutiunian, himself a constitutional law expert, specifically faulted the courts for rejecting just about every lawsuit against controversial confiscations of land and house demolitions ordered by the Yerevan municipality in recent years. "The courts rule that the mayor can allow construction anywhere he wants," he said.

Yerevan courts continued to rule against owners of houses demolished by municipal authorities as part of redevelopment projects implemented in the city center even after Armenia's Constitutional Court declared the process unconstitutional last year.

Incidentally, the municipality was the second largest source of citizen appeals to Harutiunian's office in 2006, followed by the Armenian police and the Ministry of Justice. Harutiunian said he will put the Yerevan mayor's office under closer scrutiny this year because of "blatant" violations of the law alleged by many city residents.

# Armenian Leaders 'Afraid Of Losing Power'

**Continued from page 1**

using television in the run-up to the May 12 elections. However, the TV channels, all of them loyal to the government, have denied this, insisting that their campaign fees are market-based and were not dictated by the authorities.

Finley was clearly unconvinced by such assurances as she spoke to RFE/RL during a visit to its headquarters in Prague. "Whoever has the power to do so, they'd better lower their rates," she said. "I think it's very odd to me that leaders in countries [like Armenia] are so afraid to make media available or transparency more prevalent. It says only one thing to me: that the leaders are afraid of losing their jobs and maybe the opportunity, just perhaps, of salting away some money in bank accounts in some place."

"If you're not afraid, then why not let this stuff open up, let the rates down, maybe create something where there aren't even any rates, maybe have time on Saturdays and Sundays when there is three hours of free air-time," Finley added. "There are all kinds of things you can do if you really want to have fair elections."

Armenian law entitles parties and electoral blocs running for parliament to only 60 minutes of free airtime on state television and 120 minutes on state radio. Opposition parties also complain about what they see as a biased coverage of their activities by the TV stations that rarely air criticism of President Robert Kocharian and his government.

Finely warned that equal campaigning opportunities are as important for the freedom and fairness of the Armenian elections as the voting and counting of ballots. "They [the authorities] refuse to understand that it is about the weeks, many weeks, before the election day, that everything that goes on in that period is as important as how the election day runs," she complained. "And all of those things have to do with freedom of assembly, freedom of media. Do they all have access to the television? Do they all have access to the radio? Do they have the ability to gather supporters in a town square?"

# Karabakh To Elect New President On July 19

Voters in Nagorno-Karabakh will go to the polls on July 19 to elect a new president, it was announced on Wednesday.

The date of the presidential election was set by the parliament of the unrecognized Nagorno-Karabakh Republic (NKR).

Arkady Ghukasian, the NKR's current president who has been in power since 1997, repeated earlier this year that he will not be seeking a third term in office. A Karabakh law bars him from running for a third term.

Among the likely election frontrunners are Bako Sahakian, chief of a local security service, and parliament speaker Ashot Ghulian.

# Demands For Voter Passports Spark Election Controversy

By Gayane Abrahamyan

Reports of pro-government political parties allegedly seizing voter passports has become one of the most controversial issues surrounding the conduct of Armenia's May 12 parliamentary elections. While both the ruling Republican Party of Armenia and the influential Prosperous Armenia Party have denied any involvement, opposition parties charge that the practice could seriously affect the outcome of the vote.

Rosa Sanasarian, a 72-year-old resident of Yerevan's central Avan neighborhood, told EurasiaNet that she was forced to hand over her passport data to district officials to receive a two-month social welfare payment. The officials stated that they needed the information to register Sanasarian for the funds.

"People from the district administration told me to vote for the Republican Party, otherwise they threatened to take away my "paros" said Sanasarian, in reference to her bi-monthly allowance.

Not all voters, however, object to handing over their passports. In Charbakh, a suburb of Yerevan, Gurgen Mkrtumian, a 62-year-old construction worker, said that he handed over to Prosperous Armenia Party members the passports for all five of the voters in his family in exchange for 25,000 drams (about $70).

"The party that's been chosen to win will be elected no matter whether I vote or not," Mkrtumian explained. "I will at least get the money I need very much." Mkrtumian said that he intends to stand by his pledge to vote for Prosperous Armenia in return for the cash. "I have taken the money and I have given my word as a man," he said.

Members of Armenia's opposition claim that Prosperous Armenia, named the frontrunner in many opinion polls, and the ruling Republican Party of Armenia (RPA) are using the passport scoops to avoid detection of more overt forms of vote manipulation on election day by international observers, who are expected to scrutinize this vote more heavily than usual.

"People are told 'Look, we take your passport or your passport data and we will later check whom you have voted for. We have given you a bribe, so you vote for our candidate,'" charged Grigor Harutyunian, a member of the political council of the People's Party of Armenia, one of the main opposition parties in parliament. "'We will know if you don't and it won't be good for you,'" he claimed voters are told.

Ruzan Khachatrian, a board member of the People's Party of Armenia, claims that the practice is not limited to targeting adults alone. "The passport data are shamelessly gathered even at schools," she claimed. "The school principals are mainly members of either Prosperous Armenia or the Republican Parties and force children to bring in their parents' passports, promising high grades in return for them."

Both the Republican Party and Prosperous Armenia Party have strongly denied that they are involved in collecting passports or paying voters for the information.

In a March 15 meeting with jour-



nalists, Parliamentary Speaker Tigran Torosian, who holds the number two spot on the Republican Party's list of candidates, affirmed that the party "has not instructed anyone to collect passports or [to take] any such kind of steps."

Torosian, however, stopped short of giving guarantees that election law violations would not occur during the campaign. "The RPA has several tens of thousands of members. Who can claim to be able to supervise the activities of these several tens of thousands of members? Nobody, I think," Torosian said.

On March 7, Deputy Parliamentary Speaker Vahan Hovhannisian, a member of the ruling council of the Armenian Revolutionary Federation, a member of Armenia's ruling coalition, called on voters not to give out their passports and passport numbers, warning that the practice was a crime.

Meanwhile, economist Vardan Bostanjian, a member of Prosperous Armenia's political council and a party list candidate, maintains that Prosperous Armenia has no need to use "artificial" means to win votes. "The party has 370,000 members and these people have joined it because of affection [for the party] and because of their beliefs," Bostanjian told reporters on March 22.

Passport grabs are not the only controversy to have marked the parliamentary campaign, however. Considerable debate has dogged the activities of a charitable organization connected with Prosperous Armenia leader Gagik Tsarukian. Wheat and potato seeds have been distributed to farmers for sowing, free medical care provided in the regions, and buses provided to transport university students into Yerevan free of charge.The Republican Party and opposition People's Party have also reportedly undertaken various charitable activities.

Armenia's election code does not provide clear guidance on how to qualify such handouts. The code prohibits charitable acts by political parties only during the official election campaign period. The campaign for the May parliamentary vote starts on April 8 and lasts until May 10. The code does not specify how the restrictions apply to the pre-campaign period.

Nor is the problem a new one. Surveys performed by the Regional Development Center and Transparency International Yerevan indicated that 75 percent of voters during Armenia's 2003 parliamentary vote had been offered financial incentives to favor a certain party or candidate.

**Editor's Note**: Gayane Abrahamyan is a reporter for the ArmeniaNow online weekly.

## Book Review

# Novel Details Horrors Of Armenian genocide

In her debut novel, Skylark Farm, Antonia Arslan brings to light the devastating events of what many consider to be the first genocide of the 20 th century ? the killing of Armenians by the Ottoman Empire?s Young Turks at the outbreak of World War I.

Arslan, an Armenian who has lived in Italy and taught at a university there, has fictionalized her family?s story while using their real names.

Yerwant Arslanian, the author?s grandfather, left home at 13 and traveled to Italy to study. His older brother Sempad, who has remained in a small western Turkish town to raise his large family, is well-known and loved throughout the community. Sempad tries to catch up with Western fancies and is oblivious to the approaching war.

When the brothers? father dies, Yerwant makes plans to visit Sempad and his family at Skylark Farm, a family estate in the country. But days before Yerwant is to depart with carloads of gifts, Sempad and the other Armenian males of the village are murdered by a renegade band of Turkish soldiers at the farm and buried in the freshly dug ground of a tennis court.

With the men gone, the women have no choice but to leave in a deportation caravan through the Syrian desert, led by Turkish guides who pillage and rape the defenseless and starving group all the way to Aleppo.

Yerwant and his half-brother Zareh breathlessly wait for news regarding their remaining family members, aided by a distant relative who is a Greek Gypsy, and a lame beggar who is torn between helping his friends and the government in its plan to eliminate the Armenians.

Arslan?s heartbreaking tale, like the Holocaust, is horrific, a chronicling of man?s inhumanity to man. But it is ultimately a story of survival.

Simply written, Skylark Farm is told from the perspective of several people on both sides of the genocide, including government officials, the Arslan family, and even the accommodating wife of the French consul in Aleppo.

Graphic and often horrifying, the details of the massacre and death march through the desert make this novel much more than a granddaughter?s reimagining of her family history ? it captures a moment in time that changed the lives of tens of thousands of people forever.



## Deforestation Panel To Launch Armenian Environmental Network

WASHINGTON, DC—Why is deforestation such a critical problem in Armenia? What are its social and economic consequences? What can we do about it? The Armenian Environmental Network (AEN) is hosting its inaugural event in Washington on Monday, April 9, where various experts will discuss "Deforestation in Armenia and the Path to Recovery."

AEN is a newly formed group of development professionals and students who are working to raise awareness about a variety of environmental problems in Armenia as they affect public health, democracy building, economic development, and security.

The panelists will include Charles Dunlap, senior program manager of the US Civilian Research and Development Foundation, Frauke Jungbluth, senior rural development economist at the World Bank, Jeffrey Tufenkian, president of Armenian Forests NGO, and Jeff Masarjian, executive director of Armenia Tree Project.

The event will also include opening remarks by Ursula Kazarian, the founding director of AEN's main branch in Washington. Kazarian will discuss the mission of AEN and highlight the network's collaboration with environmental activists and professionals in Armenia.

"In partnership with colleagues in Armenia and the US, we have initiated the Armenian Environmental Network to introduce environmental and energy concerns as critical and urgent factors for consideration within Armenia's traditional development context," stated Kazarian. "We are aiming to attract development professionals, environmental activists, and students to the network, with the goal of promoting public awareness and education in environmental issues as they pertain to Armenia's overall development.

"Worldwide, environmental issues such as water shortages, energy security, and climate change are being increasingly recognized by governments and international organizations as critical to human rights, political stability, and economic growth. We have a shared responsibility as Armenians to incorporate these factors into our traditional views of Armenia's development.

"There is a lot of good work being done on the ground by locals as well as by outside organizations, and it is time that those activities were recognized and appreciated by those outside of Armenia who may be interested in supporting these projects."

Eventually, AEN hopes to help direct such support both through fundraising and collaboration with development practitioners based in Armenia. "There are so many talented individuals and groups who will benefit from increased communication, both among each other as well as with outside sources. This network is long overdue," continued Kazarian.

AEN is in its final stages of organization development and will be launching a website soon to complement its public activities. However, the network already has an active group of members in Armenia and the US.

## Gyumri Mayor Survives Assassination Bid

**Continued from page 1**

night surgery and was said to be recovering from a bullet wound in his abdomen.

The fact that Ghukasian was shot on his way home from a high-level meeting of the governing Republican Party of Armenia (HHK), of which he is a senior member, added a political dimension to the deadly incident. The late-night meeting nominated the party's top leader, Defense Minister Serzh Sarkisian, for the post of prime minister which has been vacant since the March 25 death of Armenia's previous Republican premier, Andranik Markarian.

The Gyumri mayor is no stranger to controversy, having been accused by critics of leading a business clan that controls much of the local economy and tolerates no competition. He has also earned notoriety for his flamboyant behavior that has occasionally turned violent.

## Lark Musical Society Showcases The Works Of Grammy-Nominated Composer, Tigran Mansurian

GLENDALE -- Three concerts on three nights under the auspices of the Consulate General of the Republic of Armenia.

In commemoration of the 92nd anniversary of the Armenian Genocide of 1915, Lark Musical Society presents a series of three concerts featuring the music of composer Tigran Mansurian. The series, entitled the "Mansurian Triptych," showcases the composer's vocal, chamber, and orchestral works, and will take place on the evenings of April 20, 23, and 25, respectively, at 8:00 pm. The first two concerts will be held in Zipper Hall, Colburn School of Music, 200 South Grand Avenue, Los Angeles 90012; and the third concert will take place at the Alex Theater, 216 North Brand Boulevard, Glendale 91203.

The first of the "Triptych" events will feature Mansurian's Ars Poetica, on poetic selections by Eghishe Charents. The second concert, which is also the final concert of the "Dilijan" 2006-2007 season, will be devoted to the composer's chamber works, performed by an ensemble of nationally and internationally acclaimed musicians, including violist Kim Kashkashian. Ms. Kashkashian will also perform Mansurian's famed Viola Concerto in the third concert of the musical trilogy. This concluding event also features the U.S. premiere of the composer's recent Concerto No. 2 for Violin and String Orchestra, with Dilijan artistic director Movses Pogossian, as soloist.

The Lark Conservatory students and graduates have been instrumental in their organizational efforts to present the choral, orchestral and chamber works of one of Armenia's leading composers, whose Monodia (ECM New Music Series) was nominated for a 2004 Grammy Award.

For further information about the event, or for details about future events at Lark, visit the Lark Musical Society office, 543 Arden Avenue, Glendale, CA 91203, or call 818-500-9997.



## Ս. ԶԱՏԻԿ

# ԱՌԱՋՆՈՐԴ ՍՐԲԱԶԱՆ ՀՕՐ՝ Տ. ՅՈՎՆԱՆ ԱՐՔԵՊՍ. ՏԷՐՏԷՐԵԱՆԻ ՍՈՒՐԲ ՅԱՐՈՒԹԵԱՆ ՏՕՆԻ ՔԱՐՈԶԸ

«ԶՔրիստոս զգենուլ»
«Զգեստաւորուեցէ՜ք Տէր Յիսուսի Քրիստոսով»

(Հռոմ. 13:14)

*Սուրբ Յարութեան տօնը մարդկութեան հոգեւոր կեանքը նորին ձգտումովը լեցնող ամենէն ներշնչող հրամայականն ու միաժամանակ մարտահրաւէրն է այլակերպուած կեանքի ընթացքով ապրելու: «ԶՔրիստոս զգենուլ»: Պօղոս Առաքեալի այս այնքա՜ն պարզ թուացող, բայց դիպուկ պատգամը ուղղուած է բոլոր ժամանակներուն մէջ ապրող մարդկութեան, քանզի Քրիստոս՝ Աստուածորդին գերագոյն եւ յաւիտենական ճշմարտութիւնն է: Ահաւասիկ, այդ իմաստով ալ Ս. Յարութեան Տօնը արժեւորած կ՚ըլլանք ե՛ւ մեր անձնական ե՛ւ մեր համայնքային կեանքի մէջ, երբ մեր բովանդակ կեանքը կը դառնայ Քրիստոսի Աւետարանին լոյս պատգամները մարմնաւորող կեանք մը, բայց աւելին՝ Անոր Յաղթական Յարութիւնը կը շարունակէ ներշնչել մեզ մեր կեանքի բոլոր ընթացքին:*

*«ԶՔրիստոս զգենուլ»:*

*Քրիստոնեայ աշխարհի մտասեւեռումը այս օրերուն առաւելաբար կը կայանայ Քրիստոսի Յարութեան խորհուրդին վրայ: Աւագ Շաբթուան մէջ խտացուած Անոր կեանքը բաւական է յեղաշրջելու համար մարդկանց կեանքերը: Կարծէք կեանքի բոլոր դասերը այդ մի քանի օրերուն մէջ խտացած ըլլան. խոնարհութեան խորհուրդը, ծառայութեան հրամայականը, զոհողութեան անչափելիութեամբ իմաստաւորուած կեանքը, աղօթքին զօրութեամբ լուսաւորուած հոգին ու սիրտը եւ տակաւին այն բոլորը, որոնք այնքա՜ն անհրաժեշտ են մեր հոգեւոր էութեանը մէջ խորացնելու համար հաւատքի կեանքը, որը հիմնական գրաւականն է մեր մէջ ապրելու եւ զգալու համար Քրիստոսի ներկայութիւնը: Ինչքա՜ն շեշտուած կերպով կը զգանք Քրիստոս Անձին ներկայութիւնը մեր էութեան խորքը, կը նշանակէ այնքա՜ն աւելի մօտեցած ենք Աստուծոյ եւ այնքա՜ն եւս մօտեցած նաեւ մարդոց, անոնց հետ բաժնելու համար աստուածային բարիքներն ու շնորհները:*

*«ԶՔրիստոս զգենուլ»:*

*Քրիստոսի հրաշափառ Յարութիւնը ուրիշ բան չէ, եթէ ոչ այն հզօր ուժը, որը կ՚այլակերպէ աղօթող հոգիներուն կեանքը, որպէսզի մեր կեանքի ընթացքը չըլլայ պատահական, այլեւ՝ ամբողջութեամբ ընծայուած Աստուծոյ սեղանին եւ մարդկութեան ծառայութեանը ի խնդիր: Այս օրերուն, մանաւանդ, երբ աշխարհի մարդկութիւնը կը տառապի պատերազմներու մէջ, երբ Աստուծոյ տուած խաղաղութիւնը կը խլուի ստեղծագործ կեանքով ապրող ժողովուրդներու առօրեայ կեանքէն, երբ մարդիկ անգիտակից ու բարոյազուրկ կեանք մը ապրելով կը կորսնցնեն մեծագոյն նուէրը, որը ինքնին կեանքն է, երբ եսն ու նախանձը կ՚իշխեն մարդուն հոգիին վրայ, երբ ներողամիտ ոգին կը շարունակէ նահանջել մարդոց կեանքին մէջ, առաւել եւ անոնց պարագային, որոնք հոգեւոր սքեմով հանդերձ քարոզներ կը կարդան ժողովուրդին, ուրեմն այս բոլորին բալասանը պիտի ըլլայ Քրիստոս՝ Իր Յարութեամբ: Ով իր մէջ լիապէս կ՚ապրի Քրիստոսի ներկայութիւնը, այդպիսին աստիճան առ աստիճան կը բարձրանայ առ Աստուած: Իսկ ովքեր իրենց խօսքին ու գործին մէջ անհաշտ ընթացք մը կ՚արձանագրեն, այդպիսիք իրենց հաւատքին մէջ դեռաւոր են, ու խեղդած են իրենց մէջ քրիստոնէական սէրը:*

*Քրիստոսի Յարութիւնը, սիրելի բարեպաշտներ, կը նորոգէ մեր հոգեւոր կեանքը, մեր մէջ արթնցնելով քրիստոնեայի կեանքով մը ապրելու պարտականութեան ու պատասխանատուութեան զգացումը: Քրիստոսի Յարութիւնը, այս իմաստով մարդկութեան հոգեւոր կեանքին մէջ հաստատուած գարունն է, երբ կը վերապրի բնութիւնը, կը վերապրի նաեւ մարդկութիւնը: Երբ երկիրը նոր ուժականութեամբ մը կը զարդարէ բնութիւնը, ապա Քրիստոս՝ Իր Յարութեամբ կը զարդարէ մարդոց հոգիները, պայմանով որ մեր վրայէն թօթափած ըլլանք հին մարդը եւ նորոգուինք Քրիստոսով:*

*Ս. Յարութեան Տօնը, բովանդակ քրիստոնեայ աշխարհի Տօնը ըլլալով հանդերձ, իրեն յատուկ տեղը ունի մեր ազգի եւ Եկեղեցւոյ կեանքին մէջ: Մեր պատմութեան ամբողջ ընթացքը եղած է «Մեծ Աւագ Շաբաթ» մը, որուն մեկնակէտն է եղած Քրիստոսի Յարութիւնը: Քսաներորդ դարը ծայրէ ի ծայր շղթայումն է խաչելութիւններու, բայց վերջապէս յաղթանակին տեսիլքովը մարմնաւորուած կը տեսնենք բազում տանջանքներով Մայր Հայրենիքի վերանկախացումովը, Հայաստանեայց Եկեղեցւոյ Աստուածահիմն Կեդրոն Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին անթիւ առաքելութիւններու խորացումովը, նորահաս երիտասարդութեան յաղթութեամբ ձեռքբերուած յաջողութիւններով:*

*Ի՞նչ կը պատգամէ Քրիստոսի Յարութիւնը այսօր, մեզի, յատկապէս սփիւռք ապրող մեր զաւակներուն, որուն ամենէն գլխաւոր ու համախումբ կեանքով ապրող հատուածը կ՚ապրի Արեւմտեան Թեմէն ներս. դառնալ հաւատարիմ քաղաքացիները Ամերիկայի, անվերապահօրէն նուիրուիլ Մայր Հայրենիքին, հաստատ մնալ Ս. Էջմիածնի յաւիտենականութեանը եւ այլեւս Հայրենիքէն դուրս չփնտռել Հայց. Եկեղեցւոյ արմատները: Մէկ Հայրենիք, մէկ Ազգ եւ յատկապէս մէկ Եկեղեցի լոզունգը անտեղիօրէն յայտարարելէ դադրիլ եւ գործի անցնիլ: Հայց. Եկեղեցին ի գլուխ ունենալով Ս. Էջմիածինը Քրիստոսի Յարութեան ժայռին վրայ է հաստատուած: Այս ճշմարտութիւնը բանակցութիւններու հարկը չզգար: Վերջապէս, Քրիստոսի Յարութիւնը մեր Սուրբ Եկեղեցւոյ կեանքին մէջ պէտք է ըլլայ մարտահրաւէրը բարեկարգութեան:*

*Փառք Աստուծոյ, որ նորահաս սերունդ մը կը պատրաստուի Հայոց Հայրապետի գլխաւորութեամբ, որոնք գալիք տասնամեակին նոր եռանդ ու կենսունակութիւն պիտի բերեն Հայց. Եկեղեցւոյ կեանքին մէջ: Փառք Աստուծոյ, որ նորահաս սերունդի հետ համատեղութեամբ հոգեւոր վերածնունդ կ՚ապրի մեր Մայր Սուրբ Եկեղեցին իր բոլոր մակարդակներուն վրայ: Բնականօրէն, առաքելութեան դաշտը մեծ է եւ ժամանակի ընթացքի*

*Շար.ը էջ 18*

# ՀԱՅՑ. ԿԱԹՈՂԻԿԷ ԵԿԵՂԵՑԻՈՅ ՊԱՏԳԱՄԸ Ս. ԶԱՏԿՈՒԱՆ ԱՌԻԹՈՎ

«Եթէ Քրիստոս յարութիւն չառաւ, ընդունայն է մեր քարոզութիւնը, ընդունայն է նաեւ ձեր հաւատքը»:

*Վտանգաւոր գրաւ մըն է սուրբ Պօղոսի ըրածը այս յանդուգն յայտարարութեամբ: Եթէ կորսուի գրաւը, ոչ միայն իր քարոզութիւնը, այլ անոր շնորհիւ քրիստոնէացած հոգիներուն հաւատքը կը խախտի եւ ոչինչի կը վերածուի: Այլ խօսքով՝ ինք խաբեբայ կը նկատուի իսկ իրեն հաւատացողները՝ հսկայ խաբէութեան մը զոհեր:*

*Ինչպէ՞ս կրնայ այս խիզախ մարդը վտանգել ոչ միայն իր քարոզութիւնը, այլ նաեւ իր անցեալի կեանքը, իր առաքելական ասպարէզն ու վաստակը, ինք որ քրիստոնեաներու կատաղի հալածիչը ըլլալէ ետք, յանկարծակիօրէն Քրիստոսի յախուռն ջատագովը դարձած էր, իր չընթալից դարձին հետեւանքով:*

*Ինք չէր ճանչցած Քրիստոսը անձամբ, անոր կենդանութեան: Բայց լսած էր անոր մասին: Եւ նկատած էր զայն սուտ մարգարէ մը, արկածախնդիր ամբոխավար մը: Անոր մահէն ետք պաշտօն ստացած էր հրեայ քահանաներէն՝ հետապնդել անոր հետեւորդները եւ մի առ մի յանձնել անոնց թշնամիներուն ձեռքը: Դամասկոսի ճամբուն վրայ, չանթահարուած խորհրդաւոր երեւումէ մը, արմատական յեղաշրջում մը տեղի ունեցած էր իր համոզումներուն մէջ, եւ դարձած էր գլխաւոր քարոզիչը Քրիստոսի վարդապետութեան եւ «հեթանոսներուն առաքեալը»:*

*Սուրբ Պօղոսի քարոզութեան հիմը եւ կեդրոնը Քրիստոսի յարութիւնն է: Անոր կեանքը, մահը, վարդապետութիւնը ոչ մի արժէք պիտի ունենային իրեն համար եթէ ան չյաղթէր մահուան՝ մեռեալներէն յարութիւն առնելով: Յարութիւնը ոչ միայն հաւաստիքն էր անոր աստուածութեան, այլ նաեւ երաշխաւորութիւնը մե՛ր յարութեան: «Եթէ յարութիւն չառնէր», յանդգնաբար կ՚եզրակացնէ ան, «մենք սուտ վկաներ պիտի ըլլայինք, վկայելով թէ Աստուած յարութիւն տուած է անոր»:*

*Վկայութեան մը արժէքը յարաբերական է երբ խօսքի վկայութեամբ կը սահմանափակուի: Բայց երբ կնքուի մահուան վկայութեամբ, կը դառնայ անհերքելի փաստը խօսքի ճշմարտութեան: Եւ այդպէս եղաւ ոչ միայն Պօղոսի, այլ բոլոր առաքեալներու պարագային: Ամէնքը անխտիր եւ մի առ մի, մահը դիմագրաւեցին՝ վկայելով եւ հռչակելով թէ Քրիստոս յարութիւն առած է: Նոյնը ըրին անոնց յաջորդները: Ո՞վ յանձն կ՚առնէ իր կեանքը վտանգել ցնորքի մը, առասպելի մը համար, եթէ իր էութեան խորը արմատացած անխախտելի համոզում չունի:*

*Յարութեան առաջին վկաները տեսան «Թափուր գերեզմանը» եւ հաւատացին: Հրեաները կաշառեցին հռոմայեցի պահակները, տարածելու համար սուտ լուրը թէ Յիսուսի աշակերտները գիշերանց գողցած են անոր մարմինը: «Եւ այս զրոյցը տարածուեցաւ հրեաներուն մէջ մինչեւ այսօր, կ՚ըսէ Աւետարանը:*

*Բայց այդ զրոյցը բաւարար չեղաւ հերքելու համար Յիսուսի յարութիւնը: Արդի ժամանակներու Քրիստոսի ոսոխներն ալ այլեւայլ միջոցներու դիմեցին նոյն նպատակին հասնելու համար: Վերջին հնարքը եղաւ, այս օրերուս, գերեզմանի մը «գիւտը», որ իբր թէ կը պարունակէր ոչ միայն Քրիստոսի, այլ իր ամբողջ ընտանիքին ոսկրոտին: Ինչ աւելի*

*Շար.ը էջ 18*

# ՀԱՅՑ. ԱՒԵՏԱՐԱՆԱԿԱՆ ԵԿԵՂԵՑԻՈՅ ՊԱՏԳԱՄԸ Ս. ԶԱՏԿՈՒԱՆ ԱՌԻԹՈՎ

*Ս. Զատիկը Քրիստոսի Յարութեան տօնն է: Ան պատմական եզակի դէպք մըն է մարդկութեան Փրկիչ եւ Տէր եղող Յիսուս Քրիստոսի կեանքէն: Անով է որ Աստուածորդին մարդկութեան մեծագոյն թշնամիին՝ մահուան դէմ յաղթանակ տարաւ՝ մարդոց նոր կեանք բերելով եւ անոնց առջեւ նոր եւ հզօր կարելիութիւններու եւ մարտակոչերու դուռը բանալով:*

*Յարուցեալ Յիսուս Քրիստոս դարերու ընթացքին իրեն հաւատացողներուն ոչ միայն կեանքը հիմնովին յեղաշրջած է, այլ նաեւ անոնց պարգեւած է հաւատք, յոյս եւ կորով յաղթական կեանք վարելու կեանքի ամէն դշխեմ եւ դժնդակ պարագաներու մէջն իսկ:*

*Ասկէ շուրջ չորս հազար տարիներ առաջ Յոբ Երանելին մարդկութեան միտքը փոթորկող դասական հարցումը կ՚ընէր. «Եթէ մարդ մը մեռնի, դարձեալ պիտի ապրի՞»: Այդ կնճռոտ հարցումին գործնապէս եւ դրապէս կը պատասխանէր Քրիստոս՝ Իր հրաշափառ Յարութեամբ:*

*Յիրաւի, Յիսուսի խաչելութենէն երեք օրեր յետոյ, երբ «իւղաբեր կանայք» եկած էին Իր մարմինը օծելու՝ իր դամբանին մօտիկ կեցած հրեշտակը կ՚աւետէր անոնց հետեւեալ զգայացունց լուրը. «Չէ աստ, քանի յարեաւ»:*

*Նմանապէս, Յարութեան աւետիսին վերահասու եղող Յիսուսի երկու աշակերտները, Յովհաննէսն ու Պետրոսը, արտորնօք Յիսուսի գերեզման վազելով ականատես կ՚ըլլային Անոր Թափուր գերեզմանին:*

*Իր երկրաւոր կեանքի ծառայութեան շրջանին «Ես եմ յարութիւնն ու կեանքը» յայտարարող Յիսուսը՝ իր փառաւոր Յարութեամբ կու գար վստահեցնելու իր հետեւորդներուն թէ՝ ան որ Իրեն կը «հաւատայ թէեւ մեռնի, դարձեալ պիտի ապրի»: Հունաւոր մարդուն համար ասկէ աւելի մեծ աւետիս չկայ:*

*Այս իմաստով, Ս. Զատիկը մեղաւոր մարդկութեան համար Աստուծոյ գերագոյն պարգեւը կը դառնայ, որովհետեւ անիկա կու գայ վկայելու մահուան իրականութենէն սարսափող մարդ էակին թէ՝ «կենաց վախճան չէ գերեզման», թէ՝ ան որ իր կեանքը յանձնած է Յարուցեալ Քրիստոսի՝ Անոր նման պիտի ապրի նոյնիսկ երբ մարմնապէս մեռնի:*

*Բայց աւելի, Ս. Զատիկը ոչ միայն անցեալի մէջ տեղի ունեցած դէպք մըն է, այլ նաեւ անոր հրաշալի տարողութիւնը աղերս ունի մարդոց ներկայ եւ ապագայ կեանքին հետ: Իրօք, Իր Սուրբ Յարութեամբ Քրիստոս հաստատեց թէ Իրմով մարդիկ կրնան ունենալ «կեանք եւ աւելի կեանք», լիիրաւ եւ որակաւոր քրիստոնէական կեանք, որ կը սկսի երկրի վրայ եւ*

*Շար.ը էջ 18*

# ՈՐՈՆՈՒՄՆԵՐ ԳԱՂԱՓԱՐԻ ՀԵՏՔԵՐՈՎ

*ԱՆԴՐԱՆԻԿ ՀԱՄԱԼԵԱՆ*
*(Շարունակուածնախորդթիւէն)*

Ներկան 3000ից աւելի գոյութիւն ունի Հայաստանի մէջ: Յաջորդ շաբաթը մեկնեցինք Էջմիածին նուագախումբի ուղեկցութեամբ մտանք եկեղեցին Վազգէն Ա. Կաթողիկոսին քով որ հիացաւ, առաջին անգամ ըլլալով տեսնում էր Հայաստանի մէջ սկաուտութիւն, իր օրհնանքը տուեց ըսելով ձեր տարիքին Պուլկարիոյ մէջ ես ալ սկաուտ եղած եմ՝ վարիչ առաջնորդ: Բաւականի մարդիկ հաւաքուած էին առաջին անգամ տեսնելու սկաուտների կատարած տողանցքը նուագախումբի զինուորական քայլուածքով: 3 շաբաթ անց որոշեցինք Երեւան քաղաքի մէջ տողանցք կատարուի նուագախումբով, Լեւոն Մխիթարեանի հետ գնացինք Ղարաբաղեան Կոմիտէի գրասենեակը: Լեւոն Տէր Պետրոսեանից թոյլտուութիւն վերցնելու, սենեակում նստած էր զինուորական մի գեներալ խորհրդակցում էր Լեւոն Տէր Պետրոսեանի հետ այլեւս ոչ մի դէպք չի կատարուելու մասին, դէպքը Խրբունիի մասին էր 8 հոգի ֆետայիներ մահացան գրահապատ մեքենայից արձակած կրակոցից եւ 4 հոգի կայարանի մէջ ռուս զինուորների արձակած փամփուշտներից մահացան: Լեւոն Տէր Պետրոսեանը մեզ չի թոյլատրեց ըսելով քաղաքը խառնուած վիճակ է Պուշեան փողոցով գնացէք Սարդարապատ այնտեղ տողանցէք: Ղարաբաղում պատերազմը շարունակւում էր, հայ մարտիկները օրէ օր իրենց յաղթանակութեան աւելի ոգեւորւում էին Ղարաբաղը ազատագրելու համար, Լեւոն Տէր Պետրոսեանը ոչ մի ջանք չէր խնայում այդ դժուարին կացութիւնից դուրս գալու համար: Արտերկրի ճնշումը, երկրաշարժը, ներքին կացութիւնը, ատոմակայանի փակուելը, կանանց թունաւորումները, Ղարաբաղի պատերազմը, ազերիների տեղահանութիւնը, Պաքուի հայերի հայաթափումը, արտագաղթը, ժողովուրդին անվտանգութեան ապահովումը:

Այս բոլոր դժուարին ծանրութիւնը Ղարաբաղեան Կոմիտէի ուսերին վրայ է եւ մանաւանդ գլխաւոր նախագահ Լեւոն Տէր Պետրոսեանը իր կարողութեամբ Հայաստանի դժուարին բեռը շալակած կարողանում է տանել Հայաստանի բարգաւաճման համար:

1990 թուականի Փետրուարի վերջաւորութեան, Ղարաբաղը բաւականին տարողութեամբ խոզի միս ուղարկեց Երեւան, համերաշխ միասնականութեան առիթով, օփերայի մօտ ճարտարապետ Թամանեանի արձանի ուղղութեան բարձրացող, դէպի մօնումենդ, ցածի մասում, աստիճանների հարդութեան վրայ դրուեց մանղալներ համեղ խորովածները պատրաստելու համար, մարդկանց բազմութիւնը հերթական կարգով մօտիկանում են մէկ հատ լաւաշի մէջ դնելով խորովածը ըստ ցանկութեան, մանղալի քովը դրուած լեմոնատի մէկ հատ շիշ վերցնելով իջնում են ցած, երկարութեան դրուած սեղանի շուրջ ուտելու համար, այնքան համեղ խորովածը երկու օր առաւօտից մինչեւ իրիկուն կրակի դիմաց երիտասարդ տղաները պատրաստում էին միշտ յիշողութեան մէջ պահելով Ղարաբաղի համերաշխութիւնը: 1990 թուի Մարտ ամսին, Կարապի լճի վրայ բոլոր իր եղած տարածքին տախտակէ սեղաններ շինեցին, բերեցին տորթեր մեծ մասերով միացրին իրար, բոլոր երեխաները ուրախանում էին, շատ համերաշխ կերպով հերթական կարգով մօտիկանում են իրենց հասնելիք բաժինը վերցնելով նոյնպէս մեծահասակները:

1990 թ. արտագաղթը մեծ ծաւալի հասնելով մարդիկ սկսան տուները ծախել, նաեւ ունեցուածքը արժանագին գիներով մեկնելու համար Միացեալ Նահանգներ: Մի որոշ ժամանակ անց բարեկամները բերել տալով Հայաստանի մէջի իրենց հարազատներին, կառավարական մարմինները ոչ մի արգելք չէին հանդիսանում մեկնողների նկատմամբ, նոյնպէս մեր բոլոր բարեկամները մեկնեցին միայն մնացինք մենք, քանի որ ոչ մէկը չունինք այլեւս, մնալնիս աւելորդ համարեցինք: Օգոստոսին մենք ալ ընտանիքով մեկնեցինք Միացեալ Նահանգներ, թողնելով Մայր Հայրենիքը իր բարձր լեռներով, ձիւնազարդ գագաթներով սփռուած գեղեցիկ բնութիւններով: Հայոց ճակատագիրը հազար տարիներ շարունակ այսպէս է դրոշմուած միշտ ապրելով օտար հողի վրայ, երբ հասանք Լոս Անճելըս տեղաւորուեցինք Հոլիվուտ շրջանի մէջ, ինձ շատ խորթ թուաց բաղդատել Երեւանի գունաւոր տուֆակերտ քարերով ճարտարապետական ոճով իր գեղեցկութեան բարձր յարկանի տարբեր տեսակի շէնքերի շինութիւնները: Մէկ շաբաթ անց սկսայ որոնել իմ հարազատ ընտանիքին Հ.Մ.Մ.ի եւ Հնչակեան Կուսակցութեան կեդրոնատեղը, մի քանի մարդկանց հարցնելով որոշեցի անպայման գտնել միանալ իմ հարազատ ընտանիքին, մի օր առաւօտ Փասատինա գնացող պասը նստեցի, երբ հասայ Գոլորատօ եւ Լէյքի անկիւնը իջայ ցած, աջ դառնալով մէկ ժամ որոնեցի, ոչ մի մարդու չի հանդիպեցի հարցնելու համար, յուսահատուած ետ վերադարձայ Հոլիվուտ: Հնչակեան գաղափարը ինձ հանգիստ չէր տալիս քանի որ 42 տարիներ արգելք էին հանդիսացած կուսակցութեան պատկանելիութեան: Երկրորդ օրը նորից նստայ պասը մեկնեցի Փասատինա, պասի մէջ նստած մի երիտասարդ տիկնոջ մօտիկացայ հարցրեցի դուք հայ էք ըսաւ այո, հարցրի Հ.Մ.Մ.ի ակումբը որտեղ կը գտնուի: Ինձ պատասխանեց ես աշխատում եմ հագուստեղէնի մեծ խանութում, աշխատողների մեծ մասը հայեր են Փասատինայի բնակիչներ, գնացինք մտանք հագուստի մեծ խանութը, կանչեց մի հայ տղայի ինձ բացատրեց ուրտեղ է գտնւում Հնչակեանների կեդրոնատեղը: Տղան մի թուղթի վրայ նկարագրեց Ալէն փողոցի վրայ: Բայց ես քանի որ սեփական մեքենայ չունենալու պատճառով, պասով կարող էի կորսուիլ, անգլերէն լեզուն չէի գիտեր, Փասատինան ծանօթ չէ ինձ, որոշեցի քայլելով գնալ գտնելու, սկսայ քայլել մտածմունքների մէջ իյնալով, Թուրքը Արեւմտեան Հայաստանի մէջ 1915 թ. տուների մէջից հանեց, գաղթականութեան ճանապարհին սպաննեց եւ եղածներին ալ տեղահանեց իր սեփական բնօրրանէն, բայց Հայրենիքում ոչ մէկը մեզի չստիպեց, մեր կամքով տեղա-

Ծար.ը էջ 17




Slim-Band
Weight Loss Centers
David G. Davtyan M.D., FACS, FICS

Եթէ ուզում էք նիհարել արագ եւ ընդմիշտ
եւ նորից լինել առողջ եւ գեղեցիկ,
Վիրաբոյժ Դաւիթ Դաւթեանի կենտրոնը
առաջարկում է անվտանգ եւ ապահով
նիհարելու լաւագոյն միջոցը:

“LAP-BAND”

2001 թուականից մեր փորձառու եւ նուիրուած
անձնակազմը օգնել է հարիւրաւոր հայերի եւ
ամերիկացիների նիհարել եւ վերադարձնել
իրենց գեղեցկութիւնը, առողջութիւնը
եւ երջանկութիւնը:



DAVID G. DAVTYAN
M.D., FACS, FICS
American Board of Surgery
American Board of Bariatric Medicine
Fellow American College of Surgeons
Fellow International College of Surgeons
American Society of Bariatric Physicians
American Society for Bariatric Surgeons
American Society of Breast Surgeons
American Society of Clinical Oncology
American Society of Surgical Oncology
European Society of Surgical Oncology

GLENDALE
BEVERLY HILLS
ORANGE COUNTY

We offer attractive financing.
LAP-BAND is now approved by Blue Cross.
Medicare and other insurance companies

We also specialize in treatment of:
CANCER and diseaases of
- Breast
- Colon
- Stomach
- Liver, Pancreas
- Gall Bladder

GLENDALE (818) 546-1500
www.LapBandLa.com

# ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ ԼՈՒՍԱՐԱՐԱՊԵՏ Է ՆՇԱՆԱԿՈՒԵԼ ԱՐԱՐԱՏ ԵՊԻՍԿՈՊՈՍ ԳԱԼԹԱԳՃԵԱՆ

*Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Ծայրագոյն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի Հայրապետական տնօրինութեամբ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի վանորէից տեսուչ Գերաշնորհ Տ. Արարատ Եպս. Գալթագճեանը նշանակուել է Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի լուսարարապետ:*

*Արարատ Սրբազանը շարունակելու է կատարել նաեւ վանքերի տեսչի պարտականութիւնները:*

### Տ. ԱՐԱՐԱՏ ԵՊԻՍԿՈՊՈՍ ԳԱԼԹԱԳՃՅԱՆ (ԿԵՆՍԱԳՐԱԿԱՆ)

*Տ. Արարատ Եպս. Գալթագճեանը (աւազանի անունը՝ Յակոբ) ծնուել է 1962թ. Դեկտեմբերի 11-ին՝ Պէյրութի Հաճն թաղամասում: Նախնական կրթութիւնն ստացել է ծննդավայրի «Սբ. Սահակ եւ Սբ. Մեսրոպ» վարժարանում:*

*1977թ. ընդունուել է Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան դպրեվանքը:*

*1979թ.-1985թ. ուսումը շարունակել է Մայր Աթոռ Սբ. Էջմիածնի Հոգեւոր ճեմարանում:*

*1985թ. պաշտպանել է աւարտաճառը «Հայ հին մատենագրութեան տպագրուած տեքստերի մատենագիտութիւն» թեմայով:*

*1985թ. որպէս սարկաւագ ծառայութեան է կոչւում Դամասկոսի թեմի առաջնորդարանում:*

*1986թ. Ապրիլի 20-ին՝ Դամասկոսի Սբ. Սարգիս եկեղեցում, ձեռամբ Դամասկոսի եւ Յունաստանի թեմերի առաջնորդ Տ. Ոսկան Արքեպս. Գալփակեանի ձեռնադրւում է կուսակրօն քահանայ՝ վերակոչուելով Արարատ աբեղայ:*

*1988թ. Փետրուարի 22-ին պաշտպանում է վարդապետական թեզը «Անտիոքի եկեղեցու պատմութիւն» խորագրով եւ վարդապետութեան աստիճան ստանում Օշականի Սբ. Մեսրոպ Մաշտոց եկեղեցում՝ ձեռամբ Տ. Ներսէս Արքեպս. Պոզապալեանի:*

*1986-1990թթ. Դամասկոսի թեմում ծառայել է որպէս առաջնորդի օգնական: 1990թ. հրաւիրուել է Քանատա եւ ստանձնել Թորոնթոյի Սբ. Երրորդութիւն եկեղեցու հոգեւոր հովուի պարտականութիւնները:*

*1993թ. տեղափոխուել է Մոնրէալ՝ որպէս առաջնորդի օգնական: 1994թ. նշանակուել է Մոնրէալի Հարաւային ափի Սբ. Նարեկ եկեղեցու հոգեւոր հովիւ:*

*1995-1996թթ. Օթթաւայում եւ Նիւ Եորքում հետեւում է լեզուի դասընթացների, իսկ 1996թ. ընդունւում է Նիւ Եորքի Սբ. Ներսէս աստուածաբանական ճեմարան եւ Սբ. Վլադիմիր ուղղափառ համալսարան:*

*1996թ. ստանձնում է Մոնրէալի Սբ. Գրիգոր Լուսաւորիչ առաջնորդանիստ եկեղեցու հոգեւոր հովուի պաշտօնը՝ միեւնոյն ժամանակ իրականացնելով Լաւալի Սբ. Խաչ եկեղեցու հովուի պարտականութիւնները եւ սպասաւորելով Օտթթա-*

*Շար.ը էջ 17*

# ԱԶԳԱՅԻՆ ԳԱՒԱՌԱԿԱՆ ԺՈՂՈՎ ԴԱՄԱՍԿՈՍԻ ՄԷՋ



Ընտրողական Քննիչ Ժողովը ձայներու քննութիւնը կը կատարէ

*Դամասկոսի Հայոց Թեմի Առաջնորդութիւնը անհուն ուրախութեամ կը յայտնէ, թէ կամօքն Աստուծոյ եւ մասնակցութեամբ համայն դամասկահայութեան, Կիրակի, 25 Մարտ 2007ին, Դամասկոսի Հայոց Թեմի Առաջնորդարանին մէջ տեղի ունեցաւ Ազգային Գաւառական Ժողովի (Թեմական Ժողով) լրացուցիչ անդամներու ընտրութիւնը:*

*Դամասկոսի Ազգային Քաղաքական Ժողովի նախաձեռնութեամբ եւ Դամասկոսի Առաջնորդանիստ Ս. Սարգիս Եկեղեցւոյ Թաղականութեան կազմակերպութեամբ ու Ընտրողական քննիչ յանձնախումբի հսկողութեամբ կատարուեցան հեզասահ եւ օրինաւոր ընտրութիւններ Ազգային Սահմանադրութեան կանոններուն տրամադրութեան համաձայն:*

*Ըստ Ազգային Սահմանադրութեան կանոններուն տրամադրութեան երկու տարին անգամ մը պէտք է կատարուի լրացուցիչ ընտրութիւններ Գաւառական Ժողովի անդամներու հարիւրէ քսանի համար: Դամասկոսի Թեմի Գաւառական Ժողովի կազմը ըլլալով 12 աշխարհական անդամներ, ըստ այնմ տեղի ունեցաւ երկու նոր անդամներու ընտրութիւնը: Գաւա-ռական Ժողովէն վիճակաւ հեռացած էին տիարք Նորայր Կիրակոսեանն ու Տոքթ. Յարութիւն Գրիգորեանը: 2007-ի ընտրութեան ներկայացան 4 թեկնածուներ յանձինս, տիարք Տոքթ. Ջաւէն Ղարղնեանի, Աստուր Յատուկեանի, Պօղոս Խաճարեանի եւ Շահան Սէմէրճեանի: Ընտրութեան մասնակիցներու քուէներու առաւելագոյն ձայները ստանալով Տիարք Աստուր Յատուկեան եւ Շահան Սէմէրճեան կը դառնան Ազգային Գաւառական Ժողովի նոր անդամները:*

*Լիայոյս ենք, որ Ամենաբարի Տիրոջ կամքով Ազգային Գաւառական Ժողովի նորընտիր անդամները պիտի լծուին Թեմի պայծառացման, բարգաւաճման եւ կազմակերպչական պատասխանատու եւ արժանի ծառայութեան:*





Wahib's
MIDDLE EAST RESTAURANT
الشرق مطعم
MEDITERRANEAN
LEBANESE FOOD

COME IN AND ENJOY OUR PATIO AND THE FINEST SHISA "HOOKAH"

CATERING FOR ALL OCCASION



MOUHAMAD SALEM
& HIS BAND ~ VARTAN / NAZO & AMIR

FAMILY ENTERTAINMENT
BANQUET HALL
EVERY
FRIDAY ~ & ~ SATURDAY
NIGHT
INTERNATIONAL ~ ARABIC
CALL FOR RESERVATION



BELLY~DANCING

910~E.MAIN ST,ALHAMBRA,CA.
TEL 626-281-1006 626-587-1048
FAX 626-281-3641

ՀԱՅԿԱԿԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԻՈՒԹԻՒՆ ■ ARMENIAN GENERAL BENEVOLENT UNION

ՀԲԸՄ 100 ՏԱՐԻ · YEARS AGBU

*Բեղմնաւոր Անցեալ, Լուսաշող Ապագայ:*
*Proud Past, Exciting Future.*



AGBU Asbeds

*Cordially invite you to*

***An Evening with Scholars***



**PROFESSOR VAHAKN DADRIAN**
***"Historical Answers to Turkish Denials"***
and
**PROFESSOR TANER AKCAM**
***"Turko-Armenian Relations After Hrant Dink"***

**FRIDAY, APRIL 20th, 2007 – 8:00 PM**

AGBU Manoogian-Demirdjian School
Aghajanian Hall
6844 Oakdale Ave., Canoga Park, CA

***Reception will follow***

**FREE ADMISSION**

For more information please call (626)794-7942

# GENOCIDE COMMEMORATION



**Please join the AGBU-AYA San Fernando Chapter in remembering the Armenian Genocide of 1915**

**SATURDAY, APRIL 21, 2007**
**8:00 PM – 10:00 PM**

AGBU-AYA NAZARIAN CENTER
6844 Oakdale Avenue, Canoga Park, CA (818) 313-9449

***-- Opening Ceremony by --***
the **AGBU-AYA Antranig Scouts** with anthems performed by the **AGBU-AYA Hye-Herosner Marching Band**

***-- Performances by --***
the **AGBU-AYA Sardarabad Dance Group**

***-- Participation of --***
top bands **Sight of Sound** and **Silent Noise**

***-- Special Guest Appearance by --***
**Daniel Decker**, famous vocalist

***-- Inspirational words by distinguished speakers --***

**FREE ADMISSION**

*Contributions are greatly appreciated and will assist AGBU-AYA in continuing to provide cultural, scholastic, athletic and artistic programs for the Armenian youth.*

**AGBU Hye Geen**
**Forum for Armenian Cultural and Social Studies**
&
**CSULA School of Social Work**
**Armenian Social Work Caucus**

*Invite You to*

## THE 2ND ANNUAL INTERDISCIPLINARY CONFERENCE

***"The Status of Armenian Communities Living in the United States"***

*Feature Speaker:*

**Prof. LYUDMILA HARUTYUNIAN, Ph.D.**
*Dean of Sociology Department,*
*Yerevan State University*

**Saturday, April 28, 2007**
**9:00 am to 3:30 pm**

**California State University, Los Angeles**
5151 State University Drive,
Los Angeles, CA 90032

Registration – $25
Student Registration – $15

Program and registration available at
WWW.AGBU.ORG/HYEGEEN

Send inquiries to:
agbuhyegeen@gmail.com

**AGBU HIGH SCHOOL PASADENA**

**THE QUALITY AND SAFE ALTERNATIVE FOR YOUR CHILD'S HIGH SCHOOL EDUCATION**
**2007-2008 ACADEMIC YEAR**
**GRADES 9 – 12**
For registration information, a campus tour and meeting with the principal, please call (626) 794-0363

**AGBU HIGH SCHOOL PASADENA**

**AGBU CENTENNIAL SPONSOR**

Commerce Casino LOS ANGELES
CROWNE PLAZA HOTELS & RESORTS
6131 E. Telegraph Rd. • Commerce, CA 90040 • 323.721.2100 • 714.879.2100 • commercecasino.com

# ՈՐՈՆՈՒՄՆԵՐ ԳԱՂԱՓԱՐԻ ՀԵՏՔԵՐՈՎ

*Շարունակուած էջ 14-էն*

*հանուեցինք ցիր ու ցան եղանք օտարութեան տարբեր երկիրներ, մէկ ժամ քայլելով յոգնած վիճակով կարողացայ գտնել Հ.Մ.Մ.ի ակումբը, բայց ափսոս երկաթէ դուռը փակ էր: Բաւականին ակումբի դրան առաջ, յուսահատուած սպասում էի, մեքենայ մը կանգնեց դրան առաջ, մէջից իջան երկու պարոններ, մօտիկացայ եւ հարցրեցի, այս ակումբը երբ կը բացուի, պատասխանեց իրիկունները: Ես այս ակումբի Հ.Մ.Մ.ի վարչութեան ատենապետն եմ, իմ անունը Պօղոս Մարգարեան է, իսկ ընկերոջս անունը Ճորճ Թաւուքճեան: Սկսանք հարցազրոյց ունենալ իրար հետ, միասին գնացինք Պօղոս Մարգարեանին քրոջ խանութը ետեւի կողմը ազատ էր երկուսով նստանք սուրճ ապսպրեց եւ սկսայ պատմել իմ ով լինելը, Հայաստանից մէկ շաբաթ առաջ եկել եմ, Պէյրութում Հ.Մ.Մ.ի սկաուտների խմբապետ եղած եմ: Որոշեցինք յաջորդ օրը իրիկունը ներկայ լինեմ Հնչակեան կուսակցութեան վարչութեան ժողովին: Ինձ տանելու համար յանձնարարութիւն տուեցին Նորայր Խաչատրեանին: Որոշեալ ժամին միասին ներկայ եղանք վարչութեան ժողովին: Շատ սիրալիր ընդունեցին, բոլորը երիտասարդ էին, յիշեցի իմ փոքր տարիքին Անդր-Նահրի վարչութեան մէջ էի աշխատում: Պայմանաւորուեցինք Հոլիվուտի մէջ «Ստեփան Սապահ-Կիւլ մասնաճիւղը վերականգնելը, կազմակերպել պասքէթպոլի խումբեր, եւ կարճ ժամանակում կարողացայ հաւաքել Հայաստանից եկած Հնչակեան կուսակցութեան անդամներին, որոնք ժամանակին Պէյրութի մէջ Հ.Մ.Մ.ի սկաուտներ եղած են, ընտրեցինք վարչութեան 7 անդամները, գլխաւորութեամբ ատենապետ՝ Նորայր Խաչատրեանին, քարտուղար՝ Անդրանիկ Համալեանին, գանձապահ գոյքերի պատասխանատու Արամ Ժամկոչեան, պասքէթպոլի մարզումների պատասխանատու՝ Մանուկ Տեբոյեանին: Որոշ ժամանակ անց Ստեփան Սապահ-Կիւլ մասնաճիւղի մէջ ընդգրկուեցին Քեսապից եկածներ, Պէյրութից, Տամասկոսից, Հալէպից, բաւականին մեծ թիւ սկսանք կազմել, բայց ափսոս բոլորս տարիքը առած մարդիկ էինք Հնչակեան գաղափարով օժտուած: Մեկնում էինք մեքենաներով ժողովը անցկացնելու Կլէնտէյլի ակումբին մէջ (մինչեւ որ Հոլիվուտը իր ակումբը ունենալը), իսկ պասքէթպոլի տղաները հաւաքւում էին Հոլիվուտից մեքենաներով տանում էին Կլէնտէյլի մարզասրահում պարապելու համար: Փասատինայի մէջ 65 հոգիից բաղկացած սկաուտներ գոյութիւն ունէին: Ինձ հրաւիրեցին տեսակցութիւն ունենալու սկաուտների հետ, խմբապետ Վարդան Քէօրօղլանեանը շատ կազմակերպուած խնդուն երեսով մի անձնաւորութիւն էր, ինձ ծանօթացրեց արենուշների խմբապետ Սեդա Գրիգորեանին, ուրախ դիմագիծով, երեխաներին հոգատար եւ չէր խնայում իր ժամերը օգտակար ըլլալու համար, ինձ ընդունեցին խորհրդի մէջ աշխատելու եւ իմ գիտելիքները հաղորդելու սկաուտների համար, ակումբի պատերը սկսայ զարդարել տարբեր տեսակի սկաուտների վերաբերեալ գունաւոր նկարներով, բոլոր իմ կարողութեամբ բացատրում էի որպէսզի հայ պատանին զարգանայ Հ.Մ.Մ.ի գաղափարով, իսկ Կլէտէյլի մարզական սրահին մէջ մարզւում էին բացի երկու խումբ պատանիներից նաեւ պոլսահայ երիտասարդներ, պատասխանատուութեամբ Նորայր Խաչատրեանին եւ Արամ Ժամկոչեանին: Կլէնտէյլի մէջ Հ.Մ.Մ.ի սկաուտներ գոյութիւն չունէին, պէտք է կազմակերպեմ, դիմեցի Կլէնտէյլի վարչութեան ատենապետ Ճորճ Աբգարեանին, ինձ օգտակար լինելու համար նաեւ Փասատինայի Կեդրոնական Վարչութեան համաձայնագիրը Կլէնտէյլի Վարչութեան, ընդունուեցի Վարչութեան մէջ աշխատելու, կազմակերպելու հայ արիների խումբը, պասքէթպոլի պատանիների ծնողների համաձայնութեան բոլորին բերեցի ակումբ, սկսայ գիտելիքների դասեր տալ եւ նշանակեցինք խմբապետ Մարտիկ Մուրատեանին: Բաւական պատանիներ արձանագրուեցին, ունեցանք 95 հոգիից բաղկացած սկաուտներ: Ճորճ Աբգարեանի, Մարտիկ Մուրատեանի ջանքերով կարճ ժամանակում բոլորի սկաուտական հագուստներ հագցրինք եւ սկսանք պատրաստել երդման արարողութեան, 6 ամիս անց բոլորը պատրաստ էին իրենց գիտելիքներով, որոշեցինք Փասատինայի «Աղաճանեան» սրահի մէջ 60 հոգին իր երդումը տալու դառնալու Հ.Մ.Մ.ի գաղափարով պատանիներ, նաեւ մեծահասակ կուսակցականներ, որ Պէյրութի մէջ սկաուտներ եղած են իրենց պաշտօններով պիտի մասնակցին ընդհանուր տողանցքին հագնուած սկաուտական հագուստներով:*

*1996 թ. «Աղաճանեան» սրահի մէջ բոլոր ծնողների կուսակցական անդամների նաեւ կեդրոնական վարչութեան ներկայութեան, նուագախումբով տողանցեցին մեծահասակ սկաուտները պատուոյ դրօշը յանձնելով սկաուտ պատանիներին: Վերջում հայ արիները իրենց երդումները տուեցին, «պատուոյս վրայ» կը խոստանամ լինել հաւատարիմ Աստուծոյ եւ ծառայել Հայրենիքիս, միշտ օգնել ուրիշին եւ հնազանդիլ Հ.Մ.Մ.ի սկաուտական դաւանանքին, միշտ պատրաստ լինելով ազգին, հայրենիքին նկատմամբ»: Ելոյթներ ունեցան Ճորճ Աբգարեանը, Մարտիկ Մուրատեանը, Գրիգոր Գոնտուլեանը, Անդրանիկ Համալեանը եւ Ժան Աբոյեանը, իսկ հաղորդումը կազմակերպեց բարձր մակարդակով Ստեփան Յովակիմեանը: Սրահին մէջ բազմամարդ մարդկանցով լեցուած շնորհաւորեցին գեղեցիկ միջոցառման համար, իսկ մեծահասակները սկաուտական հագուստով աւելի տպաւորիչ էին՝ յիշելով իրենց պատանեկութիւնը: Սապահ-Կիւլ մասնաճիւղի Հնչակեան կուսակցութեան մարտիկները իրենց գաղափարը վեր պահելով ծառայել են 60 տարիներ շարունակ կուսակցութեան շարքերէն ներս: Մի քանի տարուայ ընթացքում իրենց մահկանացուները կնքեցին յաւերժութեան, միշտ պահելով յիշողութիւնը Հնչակեան կուսակցութեան ընկերներին եւ հարազատներին անմոռաց յիշատակին: Աստուած լուսաւորի բոլոր հոգիները: Գրիգոր Գոնտուլեան, Ստեփան Գիթապչեան, Տիրան Քէչիչեան, Կիրակոս Գասպարեան, Յակոբ Բիսիկեան, Յարութիւն Ջափարեան, Փառնակ Այվազեան, Նշան Թօսունեան, Կարապետ Ջաքարեան, Կարօ Շնորհաւորեան, Յակոբ Եարալեան, Ճորճ Աբգարեան եւ Յակոբ Թիթիզեան:*

*(Վերջ)*

**ՄԱՍԻՍ**
**ԱՄԵՆԱՎՍՏԱՀԵԼԻ ԱՂԲԻՒՐԸ ՀԱՅՐԵՆԻ ԼՈՒՐԵՐՈՒ**

**HARUT DER-TAVITIAN**
License #0B28270

1807 W. Glenoaks Blvd., Suite 202
Glendale, CA 91201

**Tel.: 818/502-3233**
**Fax: 818/502-3244**
**Pgr.: 818/608-9898**
**info@excelhye.com**
**www.excelhye.com**

HYE INSURANCE SERVICES

AUTO • HOME • LIFE • HEALTH • DISABILITY • COMMERCIAL



## ՅԱՐՈՒԹԵԱՆ ՅԱՂԹԱՆԱԿԸ ՄԱՀՈՒԱՆ ԽԱՅԹՈՑԻՆ ՎՐԱՅ

*Շարունակուած էջ 1-էն*

Ան ներշնչուած Քրիստոսի յարութեան հրաշագործութենէն, ինքզինք գտաւ իր հաւատքին լայնատարած հովանիին ներքեւ:

Դարեր միշտ, մեր նախահայրերը, ամուր կանգնած իրենց հաւատքին վրայ, մէկ ձեռքին խաչ, միւսին վահան՝ մաքառեցան ընդդէմ արտաքին միջամտութիւններուն, առ ի պաշտպանութիւն հայուն ինքնութեան ու գոյութեան պահպանման:

Անոնք, հաւատքով զօրացած՝ գիր ու մատեան, մշակոյթ տուին մեր ժողովուրդին, կարենալ դիմագրաւելու համար դուրսէն եկած ամէն միջամտութիւն ու փորձանք: Այդ գիր ու մատեանով, մշակոյթով, մեր նախահայրերը խորացուցին մեր ժողովուրդին ազգային արմատները: Մղում տուին մեր ազգային ձգտումներուն: Տուին կորով, լոյս եւ կեանք: Գոյատեւեցինք միշտ յարութիւն առնելով, Քրիստոսի օրինակով:

Ս. Յարութեան հրաշագործութեան սրբազան պատգամն է կառչած մնալ մեր հաւատաւոր նախնիքներէն մեզի աւանդ մնացած ազգային ժառանգութիւններուն՝ մեր մեսրոպեան լեզուին, մշակոյթին, ազգին ու հայրենիքին:

## ԻՄ ԶԷՆՔՆ ԻՄ ԼՌՈՒԹԻՒՆՆ Է

*Շարունակուած էջ 5-էն*

*կութիւն է ուղարկւում: Իսկ մի գուցէ Թուրքական կողմն էլ աւելի նուաստացուցիչ դրուագներ էր նախապատրաստում ՀՀ պաշտօնական պատուիրակութեան համար: Մի՞թէ պէտք չէր այդ ամէնը նախապէս ճշդել՝ հաշուի առնելով եկեղեցու բացումից միջազգային մեծ PR անելու Թուրքական կողմի շահագրգռուածութիւնը, որոշակի պայմաններ դնել նրանց առաջ, բանակցութիւններ վարել եւ այլն, եւ այսպէս շարունակ:*

*Ակնյայտ է, որ այս ամէնը չի արուել, եւ զարմանալի չէ, որ երէկ ՀՀ ԱԳ նախարար Վարդան Օսկանեանը լրագրողների հետ զրոյցում մի տեսակ արդարացողի դերում է եղել: Նա ասել է, որ հայկական պատուիրակութեան ներկայութիւնը նպատակ ունէր աշխարհին ապացուցել յուշարձանի հայկական պատկանելութիւնը: Ընդ որում, ըստ ՀՀ ԱԳ նախարարի, հայկական պատուիրակութիւնը դա արել է իր լռութեամբ: «Միջոցառման ժամանակ հայկական կողմը մնացել է արժանապատիւ ու համեստ՝ պարզ լռութեամբ կարողանալով տեղ հասցնել իր ուղերձը»,- ասել է Օսկանեանը:*

*Իսկ մի գուցէ հայկական պատուիրակութեան լռութեան կողքին Թուրքական պետութեան բարձրագոչ ներկայութիւնը աշխարհին աւելի շուտ ապացուցեց յուշարձանի այսօր արդէն՝ Թուրքական պատկանելութիւնը: Եւ կրկին, այդ դէպքում հարց է առաջանում՝ դրա համար ինչո՞ւ էր պէտք Հայաստանի պաշտօնական պատուիրակութեան ներկայութիւնը: Ոչ ոք, իհարկէ, չի պնդում, որ Հայաստանը ընդհանրապէս պէտք է մերժէր հրաւէրը եւ հրաժարուէր արարողութեանը մասնակցելուց: Սակայն խնդիրն այն է, որ այս անգամ էլ մենք բախուեցինք մի իրավիճակի հետ, երբ Հայաստանի Հանրապետութիւնը դարձաւ ընդամէնը խաղալիք եւ այն էլ այն պետութեան ձեռքում, որին փորձում է ինչ-որ բան պարտադրել, որից ունի որոշակի պահանջներ, եւ այդ պահանջները պահում է արտաքին քաղաքականութեան օրակարգի առաջին հորիզոնականում: Եւ այս իմաստով առաւել քան ուշագրաւ է ՀՀ ԱԳՆ խօսնակի պաշտօնակատար Վլադիմիր Կարապետեանի երկարաշունչ մեկնաբանութիւնը Սուրբ Խաչ եկեղեցու վերանորոգման վերաբերեալ: «Հայաստանը եւ հայերը ցանկանում են առարկայական, լուրջ երկխօսութիւն սկսել Թուրքիայի հետ մեր ցաւոտ անցեալի եւ հարեւանների հետ միասնական ապագայի վերաբերեալ: Մենք չենք ցանկանում ներքաշուել պէստերի աւարտ չունեցող մի խաղի մէջ, որը ոչ թէ իրական հաշտեցման, այլ քարոզչական նպատակ է հետապնդում եւ միջազգային հանրութեան ուշադրութիւնը շեղում է իրական խնդիրներից»,- իր մեկնաբանութեան մէջ ասել է ԱԳՆ խօսնակի պաշտօնակատարը: Ստացւում է, որ, իսկապէս, Հայաստանը չցանկանալով է ներքաշւում այդ խաղերի մէջ:*

## ԼՈՒՍԱՐԱՐԱՊԵՏ Է ՆՇԱՆԱԿՈՒԵԼ ԱՐԱՐԱՏ ԵՊԻՍԿՈՊՈՍ ԳԱԼԹԱԳՃԵԱՆ

*Շարունակուած էջ 16-էն*

*ուայի Սբ. Մեսրոպ եկեղեցում որպէս այցելու հովիւ:*

*1999թ. Հոկտեմբեր 11-ին, իր մատուցած ծառայութեանն ի գնահատութիւն, օրհնութեամբ Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Ա. Ամենայն Հայոց Կաթողիկոսի եւ ձեռամբ Քանատայի Հայոց Թեմի առաջնորդ Տ. Յովնան Արքեպս. Տէրտէրեանի ստանում է ծայրագոյն վարդապետութեան աստիճան, եւ նոյն Թուականին առաջնորդի կողմից նշանակւում է Քանատայի հայոց Թեմի Առաջնորդական փոխանորդ:*

*2003թ. Ապրիլի 1-ին նշանակուել է Հայաստանեան ծրագրերի, Հայաստանի ծնողազուրկ երեխաների, Հայ եկեղեցասէր երիտասարդաց կազմակերպութեան վարիչ տնօրէն, ինչպէս նաեւ Քանատայի Թեմի փոքր ծուխերի հոգեւոր տեսուչ:*

*2003թ. Քանատայի Թեմի առաջնորդ Տ. Բագրատ Եպս. Գալստանեանի տնօրինութեամբ նշանակւում է Լաւալի Սբ. Խաչ եկեղեցու հոգեւոր տեսուչ, իսկ 2004 թ. նոյն եկեղեցու հոգեւոր հովիւ՝ պահելով մինչ այդ ունեցած բոլոր պաշտօնները:*

*Մոնրէալում ծառայութեան ընթացքին Արարատ Սրբազանը կազմակերպել է մի շարք եկեղեցական հրատարակութիւնները՝ գրքոյկներ եկեղեցու խորհուրդների եւ արարողութիւնների մասին: Տպագրել է «Նարեկ» կիրակնօրեայ թերթիկը, 2000թ.-ից հրատարակել է Եկեղեցու պաշտօնական «Բուրաստան» երկամսեայ թերթը:*

*2006թ. Յունիսին տեղափոխուել է Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին եւ Յուլիսի 10-ին Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Ամենայն Հայոց Կաթողիկոսի կողմից նշանակուել է Սբ. Էջմիածնի պատկան վանքերի տեսուչ:*

*2006թ. Նոյեմբերի 19-ին ձեռամբ Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Ամենայն Հայոց Կաթողիկոսի օծուել է Եպիսկոպոս:*

## ՅՈՎՆԱՆ ԱՐՔԵՊՍ. ՏԷՐՏԷՐԵԱՆԻ ՔԱՐՈԶԸ

*Շարունակուած էջ 13-էն*

*միայն պիտի ապահովէ շարք մը ուշացած հարցերու լուծումը:*

*Սիրելի բարեպաշտ ու հաւատաւոր զաւակներ Հայց. Առաքելական մեր Մայր Սուրբ Եկեղեցւոյ, կեանքի կոչենք Առաքեալի պատգամը՝ «ԶՔրիստոս զգենուլ»: Ամրացնենք մեր քրիստոնէական հաւատքը, առաւել զօրացնենք հայ ընտանեկան սրբութիւնը՝ Քրիստոսի լոյս Աւետարանի պատգամներու եւ մեր հայրերու խրատականներու ուսուցմամբ մեր զաւակներուն, մեր կեանքը դարձնենք գործնապէս սիրոյ եւ խաղաղութեան գործիք՝ մարմնաւորած ըլլալու համար Քրիստոսի Յարութեան խորհուրդը մեր առօրեայ կեանքին մէջ:*

*«ԶՔրիստոս զգենուլ»:*

*Պօղոս Առաքեալի այս խորիմաստ պատգամը այսօր, մանաւանդ, Արեւմտեան Թեմին սահմաններուն մէջ ապրող աւելի քան յիսուն համայնքներ ներկայացնող ժողովուրդի համար նոր նշանակութիւն ունեցաւ, երբ կը տօնախմբենք Թեմի 80-ամեակը 1898 Թուականին Ամերիկայի տարածքին Խրիմեան Հայրիկով ծնունդ առած Հայց. Եկեղեցին, 1927 Թուականին ունեցաւ վարչական նոր դրուածքներ եւ Ամերիկայի Թեմը իր մէջ ունեցաւ Թեմական երկու կառոյց՝ Արեւմտեան Թեմ եւ Արեւելեան Թեմ: Անցնող տարիներու ընթացքին Թեմը անընդհատ բարգաւաճեցաւ Առաջնորդներուն, եկեղեցականներու, Թեմական եւ պատկան մարմիններու եւ ժողովուրդի հաւատքի կեանքով: 80-ամեակի տօնակատարութիւնը կ՚իմաստաւորուի միայն այն ժամանակ, երբ Առաքեալի պատգամը կը դարձնենք մեր կեանքի նշանաբանը եւ անգամ մը եւս Եկեղեցին կը դարձնենք արթուն ներկայութիւն մը Թեմական կառոյցէն ներս: Բոլորով, ձեռք-ձեռքի տուած Աստուծոյ օգնականութեամբ ու առաջնորդութեամբ, Քրիստոսի սիրով ու հաւատքի նոր գործերով հարստացած շարունակենք Եկեղեցին դարձնել հաստատութիւնը մեր կեանքին:*

*«ԶՔրիստոս զգենուլ»:*

*Այս գիտակցութեամբ յայտարարենք Քրիստոսի Յարութիւնը, եւ այն ժամանակ պիտի զգանք, որ ե՛ւ մենք նորոգուած ենք, ե՛ւ մանաւանդ մեր մէջ կը գտնենք կեանքը նորոգելու ուժը:*

*«Քրիստոս Յարեաւ ի մեռելոց»*

*«Օրհնեալ է Յարութիւնն Քրիստոսի»:*

*ՅՈՎՆԱՆ ԱՐՔ. ՏԷՐՏԷՐԵԱՆ, ԱՌԱՋՆՈՐԴ*

## ՀԱՅՑ. ԿԱԹՈՂԻԿԷ ԵԿԵՂԵՑԻՈՅ ՊԱՏԳԱՄԸ

*Շարունակուած էջ 5-էն*

*լաւ փաստ՝ թէ Քրիստոս յարութիւն չէր առած. վկայ՝ անոր մարմնոյն մնացորդները որ թաղուած ու պահուած էին գաղտնաբար:*

*Ոչ առաջին ոչ վերջին փորձն է այս՝ խախտելու համար քրիստոնեաներուն հաւատքը: Անոր հեղինակները շատ լաւ գիտէին թէ Քրիստոսի վարդապետութիւնը հիմնովին քանդելու համար չկար աւելի լաւ միջոց քան խաբեբայ հռչակել զայն, սուտի վերածելով անոր նախատեսութիւնը՝ թէ մահուանէն երեք օր ետք յարութիւն պիտի առնէր:*

*Ճիշդ է որ «զգայացունց» լուրը աշխարհի շրջանն ըրաւ եւ հարցադրումներ յառաջացուց գիտնականներու եւ պատմաբաններու մօտ: Բայց բարեբախտաբար քիչեր արժէք տուին անոր, նկատելով զայն վաճառականական նպատակներ հետապնդող մեքենայութիւն մը: Սակայն չկա՞ն միամիտ կամ տկար հաւատքով քրիստոնեաներ որոնք հարց պիտի տան թէ չէ՞ն խաբուած արդեօք հաւատալով թէ Քրիստոս, իր աստուածային զօրութեամբ, յարութիւն առած է մեռեալներէն:*

*Մեր հաւատքը կախուած չէ կեղծարարներու հնարքներէն. ան ունի իբր հիմ Աւետարանի պայծառ ուսուցումը որ դարերու մրրիկներէն ու հալածանքներէն անցնելով հասած է մեզի՝ անվթար ու անաղարտ: Ան կը քաղէ իր ուժը առաքեալներու եւ անոնց յաջորդներուն վկայութենէն. հալածանքի ենթարկուած, «անոնք ուրախ էին որ կը նախատուէին յարուցեալ Քրիստոսի անունին համար»: Ո՛չ չարչարանքը ո՛չ մահուան սպառնալիքը կը սարսափեցնէր կամ դասալքումի կը մատնէր զանոնք, որովհետեւ իրենց ուժը կը քաղէին ոչ թէ մեռեալէ մը, պարտեալէ մը, այլ մէկէ մը որ տէրն էր կեանքի եւ մահուան:*

*Քսան դարերէ ի վեր նոյն կենդանի հաւատքն է որ արմատացած է մեր մէջ եւ կը մղէ մեզ աներկիւղ հռչակելու թէ «Յարեա՛ւ Քրիստոս» եւ մենք անոր վկաներն ենք մինչեւ աշխարհի վերջը:*

*Որովհետեւ կը հաւատանք, Առաքեալին հետ՝ թէ «եթէ Քրիստոս յարութիւն առաւ, մենք ալ իրեն հետ յարութիւն պիտի առնենք»:*

*ՄԱՆՈՒԷԼ ԵՊՍ. ՊԱԹԱԳԵԱՆ*
*ԱՌԱՋՆՈՐԴ ՀԻՒՍԻՍԱՅԻՆ ԱՄԵՐԻԿԱՅԻ ԿԱԹՈՂԻԿԷ ՀԱՅՈՑ*

## ՀԱՅՑ. ԱՒԵՏԱՐԱՆԱԿԱՆ ԵԿԵՂԵՑԻՈՅ ՊԱՏԳԱՄԸ

*Շարունակուած էջ 5-էն*

*կը շարունակուի անդենականին մէջ անվերջ ու անվախճան: Ուրեմն, Ս. զատիկը ոչ միայն քսան դարեր առաջ պատահած դէպքի մը ոգեկոչումն է, այլ նաեւ Տէր Յիսուս Քրիստոսով ապրուած յաղթական կեանքի մը տօնակատարումն է:*

*Անոնք որոնք Քրիստոսի հանդէպ ունին կատարեալ հաւատք եւ յանձնառում, անոնց կեանքը կը լիայնայ Քրիստոսատուր սիրոյ, խաղաղութեան եւ զօրութեան պարգեւներով:*

*Այսպէսով անոնք իրենց կեանքն ու ճակատագիրը կը կապեն Յարուցեալ Քրիստոսի յաղթական կեանքին:*

*Արդ, Ս. Զատիկը պատեհ առիթ մըն է բոլոր անոնց որոնք կ՚ուզեն յաւիտենական կեանքը սկսիլ այժմէն իսկ:*

*Մեր մաղթանքն ու աղօթքը այն է որ հայորդիներ ամէնուրեք ընդունին աստուածատուր այս կեանքը եւ իրենց կենցաղով, վարք ու բարքով վկայեն՝ «Քրիստոս յարեաւ ի մեռելոց, Օրհնեալ է Յարութիւնն Քրիստոսի»:*

*ՎԵՐ. ԴՈԿՏ. ՎԱՀԱՆ Յ. ԹՈՒԹԻԿԵԱՆ*
*ԳՈՐԾԱԴԻՐ ՏՆՕՐԷՆ՝ ՀԱՅ ԱՒԵՏԱՐԱՆԱԿԱՆ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ*

# «ԹՈՒՐՔԻԱՅԻ ՆՄԱՆ ԵՐԿՐՆԵՐԸ ՆԱԽ ՊԷՏՔ Է ԼՈՒԾԵՆ ՍԵՓԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ»

*Շարունակուած էջ 6-էն*

*խացիների շատ բնական համակրանքն է Հայաստանի հանդէպ: Եղբայրս՝ Օլիվիէն, Հայաստան էր մեկնել Նախագահ Շիրակի հետ, եւ մեծ ոգեւորութեամբ էր խօսում այդ ուղեւորութեան մասին: Լրագրող Դանիէլ Բիլալեանը եւս շատ խանդավառ է ճամբորդութիւնից:*

- 4 տարի առաջ՝ մեր առաջին զրոյցի ժամանակ, ինձ ասացիք, որ լրագրողի գլխաւոր յատկանիշը պէտք է լինի իրեն չդաւաճանելը եւ ճնշումներին դիմակայելը: Ի՞նչ էք զգում Հրանտ Տինքի սպանութիւնից յետոյ, որը կեանքով վճարեց յանուն այդ սկզբունքի:

*- Ես խոր վրդովմունք ապրեցի... Դա ահաւոր ստորութիւն է: Սովորականի պէս պատուիրատուները գործում են անտեսանելիօրէն եւ թիրախ դարձնում առաւել անպաշտպաններին, մասնաւորապէս միայն գաղափարներով ազդեցութիւն գործող մտաւորականներին: Նաեւ սարսափելի եմ համարում, որ գրականութեան Նոբելեան մրցանակի դափնեկիր Օրհան Փամուքը ստիպուած է տարագրուել, քանի որ պաշտպանութիւն է յայտնել գազանաբար սպանուած հայ լրագրողին: Իմ կարծիքով, դա ոգու եւ մտքի ահաւոր նահանջ է: Մարտի վերջերին «Ֆայար» հրատարակչութիւնում լոյս կը տեսնի իմ գիրքը «Սիրել նշանակում է գործել» հաւանական վերնագրով: Այնտեղ ես լրագրողների դիրքորոշմանը վերաբերող ամբողջ մասը նուիրում եմ Աննա Պոլիտկովսկայային եւ Հրանտ Տինքին:*

- Ազգային ժողովում ընդունուած եւ Հայոց Ցեղասպանութեան ուրացումը պատժող օրէնքն այսօր լռուել-մնացել է Սենատում: Ի՞նչ կարծիքի էք այդ օրէնքի անհրաժեշտութեան մասին:

*- Հիացած չեմ պատմական իրադարձութիւններին օրէնսդրական ձեւակերպում տալու սկզբունքից: Կարծում եմ, աւելի լաւ կը լինի մարդկանց պատմութեան սեւ էջերին ծանօթացնել պատմութեան գրքերի, գիտաժողովների, ֆիլմերի միջոցով, քան օրէնքի պարտադրանքին ենթարկել: Պատմաբաններին ճնշող օրէնքներն ինձ նեղութիւն են պատճառում:*

- Որպէս լրագրող ի՞նչ էք մտածում Եւրոմիութեանը Թուրքիայի հնարաւոր անդամակցութեան մասին:

*- Պարզապէս ուզում եմ, որ մամուլի ազատութիւնն աստիճանաբար ճանապարհ հարթի Թուրքիայում, ինչպէս նաեւ Ռուսաստանում եւ Չինաստանում: Նման երկրները համաշխարհային ընկերակցութեանը կարող են միանալ սեփական խնդիրները լուծելուց յետոյ միայն:*

- Այսօր նոյնիսկ «Մոնդ» հեղինակաւոր օրաթերթը կորցրել է իր ընթերցողների վստահութիւնը: Որոշ մտաւորականներ կարծում են, որ այսօր Ֆրանսիայում ժողովրդավարութիւնը մամուլի հիւանդութիւն ունի:

*- Անշուշտ, կան շեղումներ, բայց ոչ հիւանդութիւններ: «Մոնդը» իրօք տպագրել է աչառու յօդուածներ, որոնք դուր չեկան նաեւ ինձ՝ 40 տարուայ ընթերցողիս: Բայց վերջին ամիսներին նկատւում են դրական փոփոխութիւններ:*

- Ձեր կարծիքով, կա՞յ թերթ, որը ճշմարտութիւնը չի վերածում քարոզչութեան:

*- Ամէն թերթ ունի իր ուղղուածութիւնը: Մամուլը բաւական երկար ժամանակ չի դիմել ուղղակի իր ընթերցողներին: Նման թերթերից է այսօր ծանր վիճակում յայտնուած «Լիբերասիոնը»: Բայց սեփական ընթերցողներին դիմող «Պարիզիենը» եւ շրջանային օրաթերթերը լաւ վիճակում են:*

- Այսօր կարեւոր է իմանալ, լրատուամիջոցնե՞րն են ազդում ընտրութիւնների վրայ, թէ՞ ժողովուրդը կարողանում է աբստրահուել որոշ լրատուամիջոցների շահարկումներից եւ ընտրել ըստ սեփական փորձառութեան:

*- Ֆրանսիայի բախտը բերել է ողջամտութեան առումով: Մարդիկ ընտրում են ըստ իրենց զգացողութեան: Ճիշտ է, նրանք դիտում են հաղորդումներ, հեռուստատեսութեամբ եւ ռադիոյով լսում լուրեր, բայց սեփական կարծիք են կազմում եւ վերջին պահին իրենց ընտրութիւնն են կատարում: Ֆրանսիացիներին երբեւիցէ որեւէ բան չես պարտադրի:*

- TF1-ի ուժը սովորաբար բացատրում են դրա տնօրինութեան կայունութեամբ եւ երկարակեցութեամբ, մինչդեռ հանրային ծառայութեան ղեկավարներն անդադար փոխւում են:

*- Ճիշտ է: Տնօրինութեան կայունութիւնը շատ է օգնում: Մեր բախտը բերել է, որ տնօրէնները իշխանութեան կողմից չեն նշանակւում:*

- Ձեր կարծիքով, քաղաքական գործիչներն ինչո՞ւ են նախընտրում արտայայտուել TF1-ով, թէեւ աւելի շատ հրաւէրներ են ստանում հանրային ալիքներից:

*- Մենք փորձում ենք նրանց հրաւիրել ճիշտ պահին եւ չձանձրացնել մարդկանց: Ունենք շատ մեծ լսարան, որը թերեւս հրապուրում է քաղաքական գործիչներին: Երբ նրանց ես եմ ընդունում, ջանում եմ շատ բարեկիրթ լինել եւ արտայայտուելու հնարաւորութիւն տալ: Որոշ ինքնասիրահարուած լրագրողներ անվերջ ընդհատում են զրուցակիցներին: Իսկ մենք ուզում ենք չէզոք լինել:*

- Ձեր «Գիշերային թռիչքը» գրական հաղորդման ժամանակ Սիլվեն Ագասինսկին (Տիկին Ժոսպենը) ասաց, որ ճշմարտութիւնը յաճախ կախուած է հանգամանքներից: Ի՞նչ կասէք այդ կապակցութեամբ:

*- Կարելի է բանավիճել: Երբ լրագրող ես, լսում ես երկու ճամբարներին, քանզի ճշմարտութիւնն ունի երկու ճամբար, որոնցից մէկի ուժը երբեմն աւելի համոզիչ է լինում: Մէկ իրադարձութեան մէջ յաճախ լինում է երկու ճշմարտութիւն: Այնպէս որ, հարկաւոր է ներկայացնելիս նրբանկատ լինել:*

- Կարօտո՞ւմ էք անցեալի արժէքներին:

*- Այո, պատահում է շատ առիթներով: Բայց աշխարհը փոխւում է, եւ չպէտք է դա հիւանդագին ընդունել: Բնոյթով ես լաւատես եմ:*

- Դուք հմուտ գրականագէտ էք, լաւ տիրապետում էք ռուսերէնին: Ռուս գրողներից ո՞ւմ էք ամենաշատը հաւանում:

*- Ռուսական թեման անսպառ է: Նախընտրում եմ Լերմոնտովին, բայց պաշտում եմ նաեւ Տուրգենեւին, Գոգոլին, Պուշկինին, Դոստոեւսկուն, նուազ չափով՝ Տոլստոյին:*

- Իսկ ֆրանսիացիների՞ց:

*- Հիանում եմ Շատոբրիանի տաղանդով: Պրուստով: Այսօրուայ հեղինակներից շատ եմ սիրում Ժիւլիէն Գրաքին:*

- Ձեր զրոյցներից մէկում ասել էք, որ գրաւչութիւնն առաքինութիւն է, եթէ գռեհիկ կամ վտանգաւոր չէ: Կարո՞ղ ենք ասել, որ Ձեր գրաւչութիւնը Ձեր եթերային երկարակեցութեան գաղտնիքներից մէկն է:

*- Դժուարանում եմ իմ դէպքում «այո» ասել: Բայց դա ճիշտ է քաղաքական գործիչների համար: Սեգոլէն Ռուայալը, Նիկոլա Սարկոզին եւ Ֆրանսուա Բայրուն իւրովի գրաւչութեան ուժ ունեն: Անձնական հմայքը պրոֆեսիոնալիզմի բաղկացուցիչ մասն է:*

- Ուրեմն, գեղեցիկ կեցուածքն անհրաժեշտ յատկանիշ է ոչ միայն արուեստի ոլորտում, այլեւ քաղաքականութեա՞ն մէջ:

*- Անկասկած: Բայց նաեւ ասում են, որ «պաշտօնն է ստեղծում մարդուն»:*

# ԽՕՍԻԼ ԻՐԱՆԻ ԵՒ ՍՈՒՐԻՈՅ ՀԵՏ

*Շարունակուած էջ 6-էն*

*նկատուի, սկիզբէն լաւ չէր պատրաստուած: Ըստ դիտողներուն, Պուշ Իրաքի մէջ «ձախողելով» առիթ տուաւ Իրանի Միջին Արեւելքի ամենէն ուժեղ շրջանային ուժը դառնալու: Նաեւ տեղի ունեցող նոյնքան եւ աւելի լուրջ զարգացում մը որ յանգեցաւ Ամերիկայի մեկուսացման, եւ համաշխարհային գետնի վրայ ազդեցութեան տկարացման: Այս պայմաններու տակ, իրաքեան եւ աֆղանիստանեան արշաւանքները տակաւին կը տապլտկին տիղմի եւ անորոշութեան մէջ:*

### *Ի՞ՆՉ ԼՈՒԾՈՒՄՆԵՐՈՒ ՄԱՍԻՆ ԿԸ ԽՕՍՈՒԻ*

*Պատմականօրէն ծանօթ երեւոյթ է որ Միջին Արեւելքի երկիրներու սահմանները Արեւմուտքի կողմէ արուեստականօրէն ճշդուեցան: Ամերիկացի կարգ մը մտածողներ կան որ նոր քարտէս մը փոթորկոտ այդ շրջանի մէջ, կրնայ բարեբար լուծում մը հանդիսանալ եւ նպաստել խաղաղութեան հաստատման: Այլ խօսքով, սիւննի-շիի-քիւրտ տարակարծութիւնը լուծելու համար, կ՚առաջարկուի ստեղծել առանձին պետութիւններ այս երեք կողմերու համար: Երեւոյթները այնպէս են որ արդէն իսկ այս երեք կողմերը հաստատած են իրենց ազդեցութեանց սահմանները, քիւրտերը ունենալով ինքնավար Քիւրտիստանը, շիիները արդէն կ՚իշխեն հարաւի մէջ, իսկ սիւննիները կ՚ունեան իրենց բաժինը Պաղտատի շուրջ: Մանրամասնութիւնները կարելի է մշակել, յատկապէս քարիւղային եկամուտի վերաբերեալ:*

### *ՍԱՀՄԱՆԱՅԻՆ ԲԱԺԱՆՈՒՄՆԵՐԸ ՆԱԽԸՏՐԵԼԻ*

*Բնական է որ հարցուի: Արդեօ՞ք սահմանային այս բաժանումները, որոնց մասին կարելի է խորհրդակցիլ Իրանի եւ Սուրիոյ հետ, նախընտրելի չե՞ն այս երկուքի դէմ պատերազմ մղելէ: Հարցը կը մնայ թէ Ամերիկան ինչի՞ շուրջ կրնայ բանակցիլ Իրանի եւ Սուրիոյ հետ, եւ այս վերջինները ինչպէ՞ս կրնան փոխադարձել: Ի վերջոյ, շատ ալ դժուար չէ, միջազգային դիւանագիտութեան մէջ, ակնկալել թէ երկիրներ կրնան դրժել իրենց խոստումները, եւ վերադառնալ իրենց նախկին ախորժակներուն: Երբեք պէտք չէ մտահան ընել այն հաստատ ենթադրութիւնը որ թէ Իրան եւ թէ Սուրիա, նոյնիսկ եթէ բանակցին Ամերիկայի հետ, իրենց սեփական շահերը ունին, սկսելով, Իրանի պարագային՝ Հիւլէական փնտռտուքներ, իսկ Սուրիոյ պարագային՝ Իսրայէլի հետ իր երկարամեայ քաղաքական եւ զինուորական հարցերը, յատկապէս Կոլանի վերաբերեալ: Պաղեստինեան հարցի լուծումը տակաւին երկար ժամանակի կը սպասէ, եւ այս լոյսին տակ, ոչ Իրան եւ ոչ ալ Սուրիա կրնան տրամադիր ըլլալ Ամերիկայի օգնելու իր իրաքեան արկածախնդրութենէն, օգուտ քաղելու: Եւ ինչո՞ւ պիտի օգնեն, երբ Ամերիկայի դժուարութիւնները այս երկուքին շատ ալ լաւ «գործին կու գայ»: Միւս կողմէ սակայն, «բանակցութիւն» հասկացողութիւնը լուծման տրամադրութիւն կրնայ նշանակել: Պէտք է մաղթել որ շատ երկար սպասում չըլլար լուրջ խօսակցութիւններ սկսելու...*

## ՇՆՈՐՀԱԿԱԼՈՒԹԻՒՆ

*Տէր եւ Տիկ. Փիէռ եւ Նաթալի Քէօրողլեաններու մանչ զաւակով բախտաւորուելուն ուրախ առթիւ Լուիզիանայէն Տէր եւ Տիկ. Պօղոս Մութաֆեան կը շնորհաւորեն ընտանեկան պարագաները, յատկապէս Տէր եւ Տիկ. Ընկ. Վարդան եւ Ծովիկ Քէօրողլեանները:*

*Առ այդ $100 կը նուիրեն «Մասիս» շաբաթաթերթին:*

## ՇՆՈՐՀԱՒՈՐՈՒԹԻՒՆ

*Տէր եւ Տիկ. Փիէռ եւ Նաթալի Քէօրողլեաններու մանչ զաւակով բախտաւորուելուն ուրախ առթիւ Լուիզիանայէն Տէր եւ Տիկ. Վազգէն Գալթագճեան կը շնորհաւորեն ընտանեկան պարագաները, յատկապէս Տէր եւ Տիկ. Ընկ. Վարդան եւ Ծովիկ Քէօրողլեանները:*

*Առ այդ $500 կը նուիրեն «Մասիս» շաբաթաթերթին:*

## ՇՆՈՐՀԱՒՈՐՈՒԹԻՒՆ

*Տիկ. Արշօ Եփրեմեան շնորհակալութիւն կը յայտնէ բոլոր անոնց որոնք մասնակից եղան իր սիրեցեալ ամուսնոյն մահուան սուգին: Առ այդ $100 կը նուիրէ «Մասիս» շաբաթաթերթին:*

## ՆՈՒԻՐԱՏՈՒՈՒԹԻՒՆ

*ԳԷՈՐԳ ՍԱՄՈՒԷԼԵԱՆԻ մահուան առթիւ փոխան ծաղկեպսակի հետեւեալ նուիրատուութիւնները կատարուած են «Մասիս» շաբաթաթերթին:*

| | |
|---|---|
| Mr. and Mrs. David and Maral Fuhler | $200 |
| Տէր եւ Տիկ. Ճորճ Գուզուլեան | $100 |
| Տէր եւ Տիկ. Կարօ Պէքարեան | $100 |
| Տէր եւ Տիկ. Ժոզէֆ Սապունճեան (Քանատա) | $200 |
| Տիկ. Սոնա Պապահիքեան | $100 |
| Տիկ. Վարդուհի Սամուէլեան | $100 |
| Տէր եւ Տիկ. Յարութ Տէր Դաւիթեան | $100 |
| Տէր եւ Տիկ. Պօղոս Մարգարեան | $50 |

Armenian Athletic Association Ladies Auxiliary

proudly presents

# "Fan-tastic Fashion"

Ladies' & Gentlemen's

## Fashion Show Luncheon

**Sunday, April 29, 2007 – Omni Hotel**

251 South Olive Street, Los Angeles

10:30am Boutique / Social Hour • 12:30pm Luncheon / Fashion Show






Information & Reservations:

Garine 626-755-4773 gdepoyan@hotmail.com

Dzovig 626-429-8366 vdkoro@yahoo.com

**Donation $75.00**